



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՆՐԱՆՔ

ԳՁ Վ

II $\frac{2}{44}$

170

Горный округ,

2002

1

10-11

ԱԵՐԵՐ.

72

Մ

ՆՈՐ

ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏՍ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

757



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մ

1856

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մարդկային ընկերությանը քաղցրոչքիչև
ները վայելչոյոչ համար կան պատշաճողոչքիչև
ներ՝ որոնց որ մարդ պետք է մասնաւոր մը
տաղրոչքիչև ընէ : Իսկ այս ընկերական պատ
շաճողոչքիչևները Մարդավարութիւն անոչա
նեցիկք, իբրև. քէ մարդ մարդոչ հետ վարոչև
ոչ վայելչոչքիչևներ, Քաղաքավարութեան
անոչևն ոչքիչ կենցաղագիտական ոչամանց պա
հեղով :

Եւ որովհետև այս վայելչոչքեան պատշաճ
ողոչքիչևներև ըստ արժանոչև կարտարեոչոչ հա
մար մասնաւոր կրքոչքիչևներ հարկաւոր եև,
և աշխի մանկական հասակև այս կրքոչքիչև
ները քիչ աշխատակրով կրևայ իրևն սեփակա
նեչ, անոր համար շատ տարիներէ ի վեր մեր
վարժարաններոչև մէջ մասնաւոր հոգ կրևէիկք՝
որ սա կրքոչքիչևներոչև շաչ վարժոչքիչև ոչևն
ևան աշակերտք. և յիչողոչքեան դիչքոչքիչև

մը ըլլալու համար՝ խօսքով ըստած ըստերը
գրի սեցոնցեր էիք, ոչ հիմա տպագրութեամբ
ալ կը հրատարակենք՝ յոշաւով որ ոչիշե-
րուն ալ օգոտ կրնայ ընել :

Այս համարում Մարդասիրութիւնը գրելու
տակն գլխաւորապէս գաղղիացի այլեւայլ մա-
տենագիրներ աչքէ սեցոնցիք, որովհետեւ մեր
դարուն մէջ այսպիսի մայելչութեանց գրեթէ
օրինակիր այս ազգը չունի էրուպիոյ :

Բայց ձեռնարիտ Մարդասիրութեան ուսու-
ցիչ ձեռնարիտ առաքիւնութիւնն է, և առաքիւն-
ութեան մարդապետ իմաստութիւնն յաշիտենա-
կան, որ տրտնաց թէ « Ինչ որ կուզէք որ ոչ-
իշեցիք ձեզի ընեն, եղբիք ըսէք ալ իրենց
ըրեք » : Եւ որովհետեւ մարդուս առիտական
մարմնները սրտիւ յօժարութեանց բարգմանն
է, որչափ որ սիրուն առաքիւնութեանց ար-
գասեօք գեղագարդ ըլլայ, այնչափ մարմնները
մայելուչ պատշաճողութիւններով կը զարդա-
րուի : Երանի այնպիսի մանկան, որ այս կեր-
պով Մատոճոյ ոչ մարդկանց սիրտը իրեն կը
յաւիշտակի :

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ



Մարդավարութիւնը՝ առաքինի կեանքն
և վայելուչ վարմունքը իրարու հետ կը միա-
բանէ . անոր համար ինքը մեր ամէն գործոց
մէջ միշտ ընկեր պիտի ըլլայ , կրօնքի սրբ-
բաղան պարտքերէն սկսած մինչև ամենէն
թեթև դուարձութիւնները :

Մարդավարութեան հիմունքը ինքնաճա-
նաչութիւնն է և ուրիշներուն իրաւունքը
մեծարել : Ընկերութեան օգտին և բարւոյն
համար անձնասիրութիւնը պէտք է սան-
ձել . և ասանկով կըլլայ մարդավարութիւնը
կապ միաբանութեան և սիրոյ :

Ճամարիտ մարդավարութիւնն է անկեղ-
ծութիւն , համեստութիւն և ուրիշին օգտա-
կար ըլլալու փոյթը : Կակ աշխարհքիս մար-
դավարութիւնը բաւական կը սեպէ միայն՝

դիմացինին անձնասիրութեանը չդպչիլ .
ապա թէ ոչ՝ կը համարձակի անոր պակաս-
ութիւնն ալ՝ առաքինութիւնն ալ ծաղր ը-
նել , բաւական է որ անհամ ծաղրածու-
թենէն ծիծաղ մը բրդի ընկերութեան մէջ ,
և ծաղր ըլլուողը չդժկամակի և կամ թէ
չիմանայ . և այնպիսիք ընկերութեան դը-
ւարթութիւն տուող ու շէն պահող անձինք
կը սեպուին : Աշխարհքիս այսպիսի սովո-
րութիւնները սուտ մարդավարութիւններ
են , որ շատ անգամ թեթևութեան ու կեղ-
ծաւորութեան կը փոխուին : Եւ թէ որ այս-
պիսի մտածութիւն աշխարհքիս տիրած
չըլլար , մարդավարութեան վայելչութիւնը
առաքինական սկզբունքներէն ոչ երբէք
կը բաժնուէր :


Արեմն անկեղծ մարդավարութեան հո-
ղին բարւոյն սէրն և առաքինութիւնն է :
Չափազանց կերպով զուարճութեանց ինք
դինքը տալը , կամ թէ բարկութեան , ազահու-
թեան , դատարկասիրութեան , և ընդհան-
րապէս ամէն տեսակ կրից անսանձ տեղիք
տալը՝ ինչպէս հակառակ է բարի վարուց ,
ասանկ ալ մարդավարութեան հակառակ
է : Մարդավարութիւնն ամէն կողմանէ չա-
փաւորութիւն կուզէ :

Ընկերութեան քաղցրութիւնը մարդա-
վարութեամբ , ու մարդավարութեան ար-

դար և վայելուչ զգուշութիւններովը միայն
կրնայ վայելել մարդ : Անձնական սէրն և
ուրիշի հաճոյ ըլլալու փափաքը , որ մարդ-
կային գործոց շարժիչն են , մարդավարու-
թեամբ կազնուանան , և հպարտութեան ու
զղուելի անձնասիրութեան տեղ՝ քաղցր
բնաւորութիւն մը , և ամենուն սիրելի և ազ-
նուական զգացմունքներ կը տնկուին : —
Իսկապէս մարդավարներու մէջ գէշու-
թիւնն անձանօթ պիտի ըլլայ . և վայելչու-
թեան անուամբ ամէն բանի մէջ պիտի ջա-
նան միայն արդարը , գեղեցիկն ու բարին
'ի գործ դնել , ու գործքերնուն , վարմունք-
ներնուն և խօսքերնուն մէջ միայն վայել-
չութիւն պիտի երևցընեն :

Մարդավարութեանց արտաքին կերպե-
րուն և ընկերութեան այլևայլ սովորու-
թեանց վարժելու համար՝ իրաւ հարկաւոր
է մասնաւոր կանոններ լսել , բայց միշտ
մարդավար ըլլալու և մարդավար երևնալու
մեծագոյն կանոնն աս է . Չանալ միշտ ը-
նելիքը լաւ ընել : Թէ որ երիտասարդ մը
այս ջանքը և այս կրթութիւնն ունենայ ,
սխալի ալ նէ , կարեկցութեան արժանի
կըլլայ . և իր կողմանէ առանց փոյթն ու
մտազրութիւնը սլակսեցընելու՝ իր մտերիմ-
ներուն կարճ ազդարարութեամբն ալ քիչ
ատենի մէջ ամէն սլակսութիւններէն կուղ-

դուի : Այս մտերիմներուն զվսաւորը ըլլայ
ուրեմն այս Համառօտ դրուածքը Մարդա-
վարութեան վրայ , և յուսալի է մեզի որ
փոյթ ունեցողներուն անձուտ չըլլայ բո-
լորովին :



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐՈՒՆ

ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

ԿՐՕՆԱԿԱՆ ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վայելուչ մարդավարութիւնը մարդկային կենաց պարտուցը վրայ ձգուած փայլ մըն է, որ անով իրենց բնիկ գեղեցկութիւնը դուրս կը ցատքէ: Եւ որովհետեւ մարդուս առաջին պարտքը առ կրօնքն է, անոր համար կրօնական պարտուց մէջ ինչ վայելչութիւն բանեցընելու է, կը վայլէ նախ անոր վրայ խօսիլ:

Ա. Կրօնից սրտկառուները եկեղեցոյ մէջ.
— Մարդուս և անասնոց մէջի մեծադոյն տարբերութիւնը կրնանք ըսել թէ զլիաաւորապէս կրօնքի զգացմանց վրայ կեցած է: Մեծ պէտք է սեպենք այն ամենայն զգացմունք որ զմարդ աւելի կազնուացընեն.

յայտնի է որ կրօնքի զգացմունքէն եւել ուրիշ զգացմունք մը չկայ զմարդ ազնուացընող . անով է որ առ կատարելութիւն , երջանկութիւն , և միով բանիւ՝ առ Աստուած կը դիմենք . և որչափ աւելի զօրաւոր ըլլայ մարդու սրտին մէջ այս զգացմունքը , այնչափ աւելի աստուածամերձ կը ըլլայ , և այնչափ աւելի իր երջանկութեան ճաշակը կը բնայ առնուլ . ուստի այսպիսի գերազանց զգացմունք մը մարդ պիտի ջանայ սրտին մէջ զօրացընել և բարդաւածել : Անոր համար թէ ջերմեռանդութեամբ սիրտդ վառուած ըլլայ , և թէ թշուառաբար՝ դաղջ ըլլաս , միշտ աստուածպաշտութեան վսեմ մտածութիւնը պատկառանք կը պահանջէ քեզմէ : Այս պատկառանքն առաւելապէս պէտք է որ եկեղեցւոյ և աղօթատեղեաց մէջ վրադ երևցընես :

Հաղուստիդ մաքրութիւնը , պարկեշտութիւնը , ու քու ամիսփ ու պատկառելի կերպդ բոլոր ցուցընէ որ կիմանաս թէ Աստուծոյ տունը կը մտնես : Եկեղեցի որ մըտնես՝ առ օրհնած ջուրը , երկրպագութիւն ըրէ , և կարճ ճամբով մը՝ բայց առանց արտորալու՝ ծանր քալուածքով՝ կենալու տեղդ դնա շիտակ , և ոչ երբէք ոտքի տակ կենաս : — Թէ որ եկեղեցական հանդէսը սկսած է և բազմութիւնը լեցուեր է , ետեկեցիր , որպէս զի մէկալ առջի եկողներուն ներդրութիւն չտաս զանոնք հրելով հրմշտելով : Նոյն պատճառաւ՝ հանդէսը չմնացած

պէտք չէ որ դուրս ելլես, մանաւանդ թէ
որ առաջները դանուխս. ուրիշ բան է հար-
կեցուցիչ պատճառը: — Արբոր տեղը հաս-
նիս՝ առանց մօտ կեցողներուն մտաց ցըն-
դումն տալու հանդարտաբար չոքէ կամ
ոտք կեցիր ուրիշներուն նամանելով, և դքեզ
քեզի ժողոված, առանց հետաքրքրաբար աս-
դիս անդին նայելու՝ քու աղօթքիդ ուշ դիր:

Այս պիտի մտածես որ հոն տեղը մարդիկ
իրենց վշտացը մխիթարութիւն կը փըն-
տուն, և իրենց մեղացը թողութիւն. ուստի
պէտք չէ որ այնպիսի բան մը ընես, կամ
այնպիսի կերպ մը վրադ երեցընես, որ նե-
ղութիւն տաս ուրիշին կամ միտքը ցրուե-
լուն առիթ ըլլաս: Անոր համար լռութիւն
պահէ ամենայն կերպով. կամ շատ շատ
պէտք ըլլայ՝ ցած ձայնով խօսիս, ան ալ
խիստ քիչ անդամ, և կարճ լմեցընես: — Ար-
չափ կարելի է եկեղեցւոյ մէջ տեղէ տեղ
չփոխուիս: — Զգոյշ կեցիր փափաւրով ա-
ղօթելէն, բարձրաձայն հառաչելներէն,
կուրծքի ուժով ուժով դարնելներէն, և ու-
րիշ անսովոր ջերմեռանդական շարժմունք-
ներէն:

Արօնքի վայելչութեան դէմ բան է ար-
տորալով ու մէկը մէկալը հրմշտըկելով
երթալ մասունք պազնելու, կամ հաղոր-
դուելու կամ խոստովանելու. հապա պէտք
է լուռ սպասես քու կարգիդ. բայց եթէ
չուս խոստովանանք ըլլալու հարկ ունիս
նէ, անուշութեամբ ու մարդավարութեամբ
պէտք է հասկըցընես:

Քարոզ մտիկ ընելու ատեն նայէ որ
ամենեին աղաղակ մը չընես : Զգոյշ կե-
նաս հաւնիլ կամ չհաւնիլ ցուցընելէն լը-
սած քարոզիդ , կամ ուրիշին աչք ընելէն .
չմրափես , դուխդ վեր վար չնետես . հա-
պա վայելուչ դրքով նստած մտադրութեամբ
քարոզչին նայիս : Երբոր քարոզիչն ամե-
նասուրբ Երրորդութեան կամ Քրիստոսի
երկրպագելի անունը յիշելով գլուխը խո-
նարհեցընէ , դուն ալ ուրիշներուն հետ քու
մեծարանքդ նայէ որ ցուցընես : Աչ երբէք
քարոզը կիսկատար թողուս երթաս , որ
խիստ անվայել բան է :

Աղորմութիւն կամ ուրիշ ինչ որ ստակ
տալու բան կայ նէ , ջանա որ առանց խօսակ-
ցութեան լմնցընես , և չըլլայ թէ ստակ աւ-
րես եկեղեցւոյ մէջ . անոր համար նայէ որ
միշտ վրադ մանր ստակ դտնուի . որպէս զի
ինչ և իցէ կերպով առուտուրի նշան մը չե-
րևցընես , որ եկեղեցւոյ պատշաճ մեծարա-
նացն անվայել է :

Թէ որ ծանօթ պատուաւոր անձի մը հետ
եկեղեցին մտնես , թող որ դունէն նախ
ինքը մտնէ . ու մտնելէդ ետքը քան զան
առաջ անցիր , որ իրեն օրհնած ջուր հրամ-
ցընես . իրմէ առաջ երկրպագութիւն չը-
նես , և իրեն թողուս տեղն ընտրել : Նոյն
մարդավարութիւնը բանեցընես դուրս ել-
լելու ատենն ալ :

Այնպիսի եկեղեցի մը՝ ուր կանայք խառն
կը կենան էրիկ մարդկանց հետ , և հոն պա-

րոն մը աթոռի վրայ նստած կամ աղօթա-
րանի վրայ կեցած ըլլայ, և մօտը խաթուն
մը ոտքի վրայ, վայելչութիւնը կը պահան-
ջէ՝ որ իր տեղը խաթունին տայ :

Աւելորդ է ըսելը թէ շատ անվայելուչ
բան է հրասպարակի պէս եկեղեցւոյ մէջ
չըջաղայիլ, առանձին տան մը պէս խօսակ-
ցութիւն ընել, ասդիս անդին հետաքրքրա-
բար նայիլ, մէկուն մէկային երեսը ծիծա-
ղիլ, բարեկամաց հետ տեսնուիլ, բարե-
առնել տալ, ձեռք թօթիլել : Գարձեալ այն
կերպով կենալ որ տեսնողը խմանայ թէ
միտքդ օտար տեղ կը պտըտի, կամ թէ
ձանձրացեր ես. նստած տեղը երերալիլ,
կամ ուրիշի նստարանը երերցընել, շուն
բերել հետը, կամ ձեռքը կապոցով ներս
մտնել, և այլն, և այլն :

Թէ որ եկեղեցի մը տեսնելու համար կու-
ղես երթալ, նայէ որ եկեղեցական հանդի-
սի կամ աղօթքի ատենէն դուրս ատեն ըլ-
լայ : Մտնելուդ պէս նախ չոքիս և համա-
ռօտ մը աղօթելէն վերջը սկսիս զննել :
Պատկերները, արձանները, և այլն, հան-
դարտութեամբ և զգուշութեամբ քննէ, և
չըլլայ թէ այն թեթևասօլիկներուն նմանիս,
որ վսեմ յիշատակարանները կը պղծեն ի-
րենց աննշան անուճը վրանին դրելով, և
խմաստնոց իրենք զիրենք ծաղրելի և արհա-
մարհելի կընեն¹ : — Թէ որ բարի ձեռք

¹ Այս ախան ինչ տեղ ալ որ ըլլայ զգուշալի է.
խիկ պատերը գծերով և այլանդակ ձևերով կամ

հարկ է քեզի ծառայողին տալ, դուրս ելլելու ատենդ նայէ որ դեռ ինքը չուղած յառաջես, և շնորհակալ ըլլալով իրմէն՝ կամացուկ մը ձեռքը դնես :

Բ. կրօնից պատկառանքն ընկերոջքեան մէջ.
— Որչափ որ եկեղեցւոյ մէջ մեծ պիտի ըլլայ կրօնական պատկառանքնիս, նոյնչափ նաև ընկերութեան մէջն ալ արթուն պիտի կենանք արհամարհութիւն մը ցուցընելէն, կամ անոր հակառակ՝ անվայելուչ և անպատճառ նախանձայուզութիւն մը երեցընելէն հաւատքի բաներու, որ շատ անգամ տհաճութեանց և անօգուտ վէճերու առիթ կըլլայ : Անոր համար այս երկու պիտաւոր մասիս նկատմամբ հարկաւոր է հետևեալ խրատները միտք առնել :

Զգոյշ կեցիր հաւատքի բաները թեթևութեամբ խօսակցութեան մէջ յիշելէն, կամ թէ եկեղեցական արարողութիւնները կամ եկեղեցական անձինքը ծաղր ընելէն :

Քուկին կրօնական երկխոսածութիւնդ և աստուածալաշտութեան նշանները վրադ երեցընելու պէտք չէ վախնաս կամ ամբշնաս, որ ուրիշները կեղծաւոր չըսեն : Ամենևին գործք մը չենք կրնար ընել, առա-

գրուածքներով աղտոտելը բոլորովին գեղացւոյ և անկիրթներու գործք է : Ուրիշ բան է թէ որ երևելի տեղ մը սովորութիւն կայ գրքի մը մէջ այցելուաց անունը գրել տալ յիշատակի համար :

քինութիւն մը չենք կրնար կատարել, թէ որ սրաի կտրրճութիւն չունենանք: Չկարծես որ աստուածապաշտ ըլլալով ցած աստիճանի մարդկանց նման կըլլաս. աստուածապաշտութիւնը նուազութիւն չէ. մանաւանդ թէ մարդ աստուածապաշտութեամբ դերագոյն և երկնային էակ մը կըլլայ, և ամենայն մարդկային երկրաբարչ կըքերէ դերագանց: Ասակին ալ պարտքն է բարեպաշտ ըլլալ. բայց պէտք չէ որ սամկին բարեպաշտ ըլլալուն պատճառաւ, կըթեալ մարդն իր բարեպաշտութեանը վերայ ամբշնայ: Մարդու արժանաւոր և վսեմագոյն զգացմունքը Աստուծոյ սէրն է:

Ընկերութեան մէջ ամենեին չվայլեր որ մարդ ուրիշին հաւատքին վրայ ծաղր ընելով խօսի. ևս առաւել կնկան բերանն աս բանս չվայլեր:

Հաւատքի խնդիրներու վրայ վէճ զըրդուելն անօգուտ և անպատճառ տեղ թէ մարդավայելչութեան դէմ է, և թէ կրօնքի մեծարանացը կը դաշի: Բայց թէ հարկ ըլլայ երբեմն այսպիսի խօսակցութեանց մէջ մտնել, պէտք չէ ամենեին թշնամանական ողի երեցընել, հապա աստուածային հողոյ հանդարտութիւն, և փոյթ ճշմարտութիւն փնտռելու: Ամենամեծ ամարդութիւն է նիւթէն դուրս, և անոր մեծարանացը դէմ ծանր խօսքեր դիմացինին դուրցել, և արհամարհութիւն երեցընել. որով փոխանակ մոլորելոյն ճշմարտութիւն ճանչցընել:

1000 - 85

Է 999

65444

85-11251



լու , այլանդակ մուտթեանց նախատիպ կը-
նենք մենք դմեզ :

Ուստի թէ որ մէկն ինքզինքը բռնել
չզիտեր , ու խօսակցութիւնը ուժով , վայե-
լուչ , բացայայտ և յստակ չէ , պէտք չէ ա-
մենեին այգալիսի վիճարանութեանց մէջ
մտնէ : Մանաւանդ որ շատ անգամ ասով
տկարաց միտքը հաւատքի վրայ տարակոյս
կը ձգենք , չկրնալով ճշմարտութիւնը լա-
պաշտպանել :

Իսկ հակառակորդին պատճառներուն
դէմ դնելէն և յաղթելէն ետքը՝ պէտք չէ
ամենեին խօսքը ծաղրածութեան դարձը-
նել . և ոչ դարձեալ յաղթուողն արհամար-
հութեան ձգելու է բանը . ապա թէ ոչ ե-
թէ ատիկայ էր վէճին վախճանը , անօդուտ
էր ուրեմն վիճել սկսիլը :

Գ. Լ. ՈՒՍ Բ.

ԸՆՏԱՆԵՎԱՆ ՎԱՅԵ ԼՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա . Ընտանիք . — Մարդավարութիւնը
ծիծաղելի և ատելի բան կը դառնայ՝ թէ որ
մէկը ընկերութեան մէջ բարեկիրթ ըլլայ ,
ու տանը մէջ մաղձատ , կոչա ու անշնորհք
կերպեր ցուցընէ : Բայց դժբախտութեամբ
շատ անգամ կը հանդիպի այս պակասու-
թիւնը , որ մարդկային մտաց զլխաւոր թե-

82.115.21

բութիւններէն մէկն է : Տնէն դուրս աւ-
նոյշ ու մարդավար կերպով վարուիլ , ու
տան մէջ աստ անոյշ կերպերէն պակասիլը՝
չատ մեղադրելի պակասութիւն է : Միշտ
պիտի ջանայ մարդ զինքը կրթել քաղցր
վարմունք ունենալու , ու բուն ընտանեաց
մէ պէտք է սկսի . որովհետև անտնոց հետ
միշտ վարուելով ինչ կերպի վարժինք՝ ան
կերպը մեզի բնական կըլլայ , և ամենուն
հետ նոյն կերպը կը բանեցընենք :

Ուստի հարկաւոր է որ մասնաւոր զգու-
շութիւններ ընեն անեցիք և ընտանիք իրա-
րու հետ վարուելու մէջ . և առաջին դիտե-
լիքն այս պիտի ըլլայ որ իրարու հետ այն-
պէս քաջուած չվարուին , ինչպէս որ օտար-
ներու հետ բնականապէս կը վարուին . հա-
պա քաղցրութիւն մը , պարզ և անկեղծ
վստահութիւն մը , սիրալիր գորով մը միշտ
իրարու վրայ ցուցընեն , և իրարու տեսու-
թենէն անուշ ծիծաղ մը երեսնին ելլէ , և
իրենց միաբան ժողովքէն դուարթութիւնը
ու խնտումը անմեկին ըլլայ :

Բայց զգուշանալու է որ այս ներքին ըն-
տանութիւնը իր չափը կորսնցընելով , չըլ-
լայ առիթ իրարու մեծարանքէն պակասելու ,
և կոշտ և անշնորհք կերպ մը առնելու : Ոչ
երբէք իրարու դիմաց այնպիսի գործքեր
ընեն որ չափէ դուրս համարձակութիւն կե-
րեցընէ , կամ զանիլ կրնայ բերել . ինչպէս՝
ոտք լուալ , գլուխ սանտրել , ըզունդները
կտրել , և այլն : Անկողինէն նոր ելած եւմ

կամ տան մէջ եմ ըսելով պէտք չէ անհոգ
ըլլալ զգեստին կողմանէ . կարգաւորու-
թեամբ ու վայելուչ պարզութեամբ հաղուիլն
այ՛ տնական վայելչութեան մէջ հարկաւոր
պարտքերէն մէկն է : Թէ որ ընտանեկան
կենսակցութեան մէջն ալ մէկուն խօսակցու-
թիւնը ձանձրալի ըլլայ , ընտանի է ըսելով
պէտք չէ մէկէն խօսքը կտրել կամ ձան-
ձրութիւն երեցընել : Այս արթնութիւնը
մասնաւորապէս տանը ծերերուն և պա-
ռաներուն համար ընելը՝ երիտասարդին
բարեկրթութեանը մեծ ցոյց է :

Բ . Ամուսինք . — Թէ որ կը ջանան մար-
դիկ վայելուչ և անոյշ կերպով վարուիլ ա-
նոնց հետ , որ քիչ ատեն կը տեսնեն , ու
քիչ ժամանակ միայն կրնան անոնցմէ ըս-
տիտիանք մը գտնել , որչափ աւելի կը վայ-
լէ որ ամուսինք իրարու հետ ջանան միշտ
այս անուշութիւնը բանեցընել , որ իրենց
կենացը հանդարտութիւնն և ուրախու-
թիւնը զլիսաւորապէս իրարմէ կը կախուի :

Ամուսինք պիտի զգուշանան որ իրարու
ախորժակին դէմ բան չընեն . և թէ որ մե-
կուն ախորժածը մնասակար բան մը ըլլայ՝
պէտք է նայիլ որ մէկայն անուշութեամբ
միտքը փոխէ : Թէ որ մէկը մէկայլին վրայ
տհաճութիւն ունենայ , պէտք չէ ամենեին
օտարաց ու ծառայից խմացընել : Մանա-
ւանդ ամէն կերպով պիտի զգուշանան ա-
մուսինք որ օտարաց առջին իրարու վրայ

քիչ համարմունք կամ սէր ունենալ չցուցընեն : Թէ որ ու կ իցէ մարդու վրայ չարախօսելը նաև մարդկային վայելչութեան դէմ է , ևս առաւել անվայել է ամուսնաց իրարու վրայ չարախօսելը : Կսկ թէ որ յանկարծ պարտալ դատելով սրտնեղութիւն ցուցընէ մէկը մէկային վրայ , պէտք է մէկէն նեղացողը դառնայ անուշ կերպով մը նորէն սիրտն առնէ :

Պէտք է մասնաւոր սիրով ընդունելութիւն ընեն ամուսինք իրարու ընտանեացն ու բարեկամացը , և կնիկն իր էրկանը ծընողքն այնպէս պիտի մեծարէ , ինչպէս իր ծնողքը . նոյնպէս էրիկն ալ իր կնկանը ծընողքը : — Ամուսնոյն թղթերը պէտք չէ բանալ . թէ որ բան մը չուզեր յայտնել , պէտք չէ ստիպել որ յայտնէ :

Ամուսինք պէտք է մտքերնին դնեն՝ թէ շատ դիւրին է որ մարդ աղէկէն դէշ ըլլայ . և մարդուս այս պակասութիւնն առաջ կուդայ անկէց՝ որ հաստատ չէ կամքը , ու չըջանար իր պարտքն ինչպէս որ պէտք է կատարել . անոր համար պիտի միշտ դէշութեան առթէն զգուշանան : Այն թէ որ ամուսնաց մէջ այս պակասութիւնը մէյմը մտնէ , իրենց թշուառութիւն է , և աշխարհքիս չար օրինակ :

Գ . Մեղոր . — Մեղաց առաջին պարտքն է զգուշանալ որ չըլլայ թէ իրենց դաւակացը չար օրինակ մը տան թէ՛ զործքով և թէ՛

խօսքով: Աչ երբէք անվայել խօսքերով դի-
րենք յանդիմանեն:

Ծնողք իրենց զաւակացը վրայ պէտք է
միշտ դուժ ու սէր ունենան: Բայց ընկե-
րութեան մէջ շատ զգուշալի է շարունակ
անոնց վրայ խօսիլ, թէ դովելի հանգամա-
նացը վրայ եղեր է, և թէ պակասութեան-
ցը: Նոյնպէս պէտք չէ օտարաց առջև դա-
նոնք յանդիմանել կամ պատժել: — Չըլ-
լայ թէ ամուսինք իրենց զաւակացն առջև
իրարու վրայ զժգմնութեան նշան մը երե-
ցընեն:

Գ. Որդիք. — Առաքինութեան ասպա-
րէզը մեր հօրենական անէն պէտք է սկը-
սի: Արօնքի պարտքէն ետքը կու գայ որդիա-
կան սիրոյ պարտքը, որովհետև ծնողք աշ-
խարհքիս վրայ Աստուծոյ պատկերն են:
Արօնքն ու բնութիւնը կը հրամայեն մեզի
այն քաղցր պարտքը, որ մեզի կեանք տը-
ւողները սիրենք: Անոր համար ուղիղ միտք
ու աղէկ սիրտ ունեցողներուն նախատինք
կընէինք թէ որ երկայն ուղենայինք խօսիլ
թէ սրչափ հարկաւոր է մեր այս պարտքը
կատարելը:

Ծնողաց հետ վարուելու ատեն միշտ պատ-
կառանք ու դուժ պէտք է ունենալ, կա-
տարել իրենց փափաքը, իրենց խորհուրդ
հարցընել, իրենց խրատին հպատակու-
թեամբ մտիկ ընել, ծուռ բան մըն ալ ընեն
կամ ըսեն՝ երեսնին շտալ՝ լուռ կենալ:

միշտ երախտադէտ ըլլալ իրենց . և ինչ կողմանէ ալ իրենցմէ վեր ըլլաա , պէտք է այն մեծութեանդ չնայիս , ու ճնողքդ քեզի գըլխաւոր , քեզի բարերար ու քեզի առաջնորդ սեպես միշտ :

Շատ տկար մտքի և պակասաւոր սրտի նշան է թէ որ մէկն իր ճնողաց պարզութիւնը , աղքատութիւնը , աշխարհքիս սովորութեանց ադէտ ըլլալը իրեն նախատինք սեպէ : Ինչպէս անոր հակառակ դովելի չէ այն պարծենկոտ դաւակն ալ որ իրեն պարծանքը իր նախնեացը փառքին վրայ միայն կը դնէ :

Ամէն օրուան պարտքերէն դատ , պէտք է որ մեր որդիական սէրը մասնաւոր առթով մըն ալ մեր ճնողացը ցուցընենք երբեմն : Շատ վայելուչ ու դովելի սովորութիւն է նոր տարւոյ , իրենց ճնողեան կամ անուան օրը բարեմաղթութիւններ ընել , նաև իրենց հաճոյական ընծայ մըն ալ նուիրելը : Բայց աս ընելու ընծային վրայ կերպով մը դաւկին արդիւնքը պիտի երևայ կամ իր մտաց ճնունդն ըլլալով , կամ իր ձեռագործը , կամ թէ իր շափաւոր ստակէն հողացած բան մը : Արչափ ալ պղափկ ըլլայ դաւակ մը , այս սիրոյ պարտքէն ազատ չըկրնար սեպուիլ : Թէ որ ուսմանց կամ արհեստի մէջ առաջ ես դացեր , քու դաստիարակութեանդ պատճառ եղողներուն պէտք է ուսմանդ կամ արուեստիդ մէկ արդիւնքն ընծայ ընես :

Տեղ կայ ուր սովորութիւն է Գռն ըսելով
եղակի խօսիչ ծնողաց հետ, անոյշ ընտա-
նութենէ առաջ եկած. բայց մեր ազգին
մէջ շատ խորթ կու գայ այս կերպը. իրաւ
բայն եղակի կըսուի, բայց Գռին տեղը
Հրամանքդ ըսելն աւելի անոյշ է :

Թէ որ ծնողացմէդ հետու ես, պէտք է
շատ անգամ իրենց թուղթ գրես, ու մէջի
խմատները զգայուն սրտէ բղխած, և խօ-
սակցութեան կերպը սարդ և սիրալիր ըլ-
լայ. ու միշտ թուղթդ կնքելու ատեն յիշես
թէ ծնողացդ որչափ պատուոյ ու սիրոյ
պարտք ունիս :

Ե. Ազգականք. — Թէ որ մէկը լաւ հաս-
կընայ թէ ընտանեկան կապը որչափ սի-
րելի է, ինքիրենը կխմանայ թէ ինչ սէր ու
մեծարանք պիտի ունենայ իրեն եղբարցն և
քուրերուն, հօրեղբարցը կամ քեռինե-
րուն, հօրքուրերուն, մօրքուրերուն, և ա-
մէն ազգականացը : Ամէն զիպուածի մէջ
պէտք է որ դուն նախ իրենց այցելութեան
երթաս, թէ որ յաջողութիւն մը ունենան՝
ուրախակից ըլլալու. իսկ թէ թշուառու-
թիւն մը ցաւակից. եղբայրսիրութեան կըր-
թութիւնը տնէն և ընտանեացմէ պիտի
սկսի : — Թէ որ տնական ուրախութիւն
մը ունենաս, առջինն անոնք պիտի ըլլան
որ հրաւիրես. դատ բան է՝ թէ որ մէկալ
հրաւիրելի անձինքը իրենց ամենեկին անձա-
նօթ ըլլան : Բայց այսպիսի զիպուածի ա-

տեն անոնց վրայ պաղութիւն մը չցուցը-
նելու համար՝ պէտք է շատ անգամ զիրենք
հրաւիրես, և մէկտեղ քիչ մը ատեն անցը-
նէք: Արնայ ըլլալ որ ազգականներէդ ու-
մանք աւելի սիրես, բայց այսպիսի ուրա-
խութեան ժամանակ պէտք չէ ամենևին մէ-
կու մը մասնաւոր կերպ ցուցընել:

Խնամիներուն ալ պէտք է նոյն սէրն ու-
նենալ, բայց անոնց հետ աւելի ծանրու-
թիւն և ակնածութիւն ունենալ կը վայլէ:

9. Տէր և ծառայ. — Ծառայից հետ միշտ
ծանրութեամբ և անուշութեամբ պէտք է
վարուիլ. ոչ խստութիւն պէտք է ընել հե-
տերնին և ոչ ընտանութիւն. անանկով ի-
րենց պարտուցն իրենք ալ հոգ կունենան
ու ամէն բան կարգաւորեալ կերթայ: Ար-
բոր ծառայութիւն մը քեզի ընեն, նայէ որ
անոյշ կերպով մը ցուցընես թէ կը ճանչ-
նաս իրենց ըրած ծառայութիւնը:

Ծառայն պէտք է մկրտութեան անունո-
վը կանչել միշտ: — Ծառային վրայ պէտք
չէ կոյր զկուրայն վատահիլ, բայց և ոչ կաս-
կած ցուցընել վրան. հապա արթնութիւն
որ ամէն ծառայութիւնը կարգաւորեալ ը-
նէ: — Քարեկիրթ մարդուն կը վայլէ անու-
շութեամբ իրեն ծառայիցն ըսածին մտիկ
ընել, և ոչ թէ երեսը մէկդի դարձընել.
պէտք եղած հարկաւոր խորհուրդը տալ, և
ոչ երբէք արհամարհել: — Նոյնպէս շատ
անգամ ներողամտութիւն բանեցընել, որ-

պէս զի պէտք եղած ատենն ալ խատութիւն
կարենաս դորձածել՝ առանց բարկանալու ,
և քու ծանրութենէդ ելլելու :

Չըլլայ թող տաս որ ծառայն ադտոտ ըղ-
ղեստով կամ լաւ չհաղուած դիմացդ ելլէ ,
կամ առջնդ նստի , կամ նշանով կամ կոշտ
բառերով խօսի , կամ անշնորհք կերպով
պատասխան տայ : Աւ այս զդուշութիւններն
և մարդավար կերպերը նաև բոլոր տնեցոց
հետ բանեցընէ : — Ընկերութեան մէջ պէտք
չէ ծառայից անհաւատարմութեանը կամ
պակասութեանը վրայ խօսիլ . և ոչ իրենց
դիմացն ընդհանուր ծառաներու վրայ :

Նայէ որ ծառայք արթուն կենան մասնա-
ւորապէս երբոր այցելու կամ հիւր ունիս
տունդ : Նախ թէ որ մէկն ուղենայ տան-
տէրը տեսնել՝ ծառայն պէտք է քաղաքա-
վարութեամբ հարցընէ թէ անունն ինչ է ,
որ ըստ այնմ տիրոջն խմացընէ : Արբոր ներս
հրամցընէ , վայելուչ կերպով շարժի դիմաց-
նին . անոնց կօշիկն է՝ վերարկուն է և կամ
ուրիշ ծանրութիւն մը՝ մէկէն առնէ , և առ-
ջնէն երթալով դռները բանայ գոցէ , որ և
իցէ կերպով դանոնք հանգիստ պահել ջա-
նայ : Նոյնպէս ընէ երբոր երթալու ըլլան
այցելուները . զգեստ մը կամ ուրիշ բան
մը որ ձգեր են , պէտք է որ տայ . թէ որ հա-
ղուելու են՝ օղնէ . և լոյս բռնէ դիմացնէն՝ թէ
որ մութ է : — Մանօթից ու բարեկամաց
ծառայից հետ պէտք է աւելի անուշութիւն
բանեցընել :

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆՁՆԱԿԱՆ ՎՃՅԵԼՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարդավարութեան առաջին և զլիսաւոր վախճանն է որ ամէն մարդ ինքն իր վրայ մասնաւոր աչք ունենայ, որ մարդկային ընկերութեան մէջ ատելի չըլլայ. որով ոչ ընկերութիւնն իրմէ խորշի, և ոչ ինքը ընկերութենէն ձանձրանայ, և արհամարհելի բան մը, տանջանք մը իրեն աչքին երևայ. հապա ընկերութեան մէջ համարմունք ձգելով իր զգուշաւոր կերպերովը, կարենայ ընկերութեան քաղցրութիւնը վայելել:

Արեւն մարդու զգուշաւորութեանցը վրայ է երջանիկ ըլլալը. և երջանիկ ըլլալը ինքզինքը սիրելի և մեծարելի ընել տալն է: Բայց քանիներ կան որոնք կարենան մեղի օրինակ ըլլալ այս բանիս. որ է ըսել թէ ճշմարիտ մարդավարները քանի են: Այս դժուարին վախճանիս և այս սակաւագիւտ օրինակներուն հետեւելու համար, մասնաւոր փոյթ պիտի աւելցընենք՝ բաց ՚ի կրօնական և ընտանեկան պարտքերէն որ ըսինք, նաև մեր անձնական վայելչութեանցը միտ դնել, մեր խօսուածքին ըլլայ, հագուստին, շարժուածքին, և մեր ամէն գործո-

դութեանց, որ զմեզ տեսնողներուն աղէկ
համարմունք տանք, և բարի համբաւ ըս-
տանանք:

Բարի անուն ունենալու համար առաջին
պարտքն է երկիւզած և առաքինի ըլլալ. և
այս ներքին լուսաւորութիւնը նաև արտա-
քնոյն վրայ կը ցոլայ, և ամենուն աչքը կը
չլացընէ: Բայց մարդավարութեան մէջ այս
բանիս վրայ խօսիլ չենք ուզեր, որովհետև
աւելի բարձր ուսմունք է: Այսչափ միայն
բաւական է զուրցել որ մարդ ջանայ նախ-
ինչ պարտք որ ունի իրեն ընկերացը՝
լաւ կատարել. երկրորդ՝ երբ սիրով կա-
պուած ընտանեաց մը մէջ պղտիկ անմիա-
բանութիւն մը որ հանդիպի կամ կարծեաց
տարբերութիւն մը, պէտք չէ ամենեին
խառնուիլ, կամ մէկ կամ մէկալ կողմը
բռնել: Այնպիսի թեթեւ ամպեր ընտանե-
կան սիրով կրնան ցրուիլ շուտ մը, բայց
քու ըրածդ կրնայ չմոռցուիլ, ու խռովարա-
րի ու պակասաւորի անուն կառնուա: Շատ
չատ պիտի նայիս որ քու կողմանէդ բանը
թեթեւցընելով խաղաղութիւնը շուտ մը նո-
րէն հաստատելու դիւրութիւն տաա:

Ընկերութեան մէջ չարախօսութիւն ը-
նելէն պէտք է զզուչանալ, որ շատ անգամ
կը կարծեն մարդիկ թէ ուրիշի վրայ դէշ
խօսելով իրենց աղէկ անուն կըստանան:
— Գարձեալ ամենայն կերպով հեռու կե-
նալ մէկուն մէկալին ըրածը խօսակցու-
թեան նիւթ առնելէն, կամ անոնց արտա-

քին մարմնոյ թերութիւնները ձևացրնելէն, կամ բարոյական պակասութիւնները նախատելէն, մեղադրելէն, ծաղր ընելէն, և այլն. այս անդոսնելի դէշ սովորութիւն ունեցողներն այնպէս մը կերեցրնեն, և մըտուրնին դրած են իբրև թէ իրենք ամենևին պակասութիւն մը չունին, երբ նոյն իսկ ըրածնին է ամենամեծ անկատարութիւն և ամարդութիւն և ցածութիւն: Այսպիսի բաներ չէ թէ միայն քրիստոնէական առաքինութեան դէմ են, հապա մարդավարութեան վայելչութեանցը: Աւտի թէ որ ուրիշէ մը մէկու մը վրայ յանկարծ չարախօսութիւն մը լսես, արթուն կեցիր որ բամբաստողը ջատագովես. իսկ թէ որ խօսուած պակասութիւնը խիստ յայտնի ըլլայ, և արդարացրնելու տեղիք չունենայ, գովելի է լուռ կենալը, և վարպետութեամբ մը խօսքը փոխելը: — Մէկն որ կուզէ բանի տեղ սեպուիլ, ոչ երբէք շատախօսութեամբ կրնայ ըլլալ:

Ազէկ անունն ու պատիւն այնպիսի դանձմըն է որ ստանալու համար պէտք է իրական դին մը տալ: Աւելորդ է դուրցելը թէ ինչ աստիճան հարկաւոր է վարուց մաքրութիւն և անօթխած պարկեշտութիւն՝ լաւ անուն ստանալու համար, և այս առաքինութիւնը մասնաւորապէս կանանց մեծագոյն դարդն է: Անոր համար ամէն ո և իցէ թեթև առիթներէն ալ պէտք է զգուշանալ, որ բարեկիրթ մարդուն անուան արատ մը

չդնէ, և անհամեատութեան և ոչ ստուեր
մը երեցընէ վրան :

Իրեն համեատութիւնը դիտարարապէս
նախ իրեն հազուստէն պիտի երեցընէ, ոչ
բաց զղեստ պիտի հազուի, և ոչ շատ նեղ :
Զգոյշ կենայ բոլորովին նորելուկ կամ դեղխ
ուշուայլ զղեստներէն, երբոր կուզէ իր ան-
ձին պատիւը պահել :

Բերնէն ամենեւին բաց կամ համարձակ
խօսք չելլէ, ևս առաւել անհամեստ խեղ-
կատակութիւն չընէ, և ոչ անվայել շարժ-
մունք, ձեռքով կատակ ընելը ցած և ան-
կիրթ մարդու նշան է :

Այս ամենայն զգուշութիւններէն դատ
թէ կարևոր են միանգամայն նաև արտա-
քին վայելչութեանց մտադիր ըլլալ, իր շար-
ժուածքը, իր հազուստը, իր խօսուածքն, իր
ամէն գործողութիւնները վայելուչ, մա-
քուր և բարեկարգ կերպով ընել, ոչ ոք
կընդդիմանայ, և ամէն մարդ իր վրայ փոր-
ձած կըլլայ թէ մէկու մը վրայ որ համարումն
առած է՝ ինչպէս այս կողմանէ անթերի տե-
սած է : Բայց այս բանիս համար է ահաւա-
սիկ մեր այս Մարդավարութեան ամբողջ
գիրքը, անոր համար ետեւէն դեռ տեղն ՚ի
տեղը պիտի բացատրենք այս արտաքին
վայելչութեանց օրէնքներն ու կանոնները
մէկիկ մէկիկ :

ԳԼՈՒԽ Դ.

ԱՅԻՆՆԵՐԸ ՎԻՃԱԿՆԵՐՈՒ ՊԱՏՇԱՃ

ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընդհանուր վիճակի վայելչութեանց վրայ խօսիլ դեռ չսկսած, հարկաւոր է նաև առանձին քաղաքական կենաց զլխաւոր վիճակներուն վրայ խօսիլ, ինչպէս են զըլխաւորաբար Եկեղեցականք, Ոստումականք, Բժիշկք, Վաճառականք, Գրագիրքորոնց ինչ վայելչութիւններ կը վայլէ, դատաւար ակտք է նշանակել:

Ա. Եկեղեցականք. — Քահանայն երկու կերպով կրնայ մտածուիլ. մէյմը իբրև պատգամաւոր Աստուծոյ երբ իր պաշտօնը կատարէ. մէյմըն ալ իբրև մարդկային ընկերութեան անդամ: Իբրև պատգամաւոր Աստուծոյ ակտք է մեծարել զքահանայն նաև որ և իցէ քաղաքական իշխաններէն եւել, վասն զի այն ատենը Աստուծոյ երեսփոխանն է. և աստուածապաշտական կրթութեանց մէջ կը սորվինք թէ այն ատենը քահանային հետ ինչպէս պիտի խօսինք, ինչ կերպ ղիմացը պիտի կենանք, ու ինչ անուն պիտի տանք իրեն: Այն ատենը մար-

դավարութիւնն և աստուածապաշտութիւնը միատեղ կը խառնուին :

Իսկ մարդկային ընկերութեան մէջ թէպէտ այն աստուածապաշտական մեծարանքը տալ հարկ չէ, բայց միշտ քահանայից հետ մասնաւոր յարգութեամբ պէտք է վարուիլ : Անվայել է քահանայից առջև համարձակ խօսակցութիւն, չափազանց զբարթ ընկերութիւն, խաղ կանչել, պարել, և ասոնց նման զուարճութիւններ :

Քահանայք ալ ընկերութեան մէջ զլխաւոր երկու բանէ պիտի զգուշանան : Արովհետև քարոզի, քրիստոնէականի, խոստովանանքի ժամանակ միշտ մոլութեանց դէմ խստութիւն ու խոստովանորդաց վերայ իշխանութիւն մը կը բանեցընեն, պիտի զգոյշ ըլլան, որ ընկերութեան մէջ ալ վարդապետական ու խիստ կերպ շունենան, որ բոլորովին ընկերութեան քաղցրութիւնը կտարէ :

Բայց ոչ ալ այս կերպէն զգուշանալու համար՝ մանաւանդ տարիքն առած քահանայք, պէտք են այնպիսի անվայել կատակներ ընել որ շատ անգամ նաև աշխարհականաց զգուշալի է :

Աւտի ընկերութեան մէջ եկեղեցականը պիտի երևցընէ անոյշ ծանրութիւն մը, և բարեկարգ զուարթութիւն և ազնուական վայելչութիւն, և ասով թէ եկեղեցական վիճակն և թէ եկեղեցականը սիրելի և մեծարանաց արժանի կըլլան :

Քահանայից հետ խօսելու ատեն պէտք է սովորաբար ըսել, վերապատուելի, վերապատուելի Տէր, վերապատուելի Հայր, Հայր սաշրք, իսկ թէ որ վարդապետական աստիճան ալ ունի՝ վարդապետ կամ Հայր վարդապետ:

Բ. Ռատուկահանք. — Ռատուկահանք և զեղարուեստից ետեւ եղողները պէտք չէ որ իրենց աշխատութեանցը՝ իրենց յաջողութեանցն և իրենց ակնկալութեանցը վերայ խօսին: Թէ որ ուղենան բան մը խօսիլ, պէտք է նային որ միայն մտերիմ բարեկամաց հետ խօսին, որոնք որ ատ տեսակ բաներէն կը հասկընան, վասն զի հասարակ մարդիկ այդպիսի բաներու համը չառնելով կրնան ձանձրանալ և մինչև ծաղրել ալ:

Ռատուկահանք նախանձոտ չերևալու համար՝ երբոր աղէկ ու դովութեան արժանի բան մը տեսնեն՝ պիտի ամենայն կերպով դովեն ու մեծցընեն: Իսկ ընդհակառակն՝ թէ որ բանը մեղադրութեան արժանի է, պիտի նային որ մեղմացընելով ըլլայ մեղադրութիւնը, ու չըլլայ թէ ամենևին վրանին ծաղր ընելու կերպ մը երևայ:

Նային պիտի որ խօսակցութեան մէջ վրանին ամենևին իմաստակութեան՝ բան ծախելու հետք մը չերևայ, ու չըլլայ թէ խօսակցութիւննին միշտ իրենց ըրած դործքերնուն վրայ ըլլայ, կամ շատ անգամ

դանոնք յիշեն : Մանաւանդ աւելի մեծ ըզ-
դուշութիւն պիտի ընեն , որ երբէք չզիտ-
ցած բաներնին դիտցածի պէս չծախեն , որ
չէ թէ միայն անվայել դործք է , այլ յայտ-
նուածին պէս ալ , որ ծածուկ մնալն անկա-
րելի է , անուննին մէկ ստըկի կըլլայ :

Նոյնպէս չըլլայ որ տղէտն արհամարհեն :
Պիտութիւնը հարստութեան կը նմանի ,
հարստութիւնն աղէկ է ուրիշի օգնելու .
բայց հարստութիւն չունեցողն ալ իր պարտ-
քը որ կընէ , պատուոյ՝ չէ թէ արհամար-
հանաց է արժանի : Աչ երբէք պէտք է մարդ
ինքզինքը դիմացինէն աւելի խելացի կամ
աւելի դիտուն սեպէ :

Ուսումնականք իրաւ պիտի վսեմու ծանր
կերպ մը ունենան , բայց միշտ պարզութիւնն
ալ հետը : Պարզութիւնը մտքի վսեմութեան
և աղէկ բարուց անխաբելի նշանն է : Ըն-
կերութեան մէջ պէտք է իրենք զիրենք
մտռնան , և ընկերութեան փափաքանացը
ջանան յարմարիլ :

Մէկալ կողմանէ ալ՝ թէ որ ուսումնա-
կանք պիտի իրենք զիրենք մտռնան , բայց
ընկերութիւնն ալ պարտական է դանոնք
միշտ յիշելու : Չըլլայ թէ այն մեծ պակա-
սութեան մէջ իյնայ մէկը , որ թշուառա-
բար դրեթէ հասարակաց պակասութիւն է ,
որ չզիտցած բաներնին կարհամարհեն ու
կարծես թէ դիտունը ծաղր կընեն : Ուստի
մարդավարութիւնն այն է որ մատենադրի
մը հետ խօսելու ատեն իր զրքին վրայ խօ-

սուի . պէտք է ուրախակից ըլլալ որ իր զը-
րուածքն ընդունելի եղած է . բայց միշտ խո-
հեմութեամբ և չափով դովեամ տալ : Թէ
որ գործքեր ունի որոնց տեղեկութիւն չու-
նիս , պէտք է խնդրես որ փոխ տայ , և մէ-
կէն նստիս կարգաս , և ետ դարձընես , ու
մէջի բաներէն յիշելով ցուցընես որ կար-
գացեր ու հասկըցեր ես : Բայց անկէ առաջ
խաւրած զրքերն ընդունելուդ պէս , պէտք
է մէկէն այցելութիւն ընես իրեն կամ տու-
սակ դրես , որ հանձարեղ քաղաքավարու-
թեամբ ու անոյշ շնորհակալութեամբ պի-
տի լեցուն ըլլայ :

Թէ որ նկարչի մը պատկեր տեսնես կամ
երաժշտի մը երաժշտութիւնը լսես , եր-
կրնկեկ ատեն պէտք է կենաս նայիս կամ
մտիկ ընես , ետքը շնորհակալութեամբ դո-
վես իրեն հանձարը . ու թէ որ կարենաս
վայելուչ կերպով արուեստին վրայ հարց-
մունքներ ընես , ցուցընելով թէ այնպիսի
ազնիւ արուեստի մը տեղեկութիւնն ունե-
նալը շատ գովելի , և իրեն ալ շատ արտը-
թելի բան է :

Թէ որ մատենագիր մը կամ նկարիչ մը
կամ երաժիշտ մը պատիւ մը համբաւ մը
որ ստանայ , ծանօթներն ու բարեկամները
պէտք է իրեն երթան ուրախակից ըլլան .
իսկ թէ որ հեռու տեղ են՝ պէտք է թղթով
ընեն իրենց խնդակցութիւնը :

Թէ որ ուսումնական մը համառօտ զը-
րուածք մը կամ ճառ մը տպելու ըլլայ ,

պէտք է մէյմէկ օրինակ խաւրէ իր ազգա-
կանացը , բարեկամացը , և ամենուն որ
կերպով մը իրեն հետ վերաբերութիւն ունե-
ցեր են այն բանին մէջ : Աւ սիրոյ նշան կըլ-
լայ թէ որ մատենագիրն այդ խաւրելու գը-
րուածքին առջի երեսն իր ձեռքովը կարճ
ուղերձ մը գրէ՝ յիշելով մէջն անոր անունը
որուն որ կը խաւրէ , և իր անունը տակն ըս-
տորագրելով :

Գ. Բժիշկը և Հիշանդը . — Բժիշկ մը որ
հիւանդի տուն կանչուի , երթայ առանց
տնտնալու , երեսին վրայ միշտ զուարթու-
թիւն երևցընելով , և ոչ երբէք տանն աղ-
քատութիւնն աշհամարհել մը , կամ հիւան-
դին խցէն զգուիլ մը երևցընէ :

Իսկ հիւանդ մը որ բժշկի մը տուն երթայ
խորհուրդ հարցընելու համար , թէ որ ու-
րիշ կողմանէ ծանօթը կամ բարեկամը չէ ,
պէտք չէ ինչպէս ըլլալը հարցընել . բաւա-
կան է միայն բարև տալ : — Բժշկին երեսին
վրայ պէտք է դուր մը երևնայ . բայց հի-
ւանդը պէտք չէ քաշածին վրայ տրտունջ-
ներ , հառաչանքներ ընէ , հապա ջանայ
որոշ կերպով հիւանդութիւնը բացատրել :
Բժշկին հարցմանցը պէտք է ճիշդ , համա-
ռօտ և մարդավարութեամբ պատասխանէ :
Թէ որ բժիշկը հիւանդին իր հիւանդութեանը
վրայ ըրած դիտողութեանցը վրայօք բան մը
չհարցընէ , կրնայ հիւանդն ըսել իր ըրած
դիտողութիւններն ալ . բայց նախ պէտք

է թողութիւն ուղել կերպով մը ըսելով .
կը ներեք ինձի, սպարոն, քանի մը դիտողու-
րիւն ըրեր եւ իմ հիշանդոտըսեանս վրայ, որ
գուցէ աւերորդ եւ, բայց չգիտեալով ստոյգը,
չեմ աչ ուղեր քան մը ծածկել, ոչստի հրաման-
քից իմ ստատըսեանը կը յանձնեմ :

Հիւանդը պէտք է սրտանց ստէպ շնոր-
հակալ ըլլայ բժշկին որ վրան հող ունի :
Թէ և բժշկին խնամքը օգուտ չընէ, բայց
հիւանդը պէտք է միշտ շնորհակալ ըլլայ
բժշկին աշխատութեանը, որ անանկով բը-
ժշկին ջանքը կաւելնայ՝ և աւելի փութով
մտադրութիւն կընէ . չըլլայ թէ լուռ կե-
նալով բժշկին անյաջող ջանքին վրայ յան-
դիմանութիւն մը երկայ :

Բժիշկն որ հիւանդին այլևայլ պիտոյիցը
վրայ պիտի խօսի, նայի որ չըլլայ թէ այն-
չափ մութ խօսի որ չհասկըցուի, կամ թէ
բոլորովին բաց անշնորհք բառեր գործա-
ծէ, որ բարեկիրթ մարդու մը բերան որ և
իցէ ատեն չվայլեր :

Բժիշկը շատ զգուշութեամբ պիտի խօսի
հիւանդին ու ընտանեացն առջևը՝ թէ հի-
ւանդութեանը և թէ անոր պատճառնե-
րուն վրայօք : Հիւանդին ազդականներն ալ
պիտի զգուշանան, որ չըլլայ թէ սրտեր-
նուն սաստիկ կսկիծէն՝ խօսակցութեան մէջ
կերպով մը ցուցընեն թէ բժիշկն է իրենց
զժբախտութեան զլխաւոր պատճառը :

Գ. Ատուտուշ . — Այնելչութիւնը առու-

տարի մէջ եղողի մը մէկ հատիկ ճամբան
է իր առուտուրը շատցընելու, և առաջ եր-
թալու. անոր համար շատերը մասնաւոր
ջանք կընեն որ առ կողմանէ չպակսին: Բա-
րիղի խանութպաններն այս բանիս մէջ ա-
մէն ազդաց օրինակ կրնան ըլլալ:

Գնողն որ խանութը գայ, խանութպանը
մարդավարութեամբ դիմքը բարեւէ, բայց
թէ որ մասնաւոր ծանօթութիւն չունի նէ,
պէտք չէ առողջութիւնը հարցընէ: Աենայ
մինչև որ եկողն ինչ որ ուզէ հասկըցընէ
ու ետքը հրաւիրէ որ նստի, և ինքն ուղա-
ծը ամենայն մարդավարութեամբ դիմացը
դնէ: Թէ որ գնողը բանի դժուար հանող է,
թէ որ ծիծաղական և արհամարհելի կեր-
պեր ունի, խանութպանը ամենևին չհաս-
կընալ պիտի ցուցընէ. բայց կրնայ կերպը
քիչ մը աւելի ծանրացընել:

Կրաւ որ շատ անգամ ծանր կըլլայ խա-
նութպանին դործքը, և շատ անախորժ բա-
ներ կը տեսնէ ու կը լսէ գնողներէն. բայց
ինքը ոչ երբէք իր մարդավար կերպը ձեռ-
քէ պիտի թողու: — Արլլան գնողներ որ
հրամայական կերպ մը կուենեան, և խա-
նութպանը ծառայի մը պէս կը դործածեն.
այնպիսիներուն հետ դարձեալ միշտ քաղա-
քավարութեամբ վարուելու է, բայց խիստ
քիչ խօսք դուրցելու է. վասն զի այդ կերպ
մարդիկ որչափ դիմացինն անուշութիւն ցու-
ցընէ իրենց, իրենք ալ այնչափ աւելի հպարտ
կերպ կառնեն: — Ամանք ալ միայն հետա-

քրքրութեան համար խանութ կու գան, որ նոր նոր բաներ տեսնեն, ու խել մը աշխատ-
ցընելէն վերջը՝ բանիս չյարմարիր ըսելով
բան մը չառած կուսնեն կը քալեն. այս բա-
նիս բնական է որ խանութպանին սիրտը
նեղանայ, քայց դրսէն ամենեին նշան մը
պիտի չտայ. հապա քաղաքավարութեամբ
պէտք է ըսել. կը ցաւիմ որ այս անգամուն
կըցայ ծառայել, յոշամ որ ոչրիչ անգամ ա-
շխի յադրաւոր գտուիմ. այս ըսէ ու մարդա-
վարութեամբ ճամբայ դնէ: Գիտնալու է
որ շատ անգամ գնողը այսպիսի մարդա-
վար և անուշ կերպ տեսնելով, անկէց և
տև միշտ այն խանութպանին հետ առու-
տուր կը հաստատէ:

Դամանակ չկորսնցընելու համար, ու
երկայն խօսակցութեանց ու ճանճրութեան
պատճառ չըլլալու համար՝ լաւ կըլլայ որ խա-
նութպանն անփոփոխելի գին դնէ ապրանք-
ներուն վրայ, և ամենեին չաւելցընէ կամ
չպակսեցընէ: Քայց թէ որ այն տեսակ թե-
թեամիտներու հանդիպի որ մինչև բանի
մը գինէն չկտրեն նէ, իրենք զիրենք խա-
բուած կը սեպեն, կամ մտքերնին դրեր են
որ խանութպանը պէտք է իրենց աւելի ա-
ժան տայ, այսպիսի ծաղրական առուտուրն
ալ պէտք է անուշութեամբ լմնցընել, ու
քիչ քիչ գինէն վար իջնել:

Պէտք չէ ամենեին խանութպանն իր շա-
փը կորսնցընէ՝ տուած գնոյն քիչ ըլլալը
ցուցընելու համար. սուտ երգմունքներ ը-

ներ, զանդրաբիլ թէ խաթեր համար վնաս
կը քաշէ, ու ասոր նման թեթևամտութիւն
ներ անվայել է պատուաւոր մարդու :

Խանութիւն մանչը պէտք է զնած բանը
չնորհքով պլլէ կամ ծրարի մէջ դնէ, ու ըս-
տակը առնելէն վերջը՝ մարդավարութեամբ
դնողին ձեռքը յանձնէ, կամ թէ ծառայ
որ ունի՝ անոր տայ. իսկ թէ որ կառքով
կամ նաւակով է զնողը, մինչև որ տեղը
չնստի՝ պէտք չէ ձեռքը տալ : Թէ որ ծանօթ
մարդ է, պէտք է հարցընել՝ որ եթէ կու-
ղէ՝ տուն խարուի, մանաւանդ թէ որ զնած
բանը մեծ ու ծանրկեկ կապոց մըն է :

Թէ որ զնողը մեծ ստակ կու տայ որ մը-
նացորդը ետ առնէ, պէտք է քաղաքավա-
րութեամբ՝ որչափ որ կարելի է՝ մանր ստակ
տալ. բայց թէ որ բուսական մանր ստակ
չդանէ, թողութիւն խնդրելով տայ մեծկակ
ստակը :

Խանութպանը պէտք չէ զնողին հետ ըն-
տանութիւն ցուցընէ, մանաւանդ թէ որ
զնողը խաթուն մը ըլլայ. պէտք չէ իր վա-
ճառքին չափազանց զովնատ ընէ, հարուս-
տին ծառայելու կարգէ զուրս փոյթ ցուցը-
նէ, ու չափաւոր զղեստով որ մէկը դայ՝
անհողութիւն երեցընէ. պէտք չէ զնողին
հետ խօսակցութիւն ընել, կամ բռնու-
թեամբ ակամայ բան զնել տալ. ասոնք ա-
մէնն ալ անվայելուչ կերպեր են :

Գնողներն ալ միշտ պիտի նային որ խա-
նութպանին հետ մարդավարութեամբ վա-

բուին, ու նային որ չափէն աւելի նեղութիւն չհասցընեն: Այս կողմանէ լաւ կըրթութիւն ունեցողներն ալ շատ անգամ կը պակսին:

Խանութ մը որ մտնեա՛հրամայական կերպ ամենեին պէտք չէ բանեցընել Սա բանը կոչուի ըսելով, կամ Սա բանս տոչր. հապա պէտք է ըսել. կը խնդրեմ որ այս բանը ցոցընէք ինձի. կամ թէ Արդեօք առ տեսակ բան մը կը գտնուի. կամ ասոնց նման մարդավար կերպեր: Թէ որ այնպիսի բան մը դէմդ հանեն որ քու բանիդ յարմար չդար, ու հարկ կըլլայ ուրիշ տեսակ մը բերել տալ, պէտք է թողութիւն խնդրելով ընեն՝ այնպիսի նեղութիւն տալուդ: — Թէ որ ուղածդ չդրտնեն, ու բան մը չառած խանութէն դուրս պիտի ելլես, թողութիւն խնդրէ և անանկ դուրս ելիր: — Թէ որ բան մը միայն գնես, թողոչքիւն կընէք, ըսէ, կը ցաւիմ որ այսպէս քիչ բանի համար զհրամանքդ աշխատցուցի: — Թէ որ երկու իրեք բանի համար երկայն ատեն անցընես, նայնպէս խանութպանին անոյշ խօսքով սիրտն առնել նայէ:

Թէ որ դինը քեզի չափազանց երևայ, ու դիտես որ այն խանութն անխոփոխելի դնով չծախեր, խանութպանին հաւատարմութեանը վրայ կասկած չցուցընելով համառօտ և համեստ կերպով մը վար դին մը տուր. թէ որ վար չինջնար՝ պէտք չէ խանութպանին հետ վէճ ընել, հապա մարդավարութեամբ կարծեմ ոչրիշ տեղ աւելի ածակ կը գտնեմ, ըսէ ու դուրս ել:

Թէ որ խանութպանը հարցընէ թէ ուրիշ
բան ալ կուզես, անոյշ կերպով այնպիսի
պատասխան տուր, որ միշտ յոյս տաս որ
նորէն՝ եթէ պէտք ըլլայ՝ նոյն խանութը
կերթաս. ու խանութէն դուրս ելլելու ա-
տեն շնորհակալ ըլլալու չմոռնաս :

Ե. Գրագիրք. — Գրագիրները վայելչու-
թեան կողմանէ իրաւ դիտելու շատ բան
չունին, որովհետեւ անոնց քովը երկայն
կենալու առիթ չկայ, բայց պէտք է որ ի-
րենց ինչ որ վայելուչ է, աւելի մտադրու-
թեամբ կատարեն :

Գրագիրը հարկ չէ որ տեղէն ելլէ եկողը
բարեւելու համար, կամ աթոռ հրամայելու
համար. բաւական է միայն գլուխը ծռել
անոյշ կերպով մը, և ձեռքով ալ նշան մը
ընել որ հրամիէ նստի : Խօսքը լմանալէն
ետե՛ նոյնպէս գլուխ ծռելով բարեւ տայ, և
հարկ չէ որ ճամբայ գնելու համար ոտք ելլէ :

Այսպիսի գրագրի մը քով որ մէկն եր-
թայ՝ այս կերպերուն վրայ պէտք չէ դար-
մանայ. և գոյշ կենայ մանաւանդ ինքն ալ
երկայն բարակ գրուցատրութիւններ ընե-
լէն, կամ առողջութիւնը հարցընելէն :

Բայց ընկերութեան մէջ շատ պիտի ըզ-
դուշանան գրագիրք որ այս կերպով չվա-
րուին :



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԵՆՆՑ

ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

ԿԵՆՑԱՂԱՎԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՋԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարդավարական կանոնները առաքինի մարդուն վրայ երևցած արտաքին կերպերուն նկարագիրն են, և մարդուս պարտքն է անոնց ալ նմանել: Վասն զի թէպէտ և ճշմարիտ առաքինութիւնը ներքնոյն վրայ հաստատուած է, արտաքինը միայն առած՝ պարզապէս առ աչս խաբէական երևոյթ մը կըլլայ, կամ թէ առաքինութեան պատկերը, և կամ թէ անոր ստուերը ըսենք. բայց սակայն արտաքնոյն ալ նմանելու անփոյթ պէտք չէ ըլլայ՝ ով որ առաքինական կենաց մէջ ինքզինքը կրթելու ջանք ունի: Վասն զի աստուածսիրական ոգին սրտին մէջ տընկուելու ատեն չխալեր եղբայրականը, հասլա

նոյն արմատոյն վրայ նաև զանիկայ ալ կը պատուաստէ . և այդ եղբայրական ողին կը պահանջէ մարդէն որ հասարակաց փոխադարձ սիրոյ և խաղաղութեան կապը անքակ պահելու փոյթ և ջանք ընէ , որ արտաքին վայելչութիւններով կամրանայ : Առաքինութիւնն ալ որ 'ի բնէ հաճելի և քաղցր բան է , անոնցմով ընկերութեան մէջ ամենուն սիրելի և անոյշ կերպարանք մը կառնէ :

Արեմն ասկէ կրնաս հետեցընել , սիրեցեալ պատանի , թէ ինչպիսի արթնութիւն կը պահանջեն քեզմէ քուկին առած առաքինական սկզբունքներդ , երբոր ընկերութեան մէջ մտնես անոնց հետ վարուելու համար :

Ընկերական կենցաղավարութեան մէջ որ և իցէ մարդու , մանաւանդ երիտասարդաց՝ զգուշայի է ամէն բանէ առաջ չափազանց վախկոտութիւնն և քաշուածութիւն : Գէշ ընկերութիւնն որ ամէն ատեն կասկածելի է , հնոցի կը նմանի , որ մօտ կեցողը կայրէ , և ով որ մէջը խառնուի՝ աշխարհքիս առջին ալ անպատիւ կըլլայ : Բայց վայելուչ և պարկեշտ ընկերութենէ խրտիչն անպատճառ տեղ՝ անկրթութեան նշան է . և շատ անգամ այդ առերևոյթ ամօթխածութիւնը , որ անփութութեամբ մէկ դի կը թողու ընտիր անձանց հետ տեսնուիլը , ծուլութենէ և անհող ու թոյլ սրտէ առաջ կու գայ : Կսկ որ աւելի մեծն է՝ հպարտու-

թեան և արհամարհութեան ալ հետևանք
կրնայ ըլլալ, կամ այնպէս երևալ տեսնող-
ներուն: Ընտանի ըլլալն ընկերութեան մէջ
ոչ միայն քուկին անձնական պատիւդ կը
պահանջէ, հապա նաև ընտանեացդ շահը,
որուն կրնաս օգտակար ըլլալ, թէ որ ինք-
դինքդ սիրելի և հաճելի ընես ամենուն:

Անոր համար շատ պախարակելի բան է
այդպիսի վախկոտներուն վրայ երևցածը, որ
շատ անգամ համարձակութիւն չունենալ-
նուն պատճառաւ, մարդ մը որ տեսնեն,
բարև չեն տար. երբոր ուրիշէ մը բարև առ-
նեն, երեսնին անդին կը դարձընեն, կամ
կարմրցած առջևնին նայիլը կը ըլլայ պատաս-
խան. բան մը որ իրենց հարցուի, անմը-
ռունչ արձանի պէս կը կենան, կամ շատ շատ
ցած և անորոշ պատասխան մը կը մտմտան.
Ե դեռ ուրիշ ընկերական վարմանց մէջ
շատ մանր մունր մտադրութիւններէ կը
պակսին, որոնցմով կրնային վայելուչ կերպ
մը ունենալ և սիրելի ըլլալ:

Անոր համար շատ հարկաւոր յատկու-
թիւն է ընկերութեան մէջ պատշաճաւոր
անոյշ վարմունք մը ունենալ, առանց շա-
փէն անցնելու որ համարձակութեան կեր-
թայ, և կամ ևս առաւել՝ յանդգնութիւն և
անխմաստ ընտանութիւն մը կը ձևանայ ա-
մէն կարդի և աստիճանի մարդկանց հետ:

Այս երկու գգուշութեանցս միանգամայն
կանոն ըլլայ, թէ պէտք է այնպիսի կերպ
մարդավարութիւն ունենալ որ մարդ իր ան-

ճին պատիւը պահելով ամենուն հետ ըն-
տանենայ: Աչ երբէք չհաւնելու կերպ նայ-
ուածք մը, ոչ աշխարհք շտեմնողի մը
կերպ, ոչ մեծութիւն ծախելու շարժուածք,
ոչ արուեստակեալ կոտորուածքներ, և ոչ
փոյթ և ջանք մը չափազանց ընտանենալու.
խրաքանջիւր մարդու հետ այնպէս վա-
րուիլ, ինչ որ անոր աստիճանը, պատիւը,
արդիւնքը և հանած համբաւը կը բերէ: Ար-
դեանցը չափով համարումն ցուցընել, ու
կարողութեանը համեմատ՝ թէ որ անկեղ-
ծութիւնն և բարեկամութիւնը կը վերցընէ՝
վստահութիւն և յարումն. իսկ ունեցած
աստիճանին՝ քաղաքավարական յարդանք:
Այսպէս հասարակաց տեղուանք՝ ուր տես-
նուիլ միայն կը վայլէ՝ կրնաս ամէն մարդու
հետ բարե տանել տալ. բայց խօսակցու-
թեան կենալ՝ պատուաւոր և ընտիր մարդ-
կանց հետ միայն. իսկ ընտանութիւն՝ խիստ
քիչերուն հետ:

Բաց ասկէ՝ հարկաւոր է ինչպէս դիմա-
ցինին, ասանկ ալ ինք իր աստիճանին՝ հա-
սակին և սեռին համեմատ ընել իրեն վար-
մունքը. և ամենուն հաւասար կանոն՝ որ ոչ
երբէք իրենցմէ հեռացընեն քաղցրութիւ-
նը, չափաւորութիւնն և պարկեշտութիւնը:
Պէտք է ուրեմն ջանալ ուրիշին հաճելի ըլ-
լալ, ամէն բանի խոհեմութեամբ չափ դնել,
պզտի բաներու մէջ ալ ուրիշի իրաւունքը
չկոխել և ուրիշին վրաս չընել. դպուշաւոր
ըլլալ այն ամէն բաներուն մէջ, որ աս-

տուածպաշտութեան և համեստութեան
պարտուց կը վերաբերին : Եւ ասոնք ամէնը
այս բազմիմաստ բառերու մէջ կը բովան-
դակուին . Քաղցրութիւն , Չափաւորութիւն և
Պարկեշտութիւն :

Գ Լ ՈՒ Խ Բ .

ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարդավայել վարմունքը որչափ հար-
կաւոր են , այնչափ աւելի դժուարին ճիշդ և
աղէկ կերպով 'ի դործ դնելը . և որչափ ըն-
տանութիւնը կաւելնայ , այնչափ իր կա-
նոններն ալ կը շատնան և կը դժուարանան :
Քան ղխօսակցութիւնն աւելի ներքին ըն-
տանի կենցաղավարութիւն մը չենք կրնար
զտնել ընկերութեան մէջ , և ոչ ալ քան ղայն
աւելի դժուար քան մը ընկերութեան քաղ-
ցրութիւնը պահելու համար . անոր համար
իրեն կանոններն ալ աւելի բազմաթիւ և մը-
տադրութեան արժանի են , որչափ որ չեն
կարծուիր : Ուստի վարմունքի մէջ ուրիշ
դիտելու բաներէն առաջ՝ հարկաւոր կերեայ
այս բանիս վրայ նախ տեղն 'ի տեղը խօսիլ :
Ուրեմն յաջորդ Ղլխուն թողլով թէ խօ-
սակցութեան խմաստին բացատրութեանը
վերաբերեալ ինչ շնորհք կը պահանջուի ,
հոս մէկիկ մէկիկ արտաքին կերպին զգու-

չութիւնները նախ բացատրենք, որ են՝ շարժուածք, արտարերութիւն, խօսելու և մըտիկ ընելու կերպ, լեզուի յատակ դործածութիւն, և այլ արտաքին յարմարութիւններ և պոուշութիւններ:

Ս. Շարժուածք. — Բարեկրթութեան և ընտիր ճաշակի դէմ է ամէն խօսքին մէջ մեջկատակի պէս շարժմունքներ ընել: Զգուշալի է մեծ մեծ և ստէպ շարժմունքներ ընել, մանաւանդ երբոր խօսքին չեն յարմարիր: Սնվայելուչ է պարզ բան մը պուրցելու ատեն նշանաւոր շարժմունք ընել. նստած կամ կեցած տեղը շուտ շուտ շարժիլ, որ կարծես թէ տեսակ մը կաքու է:

Բայց այս ըսելով չէ՛ թէ բոլորովին կը մերժենք շարժմունքը, որ մանաւանդ թէ խօսակցութեան կերպարանք մը ու կենդանութիւն կու տայ. հասկա թէ պէտք է որ չափաւոր ըլլայ, խօսքին յարմար, կարգաւորեալ, աշխոյժ և շնորհալից:

Չախ ձեռքը կրնայ մարդ անշարժ պահել, և աջ ձեռքը միշտ խօսակցութեանը հետ կարգաւորեալ և ըստ արժանւոյն շարժելով վայելչութիւն մը տալ խօսքին: Ուստի գովելի չէ անոնց կերպն որ ձեռուրնին միշտ գրպաննուն մէջ դրած կամ իրարու կապած, կամ կուրծքերնուն վրայ անշարժ բռնած կը խօսին: Բոլորովին անշարժ կեցողները մեքենայի կը նմանին. իսկ չափազանց շարժմունք ընողները դիւահարի:

Բ. Այլևայլ զգուշութիւններ. — Շատ դէշ համարմունք կուտայ մէկը ինք իր վրայ, թէ որ գուհիկ, անպարկեշտ և արհամարհոտ կերպերէն և շարժմունքներէն չզգուշանայ ընկերական խօսակցութեան մէջ:

Զգուշալի է ոչ երբէք խօսելու ատեն դիմացինին աչքին կամ երեսին միակերպ շիտակ նայիլ, մանաւանդ թէ որ խաթուն մըն է որ պարոնի հետ կը խօսի. և կամ թէ անոր հակառակ՝ միակերպ դետին և կամ ուրիշ տեղ մը նայելով խօսիլ. և կամ ինչպէս ոմանց վրայ այս տղեղ սովորութիւնը կերևայ, որ միակերպ դիմացինին կուրծքին վրայ աչուընին տնկած կը խօսին:

Անվայել է դարձեալ աթոռին վրայ որորուիլ կամ բոլորովին երկննալ ու տարածուիլ, նստած դէսլ ՚ի առջև ծաիլ, ձեռուրները ծնկանը անցընել, սրունք սրունքի վրայ դնել, ոտուրները առջև երկնցընել, երեսը շոյել, կամ ընչացքը շտկել շարունակ:

Դարձեալ վայելչութեան դէմ է որ ոմանք խօսելու ատեննին աթոռին թևերն ուժով կը բռնեն, կամ պղտիկ բան մը որ ձեռուրնուն տակը իյնայ՝ անոր հետ խաղալով կը խօսին, կամ սեղանին վրայ գծեր կը քաշեն, կամ ո և իցէ կահ կարասի մը կադտտեն, և կամ թաշկինակներնուն հետ կամ զգեստնուն ծայրովը կը խաղան. բոլորն ալ տղայական ու անվայել բաներ են:

Բայց այս ալ միտք պահելու է՝ որ եթէ

մէկն ընկերութեան մէջ ասոնց նման դոր-
ծողութիւններ ընէ, ամենեին չտեսնելու
պէտք է դարձնել. պէտք չէ վրան խնտալ
կամ խօսիլ, չէ նէ ինքը աւելի ծաղրական
կըլլայ՝ քան թէ որուն վրայ որ կը խնտայ :

Գ. Արտաբերութիւն. — Խօսակցութեան
մէջ լաւ արտաբերութիւնը հարկաւոր մա-
սերէն մէկն է. որովհետեւ դէշ արտաբերու-
թեամբ կրնայ ըլլալ որ չէ թէ միայն խօսքը
չհասկըցընէ, հապա նաև խօսքին ներհակը
հասկըցուի : Ասկէց կը հետևի որ շատ ան-
գամ խօսակցութեան մէջ կրկնութիւն կը
մտնէ, խօսքը՝ ինչպէս որ պէտք է՝ տաք
չիյնար, ձանձրութիւն կը պատճառէ, և
ուրիշ շատ անվայելչութիւններ : Արեւմտ
շատ հարկաւոր է շիտակ և որոշ արտա-
բերութիւն ունենալու ջանալ :

Արտաբերութեան առջի պակասութիւնը
անորոշ արտաբերելն է, որ շուտ շուտ խօ-
սելէն առաջ կու գայ. անանկ որ բառ մը
դեռ ամբողջ չարտաբերած և չլմնացուցած՝
ուղենալ ուրիշ բառ մը արտաբերել : Իրաւ
շատ ծանր խօսիլն ալ վայելուչ չէ, ո-
րովհետեւ հպարտութեան և ուրիշը բանի
տեղ չտեսնելու նշան մը կը սեպուի, բայց
լիրութեամբ խօսիլն ալ շատախօսի և ան-
խելքութեան կասկած կու տայ : — Մէկալ
կողմանէ ալ շիտակ արտաբերեմ՝ ըսելով
պէտք չէ արուեստակցութիւն ընել. մանա-
ւանդ սովորական բաներու մէջ շատ լաւ և

չատ գովելի է հասարակաց սովորութեան հետեւիլ :

Շատ անդամ գէշ արտաբերութեան պատճառ կըլլայ՝ տղայութենէն հնչման պակասութիւնը շտկելու անհոգութիւնը, ու առանց անդրադարձութեան բավական կերպեր գործածելը. անոր համար պէտք են դաստիարակք և կրթիչք այս բանիս շատ արթուն կենան, և այս պակասութիւնը աւտենին շտկեն :

Բայց թէ որ՝ ըսենք թէ՛ մէկը յանկարծ խօսակցութեան մէջ ծուռ արտաբերութիւն մը ընէ, շատ ծաղրելի կըլլայ դիմացիներ թէ որ խօսքը կարէ աւ ծուռ շտկէ : — Նոյն պէս մեծ կոպտութիւն է դիմացիներն օտար հնչմանը կամ արտաբերութեանը վրայ խնտալ կամ ժպիտ մը ցուցընել :

Լաւ արտաբերութենէ զատ՝ պէտք է մասնաւոր առողջանութեան ալ փոյթ ունենալ, որ չըլլայ թէ երկայն խօսակցութիւն մը բոլոր մէկ ձայնի աստիճանով դուրցուի, կամ խիտ խօսք մը անոյշ ձայնով, հըպարտ խօսք մը խոնարհ կերպերով, զրւարձալի խօսք մը տխուր ձայնով. և կամ ասոնց նման բաներ՝ որ շատ ծաղրելի կերպեր են : Բայց մէկալ կողմանէ՛ բնական առողջանութիւն պահել ուղելով պէտք չէ այլանդակ ձայներ հանել, կենդանեաց նրման պոռչալ, և այլն :

Չայնին բարձրութեանն ալ փոյթ ունենալու է, անանկ որ մտիկ ընողները դիւ-

բաւ առանց աշխատութեան հասկընան .
չառ բարձր ձայնով խօսելն անկրթութեան
նշան է, շառ ցած ձայնով խօսելն ալ՝ ուրիշը
բանի տեղ չսեպելու :

Գ . Լեզուի յատակ գործածութիւն . — Արը-
թեալ մարդու մը առաջին պարտքերէն մէկն
է իր ազգային լեզուն լաւ դիտնալը . մա-
նաւանդ թէ մեծ ամօթ է թէ որ մէկն իր
լեզուն չդիտնայ :

Պէշ դաստիարակութեան նշան է մէկուն
խօսակցութիւնը մաքուր չըլլալը , և անյար-
մար բառեր գործածելը . ուստի այսպիսի
նախատանաց արժանի չըլլալու համար ,
պէտք է պղտիկուց հոգ ունենալ մաքուր
խօսելու , ու ըսած բառիցը վրայ մտադրու-
թիւն ընելու :

Լաւ խօսողներ մասնաւոր մտադրութիւն
ու ջանք կընեն որ իրենց խօսակցութեանը
մէջ ամենեին օտար լեզուի բառ չգործա-
ծեն . բայց դժբախտաբար մեր ազգին մէջ
չառ քիչ են հիմայ անոնք որ այս դուլելի և
ազգասիրական ջանքն ունենան :

Ն . Վայելուչ բացատրութիւն . — Խօսա-
կցութեան մէջ մեծապէս զգուշանալու է եր-
կայն պարբերութիւններէ , որ մտիկ ընողը
կը յողնեցընէ . և շառ անդամ ալ երկայն
պարբերութեանը պատճառաւ խօսքին կա-
պակցութիւնը կը կորսուի , և անհիմանալի
կըլլայ :

Չգուշանալի է խօսակցութեան մէջ այն-
պէս չչարել բառերն որ կամ իմաստը մթըն-
ցընեն կամ ծուռ իմաստ տան : Ուտի
պէտք չէ ըսել . Ան բանը տուաւ . որով կըր-
նայ հասկըցուիլ անբան կենդանին . նոյնպէս
ասոր նման ուրիշ շատ կերպեր :

Շատ անվայել բան կըլլայ Ա. դա կամ խա-
րուն ըսելէն առաջ կամ ետեւ՝ անմիջապէս
անշնորհք բառ մը կապընել . ինչպէս օրի-
նակի համար , Ո՞վ է ատ անխելքը , պարուն .
կամ Մտիկ ըրէք , պարուն . անբանը . . և այլն :

Բան մը որ ուրիշի բերնէն կը պատմես ,
չըլլայ թէ երկու խօսքին մէկը՝ ըսի , ըսաւ ,
կամ կրտէ զուրցես . շատ մեծ անկրթութեան
նշան է : — Նոյնպէս զգուշալի է ոմանց
այն սովորութիւնը որ մասնաւոր բառ մը
իրենց պահած , երկու խօսքին մէկ՝ կը
զուրցեն յարմար անյարմար , մանաւանդ
երբոր խօսքին պզտի ընդհատութիւն մը
ըլլայ :

Գարձեալ անպատշաճ բան է մաքուր ըն-
կերութեան մէջ և կրթեալ անձանց բերան
ռամիկ ցած ոճերն ու բացատրութիւնները .
ինչպէս օրինակի համար , կոյր եւ՝ ինչ եւ :
Անոչք ո՞րն է : Համով բան մը ձեզի պատ-
մեմ : Կծիկը դրաւ փախաւ , և այլն , և այլն :
Պէտք է ընկերական խօսակցութեան կեն-
դանութիւն տալ , բայց վայելուչ բացատ-
րութիւններով :

Քիչ պախարակելի չէ խօսք խօսքի հետ
չկարենալ կապելը , և կամ խօսքէն հե-

տևութիւն մը վրայ չբերելը, որ դիմացինին
վրայ անտանելի ճանճրութիւն կը բերէ :
Աօրիկայ երբեմն նիւթական մտաց պակաս-
ութենէն առաջ կու գայ . բայց շատ ան-
գամ ալ ըսելիքն առաջուց չմտածելէն,
վախկոտութենէ կամ այլայլութենէ մը, և
կամ թէ խօսակցութեան մէջ ընտիր կեր-
պեր դորձածելու ջանքէն կըլլայ, որ մե-
ղադրելի բան է :

Նթէ խօսքին թելը դիմացինը կորանցը-
նէ և վրայ չկարենայ բերել, պէտք է չխա-
նալու դարնես . բայց թէ որ հետը քիչ մը
ընտանութիւն ունենաս, քիչ մը ատենէն
անոյշ կերպով մը կրնաս յիշեցընել միտ-
քէն ելած բացատրութիւնը :

Զ . Մտիկ ընկրու վայերուց կերպը . — Աեն-
ցադավարութիւնը շարունակ խօսիլ պիտի
չըլլայ, ինչպէս որ շատախօսները կը կար-
ծեն . հասլա մտիկ ալ ընելու և կարգաւ խօ-
սելու է . ուստի թէ խօսիլը և թէ մտիկ ը-
նելը ջանալու է լաւ ընել :

Շատ վայելուչ ու շնորհքով կըլլայ որ
մարդ մտիկ ընելու ժամանակն անոյշ կեր-
պեր ցուցընէ . դոր օրինակ դարմանալու,
հաւանութեան, լաւ մտիկ ընելու կամ միտք
պահելու շարժմունք մը կամ բացադանչու-
թիւն մը ընել : Պատմողին մեծ ուրախու-
թիւն կու տայ թէ որ խօսքն առանց կտրե-
լու՝ մտիկ ընողն երբեմն ըսէ . ի՞նչ ըսել է . .
Իրաւունք ունիք . և այլն :

Ուստի որուն հետ որ կը խօսիս, պէտք է կէս մը երեսը նայիս. շատ անվայելուշ բան է մէկուն հետ խօսելու ատեն դործք մը ընելը:

Մէկը թէ որ պատմութիւն մը պատմէ կարծելով թէ դուարձալի բան մըն է կամ սրտաշարժ, բայց թէ ոչ մէկն ըլլայ և ոչ մէկալը, որչափ ալ ձանձրանաս՝ պէտք է որ երեսիդ վրայ ծիծաղ մը երևցընես ու հաւնիլ ցուցընես: Թէ որ պատմիչը խօսքէն հեռանայ, դու համբերէ, և թող որ ինքիրեն իր առջի խօսքը դառնայ. թէ որ վերջ չունենայ, դարձեալ քաղաքավար մարդուն կը վայլէ համբերել, ու ցուցընել թէ մտադրութիւն կընէ. ևս առանել թէ որ խօսողը ծեր մը ըլլայ և կամ պատուաւոր անձ մը: Իսկ թէ որ քու հաւասարդ կամ բարեկամդ ըլլայ, որպէս զի զինքը նորէն իր առջի խօսքին դարձընես, և խօսքին ծայրը բերես, կրնաս ըսել թէ Ռերեալն վերջացես . . .:

Թէ որ մէկը յայտնի խաբէական բան մը պատմելու ըլլայ, այն ատենը մտիկ ընելու համար շատ նեղը կիյնայ մարդ. վասն զի թէ որ ցուցընես թէ կը հաւատաս, դքեղ պարզամտի տեղ կը դնեն. իսկ թէ որ տարակոյս վերցընես, տմարդի կը սեպուիս. ուստի վայելչութիւնը և քու պատիւդ չկորսնցընելու համար՝ պէտք է որ վրադ պաղ կերպ մը երևցընես, ու կէս մտադրութիւն մը, և այսպիսի խօսքով մըն ալ վերջ տաս. Շատ զարմանք որ . . . և այլն:

Իսկ թէ որ պատմած զիպուածը կարգէ
դուրս կամ տարակուսական բան մըն է մի-
այն, ուրիշ կերպ պէտք է բանեցընել: Ե-
րեսիդ վրայ դարմանք պէտք է երևայ, և
այսպիսի պատասխան մը պէտք է տա-
թի որ հրամանքիդ ճշմարտախօսուորիւնը չը-
գիտնայի, թէ որ ուրիշ մը ըլլար պատմողը,
չառ դժուարաւ կը հաշտուայի: Իսկ այսպիսի
պարագայից մէջ ամենևին խօսքը կտրել
պիտի չըլլայ:

Մտիկ ընելու ատեն շատ զգուշութիւն
ներ կան ընելիք, ապա թէ ոչ մէկէն կի-
մացուի թէ ով է ընկերութեան անվարժ:
Ընկերական վայելչութեան դէմ է ժամա-
ցուցի ճօճանակի մը պէս շարունակ Հրա-
մեր էք, հրամեր էք ըսելով գլուխը կամ
ձեռքը շարժել, դարձեալ աչուրները միա-
կերպ անկած և բերանաբաց կենալ, ցըն-
դած՝ վերացեալ մտքի կերպ երևցընել, խօ-
սողին յիշած անձինքը մատով ցուցընել,
առանց ձեռքով կամ թաշկինակով բերա-
նը ծածկելու յօրանջել, ստէպ ժամացոյց
նայիլ, և այլն:

Է. Ընդհատուորիւն. — Ընկերութեան
մէջ զիտելու վայելչութեանցն անվարժ ե-
ղողները գուցէ կարծեն թէ անվայելուչ
բան չսեպուիր ուրիշին խօսքը կտրելը՝ թէ
որ չհասկըցած պարագայ մը բացատրել
տալու կամ մարդու մը անունը լաւ հասկը-
նալու համար ըլլայ. բայց այս բանին հա-

մար շատ զգուշաւոր կերպ բանեցընելու է և քանի մը բան զխտել : — Թէ որ պատմողը լաւ չարտարերէ , և իմանաս ալ թէ քաղմութեան մէջէն քեզի պէս գեռ ուրիշներն ալ կան չհասկըցող , և թէ խօսքը լաւ չհասկըցած՝ չես կրնար ետքը իրեն վայելուչ պատասխանը տալ , այն ատենը կրնաս համարձակիլ խօսքը կտրել . բայց այսպիսի վայելուչ կերպով մը . Թողորբիւն կրնէք , քիչը ներուզն կը խնդրեմ , որպէս զի այս գոռարձայի խօսքէն քան մը չկորսնցընեմ . կաղաչեմ որ նորէն ըսէք թէ , և այլն : Բայց աս ընելու համար ատեն պէտք է ընտրել . ինչպէս ըսենք՝ թէ որ խօսողը հանդիստ առնէ , կամ թաշկինակը հանէ , և այլն :

Թէ պատճառաւ մը խօսքը կտրի , խօսքը կտրելու պատճառը դադրելէն ետև պիտի չսպասես որ ինքը նորէն խօսքն առաջ տանի , հապա անոյշ ծիծաղով մը և վայելուչ շարժմունքով մը պիտի հրամցընես զինքն որ նորէն սկսի . կը խնդրեմ խօսքերնից առաջ տանէիք . ոչտի կըսէիք կոր թէ . . : Արդ երբոր ուրիշը խօսքը կտրէ , այսպիսի քաղաքավարութիւն բանեցընել պէտք է նէ , ևս առաւել դու պիտի նայիս խօսքը չկտրելու , որ անվայելուչ բան է :

Կրնայ ըլլալ երբեմն որ զուարճալի պատմութեան մը մէկ պարագայն մակարերելով կտրախանաս , և կուզես իմացընել թէ լաւ ես մակարերեր , և միանգամայն թէ շատ մտադրութիւն կընես կոր , աշխուժով մը

դառնաս խօսքը կտրես ու ըսես . կը մակա-
բերեմ որ մերջապէս առանկ պիտի ըլլայ : Այս
կերպով խօսքը կտրելը թէպէտ մարդավա-
րութեամբ ըլլայ , թէպէտ բնական կերպով
ալ , բայց ծերերուն՝ որ կը սիրեն բանը եր-
կայն բարակ պատմել , շատ դժուարը կը
բերէ , և ոճով մը պատմել ուղղուները կը
չփոթէ . վասն զի բուն ազդեցութիւն ընե-
լու խօսքը բերներնէն կառնուի : Աստի
այսպիսի կերպը միայն ընտանի բարեկա-
մաց , ու ստորնագունից հետ կրնայ մարդ
բանեցընել , բայց շատ դժուշութեամբ . վա-
սըն զի կրնայ ըլլալ որ պատմողին դժարը
դալով պատասխանէ , կամ կերպով մը ը-
սէ . թողորբիւն կրնէք , առանկ չէ , չկրցար
մակաբերել . որով մարդ շատ պաղ կիյնայ :

Դակ հպարտութեամբ խօսքը կտրելը ա-
ւելի անվայելն է : Արնայ ըլլալ որ իրացը-
նէ աշխոյժ մարդ մը ըլլայ որ ուրիշի բեր-
նէն պատմութիւն մը առնէ , ու միտքն ալ
դնէ թէ գուարճալի կերպով մըն ալ պատ-
մելով՝ դիմացինը պիտի գուարթացընէ ,
բայց ըրածը շատ անվայելչութեան և մեծ
անկրթութեան գործք է :

Իրաւ նեղանալու բան է որ ապուշ մարդ
մը առնէ արէ զեզեցիկ պատմութիւն մը ,
որ ճարտարի մը բերան շատ տաք կրնար
իյնալ . բայց այսպիսի պարագայի մէջ թէ
որ մարդ ինքզինքը չկարենայ բռնել , դոնէ
իր պատուոյն համար պիտի բռնէ : Աւ թէ
որ ունկնդիրները բարեկիրթ են , լուռ պի-

տի կենան, և պատմութիւն սկսողին ալ
քաջալերական խօսքեր գուրցեն :

Քարեկամական վառվրուուն խօսակցու-
թեան մէջ կրնան իրարու խօսքը կտրել,
իրարու ըսած խօսքը լմնցընել, որ խօսքին
չատ ազդեցութիւն կու տայ. բայց այն ալ
չափը պիտի չկորսնցընէ :

Արիչի խօսքը կտրելը ներելի կըլլայ՝ թէ
որ հոն չգտնուող մէկու մը ջատագովու-
թեանը համար ըլլայ : Իսկ թէ որ չարախօ-
սութիւնը քու վրադ ըլլայ, շատ շատ՝ բա-
ցադանչութեամբ մը կրնաս դքեղ արդարա-
ցընել. բայց աւելի լաւ է արտաքին երևոյ-
թով և շարժմունքով մը միայն խմացընես :

Շատ հարկաւոր զգուշութիւն է որ խօ-
սակցութիւնը տաքնալով, երկու հողին ալ՝
որ իրարու հետ կը խօսէին, մէկէն չսկսին
խօսելու. երբ այդպիսի բան մը պատահի,
երկուքն ալ երբոր անդրադառնան, մէկէն
պէտք են լռել, և իրարմէ թողութիւն խըն-
դրելով՝ մէկմէկու պէտք են ձգել խօսքը շա-
րունակելու, մինչև ով որ աւելի պատուա-
ւոր է, ինքը խօսքը շարունակէ :

Ը. Կենակցոտրեան շեռակաւ յարմարու-
րիւնը. — Այս ամենայն զգուշութիւններն
անօգուտ կըլլան, թէ որ բնական պակա-
սութիւն մը ունենայ մէկը. և չկրնար արդա-
րանալ թէ դաստիարակներուն անհողու-
թենէն եղած ըլլայ և թէ իր անմտադրու-
թենէն. անոր համար քննելու նայելու է

նախ թէ արդեօք արտաքին պակասութիւն մը կայ վրան որ կենակցութեան մէջ հաճոյ ըլլալու արդելք ընէ . թէ որ դանէ բան մը՝ ամենայն հնարքով պէտք է ջանայ շրտկելու այդ կերպ պակասութիւնը՝ թէ որ ձեռքէն կու գայ . ապա թէ ոչ ալ լաւ է բռնորովին հետեւ կենալ խօսակցութեան առիթներէն , մանաւանդ պատուաւոր մարդիկներու հետ , երբոր սաստիկ հարկ մը չկայ , քան թէ ընկերութեան ծիծաղելի և արհամարհելի ըլլալ : — Հոս տեղս քանի մը պակասութիւններ միայն կը յիշենք , անոնց դեղն ալ համառօտ կերպով մը նըշանակելով :

Ամենահարկաւոր է դիտել՝ որ չըլլայ թէ մէկը խօսելու ատեն , լեզուն չրթունքներուն շատ մօտ տանի . չէ նէ խօսելու ատեն թէ անախորժ սուլելու ձայն մը կելլէ , և թէ արտաքերութիւնը կը դժարի . և երբորդ՝ պատճառ կըլլայ որ բերնէն շողիք վազէ : Թէ որ դժբախտութեամբ մէկն այսպիսի պակասութեան մը տէր ըլլայ , միշտ պիտի ջանայ որ լեզուն լնտերացը մէջ պահէ :

Իսկ թէ շողիքը ՚ի բնէ շատ ըլլայ , որ խօսելու արդելք կը դնէ , պէտք է սովորութիւն ընել՝ որ խօսիլ չսկսած՝ նախ շողիքը կլլէ : — Իսկ թէ որ յանկարծ ըսենք թէ շողիքը վազեց , վայելուչ կերպով բանը պարտըկելու համար , նախ չիմանալ ցուցընելու է , և առանց շատ ուշանալու՝ ճարտարութեամբ մը մաքրելու է :

Թէ որ մէկը թոթով ըլլայ, մինակ եղած
ատենը՝ պէտք է շատ անդամ կրթութիւն
ընէ որ բառերն ուղիղ արտաբերէ, բարձր
ձայնով կարդայ. ու այն բառերն որ իրեն
դժուարահնչիւն են՝ կրթութիւնն աւելի ա-
նոնց վրայ ընէ:

Մաքրութեան ու առողջութեան պատ-
ճառաւ պէտք է ջանալ ակռաները մաքուր
պահել. աղտոտ ակռան հոտ մըն ալ ձգե-
լով, անանկ կըլլայ որ որչափ ալ ճարտա-
սանութեամբ խօսի, խօսքն ընդունելի չըլ-
լար: Իսկ խօսելու ատեն՝ որչափ կարելի է
ցուցընելու չէ ակռաները, թէպէտև մաքուր
ալ ըլլան:

Զգուշանալու է դարձեալ աչուրները միա-
կերպ թարթալելէն, ուսերը վեր վեր թօթ-
վելէն:

Պէտք չէ խօսելու ատեն ոչ բերանը շատ
բանալ, մանաւանդ թէ որ բացազանչու-
թիւն մը ընէ, և ոչ ամփոփել որ պղտիկ
երևայ. բարձր ձայնով չծիծաղիլ, վախ-
նալու բան պատմելու կամ կարդալու ատե-
նը պակունքները չդողդղացընել, որուն հետ
որ կը խօսի՝ շիտակ երեսին շունչ չտալ.
ասոնք բոլորն ալ անվայել դորձքեր են, և
ընկերութեան մէջ շատ անօթալի:

ՓԼՈՒԽ Պ.

ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՄԱՍՏԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՎՅՑԵԼՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. Հասարակաց սովորութիւնները. — Ընդհանուր սովորութիւն է որ մարդիկ իրարու որ հանդիպին՝ իրարու առողջութիւնը կը հարցընեն : Այս տեսակ հարցմունքները՝ որչափ կարելի է նայելու է որ միակերպ չըլլան : — Բայց ոչ երբէք այսպիսի հարցմունքներ մեծերու ընել, և ոչ անոնց որ ամենևին քեզի անձանօթ են . որովհետև այս տեսակ հարցմունքները աւելի ընտանութեան նշան են : Անոր համար կրնաս նախ ծածուկ ծառայից կամ իր տանը մարդիկներուն հարցընելով տեղեկանալ, և երբոր տանտէրը տեսնես՝ մէկէն դուրցել, թէ Շատ ոչրախ եւ որ առողջ կը գտնուի կոր ըզհրամանակից, և այլն :

Պարտն մը թէ որ հիւանդ կամ տարիքն առած չէ, չվայլեր խաթունի մը որ անոր առողջութիւնը հարցընէ . հասլա միայն տնեցոց առողջութիւնը հարցընէ մէկէն :

Անվայել սովորութիւն ունին ոմանք՝ որ ցրուած մտքով առանց մտադրութեան ուրիշին առողջութիւնը կը հարցընեն, և պատասխանը շատած իրենց խօսքն առաջ կը

տանին : Իրաւ շատ անգամ սովորութեամբ միայն կըլլայ առողջութեան հարցմունքը , բայց միշտ պէտք է մտադրութիւն ու բարեւժայելչութիւն մը երեցընել :

Ընկերութեան մանր մունր դիպուածներուն ալ դարդ մը վայելչութիւն մը կուտայ քաղաքավարութիւնը , ուստի զգուշութեամբ պէտք է մտադիր ըլլալ : — Մէկուն հետ խօսելու ատեն պէտք չէ անունը տալ , հասլա Ս. դա կամ Պարոն , Խարուն կամ Տոշտոշ կանչել : Աւրիշ բան է թէ որ բանի մը դբաղեր է կամ ուրիշ կողմ դարձեր է . բայց այն ատենն ալ թէ որ պատուանուն մը ունի , այն միայն յիշել . Վարդապետ , Վարժապետ , Ս. պետ , և այլն : Թէ որ նոյն պատուանունը ուրիշ ունեցող ալ կայ , այն ատենը կրնայ անունն ալ տըրուիլ : — Պատասխան տալու ատեն պէտք չէ ցամաք , Հա կամ Չե ըսել , այլ Հրամար էք կամ Չե , պարոն , և այլն :

Թէ որ մէկու մը հետ ուրիշի վրայ կը խօսիս , որ հոն մօտ ըլլայ , պէտք չէ ամենեկին ինքը , Ան ըսել , հասլա պէտք է ըսել . Ս. դան , Պարունը , Խարունը : Կրնաս նաև իրեն պատուոյ անունը և կամ անունն ալ միատեղ յիշել :

Խաթունի մը որ իր էրկանը , կամ պարոնի մը որ իր կնկանը վրայ կը խօսի ոչ երբէք կը վայլէ Էրիկա կամ Կնիկա ըսել . հասլա պէտք է անունը տայ ու ըսէ . Ս. Ս. Ս. դան կամ Պարունը Ս. Ս. Խարունը կամ Տոշտոշն , և այլն :

Յնողաց հետ իրենց զաւկըներուն վրայ
խօսելու ատեն՝ չվայլեր Հրամանքիդ զաւկը-
ները ըսել . հապա պէտք է ըսել . Պարտե
Ս. Ս. կամ Ս. Ս. Տուտուն :— Իսկ զաւակաց
հետ ալ խօսելու ատեն չըսուիր մինակ
Հրամանքիդ հայրը, Հրամանքիդ մայրը . հա-
պա աւելցընելու է՝ Ս. դա հայրդ, Խարուն
մայրդ : Նմանապէս եղբարց ու քերց հա-
մար ալ ըսելու է . Պարտե եղբարքդ, Տուտու
քուրկդ :

Զաւկըներն իրենց ծնողացը վրայ խօսե-
լու ատեն, հարկ չկայ Ս. դա կամ Խարուն
աւելցընել . Հայրս, Մայրս ըսելը բաւա-
կան է :— Բայց ազգականաց՝ միշտ ազգա-
կանութեան անուանը հետ Ս. դա կամ Խա-
րուն ալ կաւելցուի . Ս. դա հօրեղբայրս, Խա-
րուն մօրաքոյրս, և այլն :

Թէ որ խօսքն ուրիշի և իր վրայ մէկտեղ
ըլլայ, մէկալը հոն է եղեր, հոն չէ եղեր,
միշտ պէտք է նախ զանիկայ յիշել և ետքը
ղինքը . ըսելու է, Ինքը և ես . Հրամանքիդ
և ես . Պարտեք և ես . և այլն :

Թէ որ քեզի հանդիպած բան մը պատ-
մելու ատեն, մէջը պարագաներ ըլլան որ
քեզի անձնգովութիւն պիտի ըլլան, թէ որ
այն գովեստներուն ուրիշ մէկն ալ մաս-
նակից կրնայ սեպուիլ, բոլոր պարծան-
քը պէտք է անոր տաս, ու Մտածեցիք :
այս բանս ըրիւք ըսելու տեղ՝ ըսես . Պա-
րտե Ս. Ս. մտածեց, այս բանն ըրաւ, և այլն :
Ս. յս համեստ կերպը վրադ որ երևայ, ան-

կարելի է որ քու արդիւնքդ ծածուկ մնայ,
և շատ մարդավարութիւն անով երկոցսած
կրլլաս :

Ընկերութեան մէջ յայտնապէս՝ Մուտ է
ըսել չըլլար . ու թէ որ հարկ ըլլայ ուրիշի
խօսքին դէմն առնել , շատ ներումն խնդրե-
լով պէտք է ընել . ինչպէս կրնայ ըսուիլ .
Կարելի է որ խաբուիմ . . . Անտարակոյս խա-
բուած եմ . . . Ներեցէք իմ սխալակոցս , բայց
կարծեմ . . . և այլն : — Նմանապէս շատ ան-
վայել է ըսելը . թէ որ ըսածնիդ ձշմարիտ է
նէ , . . թէ որ պարտնիս ըսածը սխալ չէ , . .
և այլն :

Թէ որ մէկէն բան մը պիտի խնդրես ,
միշտ պէտք է ըսես . թէ որ կը հաճիր , . . թէ
որ հրամանքիդ նեղուքիւն չէ , . . և այլն :

Թէ որ մէկուն ըրած հարցմունքը չհաս-
կընաս , ոչ երբէք կը վայլէ ըսել . Հը , ինչ
բար . հասլա միշտ մարդավարութեամբ ը-
սելու է . թողութիւն կրնէք՝ չհասկըցայ . կամ
շատ շատ՝ ի՛նչ հրամանք :

Խօսակցութեան ատեն թէ որ մէկը փորն-
դայ , հարկ չէ խօսքը կտրել անոր բարե-
մաղթութիւն ընելու համար . բաւական է
զլխով միայն նշան ընել :

Թէ որ մէկուն կենդանազիրը տեսնես ,
ամենեին չվայլեր ըսել՝ թէ Նկարիչը գեղեց-
կացուցեր է . կամ թէ՛ Շատ ծերու կերպարանք
կերեայ , և այլն . հասլա համառօտ հանճա-
րաւոր դովեստ մը ըսելը բաւական է :

Չվայլեր ամենեին գիմացիներն տարիքը

հարցընել, մանաւանդ խաթունին . իսկ թէ որ խօսքը բնական կերպով բերէ, և լսես տարեց կնիկէ մը տարիքը, պէտք է ըսես թէ Ամենեկն չէք ցոշցընել . և ուրիշ վարպետ պատասխանով մը խմացընել որ դեռ պառուած չըսուիր :

Բ. Հարցմունք. — Միջանկեալ խօսքեր. — Մարդավարութեան կանոնն է որ մարդ իր վրայ պիտի չխօսի . կամ շատ շատ՝ մտերիմ բարեկամաց հետ կրնայ խօսիլ . իսկ օտարաց հետ՝ իրենց կամ իրենց վերաբերեալ բաներուն վրայ խօսելու է :

Ուստի հարկաւոր է հարցմունք ընել, տեղեկութիւններ ուզել . բայց շատ դժուշութիւն և շատ ճարտարութիւն պէտք է չճանճրացընելու համար, ևս առաւել դժարը չբերելու համար : Այլ պէտք է ցուրտ կերպով ցամաք հարցմունքներ ընել . հապա կը վայլէ որ վրադ անոյշ ու տաք հետաքրքրութիւն մը երևցընես, և վերջէն՝ տուած պատասխաններուն լաւ մը մտադրութիւն ընես : Բայց այս ալ դիտելու է որ տղայական և կամ տղիտական հարցմունքներ չընես, և բան մը որ քանի մը անգամ հարցընելով չես հասկընար, ալ չվայլեր որ շատ երկնցընես . մանաւանդ երբ տեսնես որ դիմացինդ կըտրուի պատասխաններ կուզէ տալ : Իսկ եթէ ինչպէս որ պէտք է չկարենայ պատասխանել, պէտք է թողուլ այնպէս, չէ թէ ըրած հետաքրքրութեանդ՝ պաղ կերպով թողութիւն խնդրել :

Միջանկեալ խօսքերը շատ անդամ ըստ-
դին բնաւորութիւնը կը յայտնեն . ուստի
ստասացին սովորութիւնն է միշտ բերանն
այս խօսքերս պարտօցընել . Շիտակը կըսեմ .
Մի տարակուսիք . շատախօսին ալ թէ վեր-
ջապէս խօսքս չմեցընեմ . Միտի բանիւ , խօսքս
չեմ երկեցընել . Հպարտին թէ Չյս գովելու
համար չե . և այլն : Աւտի ընկերութեան
մէջ այս տեսակ խօսքերը գործածելու ար-
թնութիւն շատ պէտք է :

Զդուշութիւն պէտք է դարձեալ այս մի-
ջանկեալ խօսքերը գործածելու . վասն զի
առանց իմանալու այնչափ կրնան շատ-
նալ , որ մտիկ ընողներուն ձանձրութեան
պատճառ կըլլան :

Գ . Արտուղուշիւն . — Հարկ կըլլայ երբեմն
խօսքին կարգէն հեռանալ , կամ քիչ կամ
շատ : — Արտուղութեան առաջին աստի-
ճանն է խօսքին մէջ փակադիծ մը խոթե-
լը , որն որ պէտք է կարճ ըլլայ , բնական
ու քիչ անդամ :

Երկրորդ աստիճանն է խօսքին մէջ եր-
կրորդական մտածութիւններ խոթել , սովո-
րական դուարձաբանութիւններ և առակ-
ներ . բայց այսպիսի խօսքերը գուրցելու
ատեն պէտք է ձայնը ցածցընել : Նայե-
լու է ալ որ այնպիսի արտուղութիւնները
բնական ըլլան , և չըլլայ որ խօսքին մթու-
թիւն տան , և ոչ բռնի խոթած երևան : —
Այս ալ զիտնալու է որ պէտք չէ սովորա-

կան ըլլան այսպիսի արտուղութիւնները ,
և միայն բարեկամաց մէջ թոյլ կրնան տը-
րուիլ . վասն զի շատ դժուար է գործածելը :

Արտուղութեան երրորդ աստիճանը շատ
անդամ ահամայ կը հանդիպի տաք խօ-
սակցութեան մէջ , որ խօսքէն կը հեռա-
նան թէ խօսքն սկսողը եղեր է և թէ մտիկ
ընողը : Թէ որ այն առջի խօսքը՝ մտիկ ընողին
դուարձալի և կամ հարկաւոր ըլլայ ,
կերպով մը կրնայ նորէն յիշեցընել ըսե-
լով թէ Աստուծոյ մեր բանեկն չնկատեալք , և
այլն : Իսկ թէ որ անտարբեր բանի վրայ է
խօսքը , պէտք է թողուլ ինչպէս որ է՝ ա-
ռաջ երթայ :

Գ . Ենթադրուշիւն . — Բազմապատշաճ . —
Ենթադրութեամբ մարդ իր խօսքը կու-
ժովցընէ և ունկնդիրը լաւ մը կը համոզէ .
իսկ բազմապատշաճեամբ՝ կերպով մը ստորա-
դրած բանին պատկերը դիմացինին առջև
կը դնէ : Թէ որ այս խօսակցութեան կեր-
պերը խելքի դէմ չըլլան , և փափուկ ճա-
շակի և սովորութեան յարմար ըլլան , շատ
ախորժելի կու դան . բայց շատ անդամ ա-
նոր ներհակը կը պատահի :

Տմարդի կըլլայ ենթադրութիւնը թէ որ
ո և իցէ վիճարանութեան կամ խօսակցու-
թեան մէջ պատուաւոր մարդ մը խենթի ,
տղիտի կամ գողի տեղ դնես , կամ են-
թադրես թէ ամօթալի կամ ծաղրական բա-
նի մը հանդիպած ըլլայ . զոր օրինակ՝ ամօ-

Թալի է ըսել մէկուն . թէ որ անխելք մարդ մը ըլլայիք կամ գիւտով , անշուշտ այդ գործքը կրնէիք . կամ թէ՛ Չհրամանքի ծաղր կրնէիք , թէ որ այդպէս ընէիք . և այլն :

Նոյնպէս անվայել բաղդատութենէ ալ դժուշանալու է՝ որ չըլլայ թէ ցած մարդ մը՝ որուն վրայ է խօսքը , ընկերութեան մէջ դատուողներէն մէկուն նմանցուի . անոր համար մեծ տմարդութիւն կըլլայ դուրցելը՝ թէ Այն ըսած որդիւնի մարդս՝ ճիշդ հրամանքիդ հասակոյն էր , կերպարանքով հրամանքիդ շատ նման , և այլն :

Անվայել է դարձեալ արուեստի մը կամ վիճակի մը տէր եղող մարդկանց առջև նոյն վիճակին նախատական բաղդատութիւն մը ընելը : Աւտի տմարդութիւն է ըսել . Բժիշկի մը պէս դատարկարան . Գործակալի պէս սգան . Փաստարանի պէս շատախօս , և այլն , եթէ բժիշկ կամ գործակալ կամ փաստարան դատուի ունկնդրաց մէջ :

Վերջապէս մարդավարութեան և ընտիր ճաշակի դէմ է սովորական եղած ու ուսակական դարձած բաղդատութիւններն ալ դորձածելը :

Ե . Անպատշաճորիշն . — Անպատշաճութիւն ըսելով թէպէտ ընդհանրապէս մարդավարութեան դէմ եղած ամենայն պակասութիւնք կը հասկըցուին , բայց մենք հոս կը հասկընանք պակասիլ այն մտադրութենէն , որ մասնաւոր հանգամանքները կը պահանջեն որ ունենանք :

Տխուր մարդու մը պէտք չէ ուրախ երեւոյթի և կատակ ընելով մօտենանք, որով արհամարհել կրլլայ դիմացիներ: — Նոյնպէս ուրախ ընկերութիւն մը պէտք չէ շփոթենք մեր տրտում կերպերովը և տխուր հառաչանքներովը:

Բնական ճիրքէ մը գրկուածներուն առջևը պէտք չէ ամենեին նոյն ճիրքը դովել. կամ բնական պակասութիւն մը ունեցողին առջևը՝ նոյն պակասութիւնը վար դարնել: — Պէտք չէ չափաւոր մարդկանց առջև հարստութիւնը մեծցընել, կամ հիւանդի մը առջև քու ուժիդ կամ առողջութեանդ վրայ խօսիլ:

Զվայլեր քթախոտի վրայ պարսաւ խօսիլ՝ վար դարնել՝ զգուումն ցուցընել, թէ որ կան հոն տեղն այնպիսի մարդիկ որ քրթախոտ քաշելու սովորութիւն ունին:

Սոյն անպատշաճութեան տակ կերթայ թէ որ նախապաշարեալ մտքով ազգ ազգի, քաղաք քաղաքի, թաղ թաղի դէմ խօսի, որ ընկերութեան և ազգասիրութեան շատ մնասակար բաներ են:

Զ. Զուարճախօսութիւն. — Առակաբանութիւն. — Զուարճախօսութիւնը կենդանութիւն կու տայ խօսքին, և ընկերութեան մէջ դուարթութիւն կը ձգէ, թէ որ իր չափէն չանցնի: — Նախ ոչ երբէք զուարճալի բան մը ըսելու համար, ազտեղի կամ անհամեստ խօսք դուրցել: Աչ երբէք ուամ

կաց բերնէն լսուած զուարճարանութիւն-
ները կը վայլեն կրթեալ մարդու մը բերա-
նը: Աղնուական և կիրթ ընկերութիւնն ու-
նի իրեն առանձին խօսակցութեան նիւթ,
լեզու և բացատրութիւն, և ախորժելի հա-
մեմ. բայց կրթեալ մտքին կիյնայ զասոնք
ընարել:

Զուարճալի խօսք մը զուրցելու ատեն
միշտ պէտք է հանդարտութեամբ և պաղ
արեամբ ըսել. չվայլեր առաջուրնէ ունկն-
դրաց ըսել թէ Նայեցեք գեղեցիկ խօսք մը
պիտի գոչրցեմ: — Գարձեալ ըսելէն վերջն
ալ թէ որ պաղ մը կենան ունկնդիրք, պէտք
չէ ամենեին նորէն նոյն բանը դառնալ և
նորէն կրկնել և ոչ իսկ հարցընել թէ ի՞նչ-
պէս, զուարճալի չե՞ր մի ըսածս. իսկքե դոչրս
բան չե՞: — Այնչափ պէտք չէ զուարճախօ-
սութիւնները յաճախել, որ միմոսի անուն
վրայ առնես:

Զուարճախօսութեանց վախճանը չըլլայ
զուրիշը նախատել թէ պէտ խելքով և շնորհ-
քով ըլլայ: Ածող և նախատող մարդիկ ար-
ժանի չեն բարեկիրթ մարդկանց կարգն
անցնիլ, թէ պէտ խօսքերնին խելացի ու
բարակ ըլլայ և ընկերութիւնն այնպիսի
կերպով զուարթ պահեն. վասն զի մարդա-
վարութիւնը լաւաբարոյութենէ չբաժնուիր:
Անոր համար ամենեին բարեկիրթ պատա-
նոյ չվայլեր մէկուն մէկալին բնական պա-
կասութիւնը ծաղրել, ծիծաղելի նմանու-
թիւններ վրան ընել, ոչ ներկայ անձի և ոչ

Հեռաւորի, այնպէս որ լսողին սիրտը ծա-
կի և սաստիկ նեղանայ: Հապա պէտք է որ
զուարճախօսութիւնը թեթև, անոյշ և շնոր-
հալից ըլլայ. անանկ որ՝ այն ևս զուարճա-
նայ որուն վրայ կըլլայ զուարճախօսութիւ-
նը:

Իսկ դիմացինն ալ պիտի ջանայ ընկերու-
թեան յարմարիլ, և ամենեին նեղսրտու-
թեան նշան մը չցուցընել. ապա թէ ոչ ար-
թուն կենայ զուարճարանն որ եթէ այս-
պիսի կերպ դիմացինին վրայ տեսնէ, մէ-
կէն պէտք է իր զուարճախօսութիւնը դադ-
րեցընէ: — Բայց նոյն ընկերութեան մէջ
զտուողներն ալ զգուշանան մէկուն ըսած
զուարճարանութիւնն իրենց վրայ առնելէն:

Բառերուն հնչմունքը փոխելով ու բառե-
րուն տարբեր նշանակութիւն տալով եղած
ձաղրարանութիւնը՝ շատ անհամ և շատ
զգուշալի է:

Աւելի զգուշալի է այնպիսի երկդիմի բա-
ռեր գործածելը՝ որով համեատութեան դէմ
կըլլայ: Ատանկ դիպուածի մէջ վայելչու-
թիւնն այն է՝ որ մարդ այդպիսի անպար-
կեշտ խօսակցութիւն մտիկ չընէ. մանա-
ւանդ թէ այնպիսի անշնորհք խօսքը կըտ-
րելն՝ ալ լաւ է:

Թէ որ մէկը տեղաց մը լսած խելացի
խօսքը դուրցէ, և այն խօսքն ըսողը դուն
եղած ըլլաս, ամենեին պէտք չէ խմացը-
նես:

Մարդ պէտք չէ միտքը դնէ՝ որ ընկերու-

Թեան մէջ պէտք է միշտ խօսի, և աշխոյժ խօսքեր ըսէ. շատ անգամ վայելուչն այն կըլլայ որ մարդ լուռ կենայ, և աշխոյժ պատասխանուոյ մը տեղ՝ խելացի պատասխան տայ: Քայց դարձեալ այս քանիս մէջն ալ զգոյշ պիտի կենայ մարդ որ տուած պատասխանը իր վիճակին և հասակին յարմար ըլլայ. վասն զի կրնայ ըլլալ որ ըստ ինքեան խելացի պատասխան ըլլայ, բայց ըսողին յարմար չգայ, որով ընկերութեան ընդունելի չըլլար:

Ռամկական առակարանութիւններն ալ գործածելու զգուշութիւն շատ պէտք է: Բնականական խօսակցութենէ դուրս գործածելը շատ զգուշալի է: Նոյնպէս պէտք չէ ստէպ գործածել՝ որ խօսքը ձանձրալի չըլլայ:

Գործածելէն առաջ ալ համառօտ մը հասկըցընելու է թէ առակարանութիւն է ըսածը, դուրցելով թէ՛ ինչպէս որ տաակը կրսէ. և այլն: — Թէ որ առակ մը պարբերութենէ ետե յարմար գայ, խօսքն աղէկ ազգու կըլլայ:

Է. Պատմութիւն. — Պատմութիւնը ընկերութեան մէջ ախորժելի և գուարճալի ըլլալու համար՝ քանի մը հարկաւոր զիտելիք կան: — Նախ՝ թէ պէտք չէ շարունակ պատմութիւն պատմել. վասն զի որչափ ալ աղուոր պատմութիւններ ըլլան, բայց միակերպ ըլլալով՝ մարդը կը յոգնեցընեն:

Ուստի թէ որ աղուոր պատմութիւն մըն ալ ունենաա ըսելիք, նայէ զիտէ որ ուրիշները կը փափաքին լսելու թէ չէ :

Երկրորդ՝ նայէ որ ըսելու պատմութիւնդ ըստ տեղւոյն ըլլայ, և եղած խօսակցութեանը հետ յարմարութիւն մը ունենայ, չէ թէ շատխօսութեան համար միայն գորցուած ըլլայ : Սովորական պատմութիւն մըն ալ խօսք մըն ալ թէ որ տեղին յարմար գայ, շատ տաք կիյնայ :

Բայց դու պատմութեանդ դարդ տալու համար, և աղէկ ոճով մը պատմելու համար՝ պէտք չէ աւելորդ պարագաներ աւելցընես, մանր ստորագրութիւններ ընես, կամ երկայն ճառեր զուրցես : Ամենալէն վերջն ալ չդառնաա չհարցընես թէ Չարմաւադի բան չե՞ մի պատմա՞ծա :

Արովհետև ընկերութեան մէջ վայելչութիւնը կը պահանջէ, որ մէկն որ բան մը պատմէ՝ ուրիշները լսութեամբ մտիկ ընեն, կը վայլէ պատմողին՝ որ պատմութիւնը չսկսած քննէ նայի թէ արդեօք ինչ որ կուղէ պատմել՝ ուրիշները զիտեն թէ չէ : — Թէ որ զիպուած մը օրագիրներու կամ լրագիրներու մէջ տպած ըլլայ, և ծանօթ մարդու մը հանդիպած ըլլայ, նոյնը ընկերութեան մէջ պատմելն ամենեկին վայելչութեան կանոնաց դէմ է :

Եթէ մէկը զիպուած մը պատմէ որ դուն ալ լաւ զիտես, ամենեկին խօսքը չկտրես : Թէ որ նոյն բանին վրայ քու կարծիքդ հարցը-

նեն, անկեղծութեամբ պատասխան տուր .
բայց չըլլայ թէ այնպէս մը երեցընես որ
դուն զքեզ պատմողէն աւելի ղիպուածին
ղիտուն սեպեր ես : — Այս միայն բառական
չէ . հապա թէ հանդիպի որ ղիտցածդ դառ-
նայ մէկը քեզի պատմէ, կամ այն որ ե-
րէկ մէյմը պատմեր է, այսօր ալ նորէն
պատմէ, կամ թէ քուկին իսկ ուրիշ ան-
գամ իրեն պատմածդ ինքը քեզի պատմէ,
պէտք է որ միշտ լուռ կենաս, և հետա-
քրքրական կերպ ցուցընես :

Արնայ ըլլալ որ մէկուն բան մը պատմե-
լու ատեն պարագայ մը կամ անուն մը միտ-
քը չգայ, կամ թէ ծուռ միտքը դայ . ղիմա-
ցինը միշտ պէտք է լուռ կենայ, և ամե-
նևին պիտի չցուցընէ թէ ինքը ղիպուածին
տեղեկութիւն ունի : Այս մարդավարու-
թիւնը հարկաւոր է աւելի ծերոց գործածել :

Թէ որ ըրած պատմութիւնդ ընկերու-
թեան ախորժելի ըլլայ, երեսիդ վրայ միշտ
համեստ չափաւորութիւն մը երևայ . թող
որ ուրիշները յիշեն աւելի գուարճալի խօս-
քերը : Բայց ոչ նայուածքով ոչ խօսքով
պէտք է ցուցընել թէ գովութեան կը սպա-
սես . չէ նէ ոչ որ բերան կը բանայ, որ է
ըսել թէ խօսքին ախորժը կը կորսուի :

Ը. վ. Կձ . — Խօսակցութիւնն ինչ բանի
վրայ ըլլայ, մարդ իր կարծիքը միշտ հա-
մեստութեամբ պէտք է ըսէ, և թէ որ ղէմն
առնեն, պաղ արեամբ և անոյշ եղանակաւ

պաշտպանէ : — Թէ որ ինքն իրաւունք չունի , քաղաքավարութեամբ դիմացինին իրաւունք տայ : — Թէ որ հարկաւոր բանի վրայ չըլլայ խօսքը , ինքն իրաւունք ալ որ ունենայ , պէտք չէ պաշտպանել . մանաւանդ թէ որ դէմ դնողը ծեր մը ըլլայ կամ պատուաւոր անձ մը :

Իսկ թէ որ ճշմարտութեան սիրոյն պատճառաւ կամ բան սորվելու համար հարկ ըլլայ մէկուն հետ վիճարանութիւն ընել , նայէ որ միշտ ինքզինքդ բռնես , և դիմացինդ պատուելով՝ չպակսիս քու մարդավարութենէդ : Ասանկով հակառակորդդ չհամոզուի ալ՝ վրադ համարմունք կուեննայ :

Բայց թէ որ այնպիսի մարդոց մէջ հանդիպիս , որ վիճարանութիւն ընել կը սիրեն , ու բանը չհասկըցած դէմը կառնեն ու միշտ ներհակ կողմը կը պաշտպանեն , այնպիսեաց հետ խօսելն որովհետեւ անօգուտ է , մէկէն պէտք է իրաւունք տալ : Այս դիտնալու է որ վիճարանասէրը լռութեամբ միայն կրնայ յաղթուիլ :

Թ . Վկայաբիւն . — Ատենօք իմաստակ մարդիկ զբքերէ անյարմար և անխելք օրինակներ և վկայութիւններ բերելով անանկ ըրին՝ որ երկայն ատեն վկայութիւն բերելը անվայելուչ սեպուեցաւ : Բայց շատ յարմար կու գան և շատ վայելչութիւն կու տան , թէ որ վկայութիւններն ընտիր՝ քիչ և համառօտ ըլլան , նոր և համեստ կերպով ու

նրբամիտ և ընտիր ճաշակով մը յիշուին :
Թէ որ ասանկ չըլլայ՝ ամենեին պէտք չէ
վկայութիւն յիշել , չէ նէ այնպիսին ընկե-
րութեան առակ կըլլայ և խմաստակաց կար-
գը կանցնի :

Մանաւանդ երկտասարդը շատ պիտի
զգուշանան՝ որ չըլլայ թէ ընկերութեան մէջ
իրենց դպրոցական հմտութիւնը ծախել ու-
ղենան . չըլլայ որ ամենեին դիտուն երե-
նայու համար օտար լեզուի բառեր գործա-
ծեն , և ոչ այնպիսի խմաստակական բառեր ,
որ սովորական մարդիկ չեն հասկընար :

Ժ . Գովեստ . — Գանգատ . — Գովեստ
տալն անանկ պիտի ըլլայ որ գովեստն ըն-
դունողին իրապէս պատշաճի . ապա թէ ոչ
դիմացինը նախատել կըլլայ : Նոյնպէս պէտք
է գովեստը փափուկ և անուղղակի կերպ
մը ունենայ :

Սնվայելուչ և անպատեհ բաներէն մէկն
է չափազանց և անյարմար ատեն գովեստ
տալը . այսպիսի գովեստ ոչ տուողին պա-
տիւ կընէ և ոչ որուն որ կըլլայ : Ասան զի
արժանաւոր մարդու մը չափազանց գովեստ
տալը՝ զինքը շատ նեղը խոթել կըլլայ , որ
չկրնար վայելուչ պատասխանը տալ : Թէ
որ լուս կենայ՝ կը կարծուի թէ գովեստը
կախորժի կոր . թէ որ հրաժարողական պա-
տասխան տայ , կը կարծուի թէ կամօք կը-
նէ՝ որ գովեստ տուողն աւելի գրգռէ : Ուս-
տի պէտք է գովեստի կողմանէ զգուշաւո-

րութիւն բանեցընել . վասն զի որչափ որ մարդավարական է գովութեան արժանի եղողին վայելուչ գովեստը տալ , այնչափ ալ չափազանց ու տարածամ գովեստով դիմացինը նեղը խոթելը՝ տմարդութիւն է :

Իսկ գովեստն ընդունողը շնորհակալ մը ըլլալով կրնայ այս կամ ասոր նման խօսքեր ըսել . Հրամաներկերկոչ կերտղամտոչ քիշկե ե որ ասակ կերեցընե , կամ՝ այս խօսքե ըսել կոչ տայ . և այլն :

Ինչպէս որ անվայելուչ է ըսինք չափազանց ու շարունակ գովեստ տալն անոր՝ ուսկից որ ակնկալութիւն մը ունիս , նայնպէս ալ անվայելուչ է առջի դէմդ ելլողին՝ մէկու մը դէմ ունեցած դանդատող յանկարծ յայտնելը :

Մեծ գողուչութիւն պէտք է բանեցընել թէ որ ընկերութեան մէջ պէտք ըլլայ բանի մը կամ մէկու մը հՀաւնիլ ցուցընել . ամենեին խիստ բառեր պէտք չէ դորձածել , և ոչ խօսքիդ մէջ սաստիկ կերպ մը երեցընել :

Թէ որ դանդատ մը ունիս ընելու , պէտք չէ ամենեին խստութիւն կամ թշնամութիւն երեցընես : Քեզի եղած վնասին վրայ տհաճութիւն միայն պիտի երևայ՝ չէ թէ վրէժխնդրութեան հողի : Սասնկով մտիկ ընողն ալ քու կողմդ կը քաշես :

ԳԼՈՒԽ Դ .

ԿԵՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄԷՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՋԳՈՒՀՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հոս ամէն պակասութիւնները մէկիկ մէկիկ յիշել և մէկտեղ հաւաքել անկարելի է, և հատորներ չեն բաւեր. զլխաւորները յիշենք, մնացածներն անոնցմով կըրնան խմացուիլ :

Երբոր մէկ խուց մը կամ սրահ մը կուղես մտնել, և դուռը դոց է, կամացուկ մը մատուղ դարկ, և նախ քան զբանալդ ուշ զիր թէ ներսէն ինչ ձայն կու գայ : Երբոր կը մտնես՝ զոցէ դարձեալ դուռը. իսկ թէ որ բաց էր, բաց թող. եթէ այս ուշադրութիւնը չընես, ուրիշները քու կրթութեանդ վրայ գէշ դադափար մը կառնեն : — Գուռն ամենեին արտորանօք չբանաս կամ չզոցես. մանաւանդ երբոր դրան վրայի խուցին մէջ մարդ կայ :

Թէ որ տեղ մը մտնելու ատեն լսես որ ներսինները տաք տաք իրարու հետ կը խօսին, պէտք է ամուր քալել, որպէս զի խօսողներն խմանան թէ մարդ կու գայ կոր :

Երբոր մէկ տեղ մը կը մտնես, և կը տեսնես որ բազմութիւն նստած է, զանոնք ամէնքն ալ պէտք է ողջունես. թէ որ անոնք

նատած ըլլան՝ դուն ոտքի վրայ մի կենար .
խակ թէ որ ոտքի վրայ կեցած են , դուն մի
նատիր :

Չգուշանալու բան է ընկերութեան մէջ
մէկուն ականջէն վար բան մը փափալ :
Բայց թէ որ ուրիշները քու առջիդ ընեն ,
զգուշանաս կասկածելու կերպ մը վրայ ե-
րեցընելէն . և նայէ որ մտիկ չընես , և որ-
չափ կարելի է՝ հետու կենաս , և ուրիշ բա-
նի մը հետ պարտապիս : — Թէ որ երկու հո-
գի ընկերութենէն անկիւն մը քաշուած բա-
նի մը վրայ կը խօսին , պէտք չէ ամենեկին
անոնց մօտենալ , հասլա սպասելու է որ
մինչև իրարմէ բաժնուին :

Թէ որ մէկը դուրձ մը կամ դարան մը
կամ արկղ մը բանայ , ամենեկին չվայլեր
երթալ մօտենալ նայելու , թէ ինչ կառնէ
կամ ինչ կայ մէջը :

Թէ որ շատ ծանրագին բաներուն մէջէն
քեզի մէկը մէկ բան մը առնէ ցուցընէ ,
զայն միայն քննէ , ուրիշ բանի ձեռք մի
դպցընէր , և ոչ աչքդ տանիս : — Խակ ձեռքդ
տրուած բանը նայելու համար , չվայլեր
ձեռնոցով բռնել կամ դաշիլ . հասլա նախ
ձեռնոցը հանելու է և այնպէս ձեռք առ-
նելու :

Ուրիշին առջնէն մի անցնիր առանց ի-
րեն կողմը դառնալու կամ ծռելու :

Տղու մը չվայլեր ընտանեկար ձեռք տալ
պատուաւոր մարդու . և ոչ մեծին նոյն բա-
նը տղուն ընել :

Ընկերութեան մէջ ոչ երբէք մէկու մը առջևէն անցնիլ կըլլայ, կամ բան մը տալու համար՝ ուրիշի մը առջևէն երկնցընել. հապա ետևէն պէտք է անցնիլ և ետևէն երկընցընել. բայց թէ անկարելի ըլլայ, այն ատենը նախ թողութիւն խնդրելով պէտք է ընել:

Թէ որ մէկուն յանկարծ զարնուիս, որչափ ալ թեթև ըլլայ՝ պէտք է մէկէն թողութիւն խնդրես: Իսկ մէկալն ալ՝ որչափ ալ ուժով ըլլայ զարնուածքը՝ պէտք է պատասխան տայ. Բան չէ, ամենևին բան չկայ. և այլն:

Խօսակցութեան ատեն յօրանջ որ դայ, որչափ կարելի է ջանալու է ինքզինքը բռնել. իսկ թէ որ տկարութենէդ չես կրնար արդելել, նայէ որ ձայներ չհանես. ձեռքդ կամ ձերմակ թաշկինակդ բերնիդ վրայ դնես, որպէս զի ուրիշը չտեսնէ, նոյնպէս ըրէ փռնդալու ատենդ: — Զղուշալի են ընկերութեան մէջ բարձրաձայն հաղալները, խնչելները, ու որ և իցէ բան որ զգուիլ կը բերեն ընկերութեան:

Եստ անվայելուչ բան է բազմութեան մէջ ձգտիլ, քնանալ, քերուրչտրկիլ, որով այնպէս մը կերևցընես թէ այն ընկերութեանէն չես դուարձանար:

Ամենևին բարձր ձայնով մի ծիծաղիր, ձեռուրներդ ծնկուրներուդ վրայ դարնելով, կամ ծռմռտրկելով: — Մէկ բանի մը վրայ աչքդ տնկած տարտամեալ մի նայիր:

Անպատշաճ բան է ընկերութեան մէջ
թէ բարձրաձայն երգելը, և թէ քթին տա-
կէն մումուալը:

Թէ որ աղտոտ բան մը տեսնես, փոխա-
նակ ուրիշներուն ալ ցուցընելու, նայէ որ
բանով մը ծածկես: Նմանապէս քովի ե-
ղածներուդ հոտուըտալ մի տար այն բանը
ուսկից որ դուն կը դանխս: Այս բանիս հա-
մար նայէ որ ուրիշի առջև կանթեղ չմարես,
և չբերես առջև անանկ բան մը որ դարչելի
հոտ ունենայ: — Նոյնպէս ածուխ կամ
ապակի չբերես, որ լսողին դէշ զգացմունք
կու տայ:

Ոչ երբէք կը վայլէ քովինին աուփէն
քթախոտ ուղել, և ոչ չճանչցած մարդուն
հրամցընել, մանաւանդ թէ որ խաթուն ըլ-
լայ դիմացինը: — Իսկ թէ որ քեզի հրամ-
ցընելու ըլլան, պէտք չէ ետ քաշուիս, թէ-
պէտե սովորութիւն չունենաս. հապա մար-
դավարութեամբ քիչ մը առնես. բայց թէ
չես ուզեր քաշել, կամացուկ մը դետին
թօթվէ:

Զգուշացիր ընկերութեան մէջ ձեռուը-
ներդ իրարու շփշփելով կամ շնչով տաքցը-
նելէն, և ալ անսովոր շարժմունքներէն:

Արակի քով նայէ որ շատ չմօտենաս, և
ամենին չխառնես, բայց եթէ քեզի զուր-
ցեն նէ: Իսկ երբոր ուրիշները դան որ ա-
ւելի մսեր են՝ նայէ որ իրենց տեղ տաս:
Մի նմանիր ան ռամիկ մարդկանց որոնք
իրենց մէկ թաշկինակը, կամ վրայի ըզ-

դեստանին կրակի բռնած կը չորցընեն , և
կամ կռնակնին կրակին դարձուցած կը
կենան : Ասոնք չէ թէ միայն ընկերութիւնն
անպատիւ կընեն , հապա նաև դուրիշները
կարգիլեն որ չտաքնան : — Բայց աւելի մեծ
կոպտութիւն է ոտքի ամանները հանել ու
տուրները տաքցընելու համար , մանաւանդ
այնպիսի ընկերութեան մէջ ուր որ պա-
տուաւոր մարդիկ կան :

Արթութեան մեծ պակասութեան նշան է
մեզմէ ծածուկ եղած բաներուն ետեւէն իյ-
նալ որ իմանանք , կամ աչուրնիս տնկենք
գրուածքի մը կամ գրքի մը վրայ որ մերը
չէ : — Անոր համար շատ ամօթալի ու նա-
խատական բան է ուրիշի նամակը կարդա-
լը , և չկայ պատճառ մը որով արդարանայ
այսպիսի մեղադրելի դորձքը : — Թէ որ մէ-
կը կեցեր հատուած մը քեզի կը կարդայ իր
թղթէն , դու կարդացողին երեսը պէտք է
նայիս , և ոչ երբէք թղթին վրայ ուրիշ
տեղուանք աչքդ պտըտցընես : — Իսկ թէ
որ հատուած մը կարդալու համար քու
ձեռքդ տայ , այն հատուածէն աւելի պէտք
չէ կարդալ . և մատդ ալ վարի գրուածքին
վրայ դնելու ես որ ամենևին դիմացինդ չը-
կասկածի որ աւելի բան մը կարդացած ըլ-
լաս : — Թէ որ մէկը թող տայ քեզի՝ որ իր
թղթին մէջ ուրիշի բան մը գրես , ամենևին
թղթին վարը վերը պէտք չէ նայիս , և պէտք
է փութաս շուտ գրես ու տաս : — Իսկ քան
դայն մեծ տմարդութիւն չկրնար ըլլալ որ

ուրիշի առանձին թուղթ մը կարդալու կամ
զրելու ատեն՝ երթաս դուն ալ կտնէն սկսիս
կարդալ : — Ամենեին չվայլեր թղթին ծալ-
քէն ջանալ կարդալու :


Չըլլայ թէ տեղ մը որ երթաս, գրասե-
ղանին վրայի զրքերը և թղթերը խառնես,
կամ այցելութեան թղթեակները և նամակ-
ները նայիս, և կամ անոնց երեսադիրը
կարդաս : — Նոյնպէս չվայլեր գրարանէն
ալ զիրք դուրս հանել, բայց կը վայլէ զըր-
քերուն կռնակը նայիլ, որպէս զի վերջը
կարենաս դուրս տիրոջն ընտրութիւնը : —
Թէ որ գետնէն թուղթ մը գտնես ալ, ա-
ռանց նայելու զիր գրասեղանին վրայ՝ ուս-
կից որ ինկեր է :

Ընկերութեան մէջ ինչպէս անվայել բան
է իրեն չինկած բանին հետաքրքրութիւն ը-
նել, հաւասարապէս անպատշաճ է իրեն
վերաբերածն ալ խմանալու սաստիկ փոյթ
մը և անհանգարտութիւն երեցընել : Աւս-
տի թէ որ բազմութեան մէջ նստած ատենդ
թուղթ մը բերեն քեզի, պէտք չէ մէկէն
բանաս կարդաս, կամ ելլես դուրս երթաս,
հապա անտարբեր կերպով մը մէկդի զիր :
Աւրիշ բան է՝ թէ որ թուղթը բերողին հա-
մար գրուած ըլլայ, պէտք է այն ատենը
բանալ ու կարդալ :

Նոյն սկզբունքէն առաջ կու գայ որ քու
բաներուդ վայելուչ անհոգութիւն մը ցուցը-
նես. ինչպէս ըսենք, չըլլայ թէ երբոր տեղ
մը երթաս և վրայի վերաբերուող հանես, չա-

փառանց խնամք մը երեցընես վրան , որ
չաղտտի . հապա անտարբեր կերպով մը
տեղ մը դիր . թէ որ դիպուածով գետինն իյ-
նայ , անհանգստութիւն չցուցընես : — Զգոյշ
կեցիր բաղմութեան մէջ յանկարծ հայլի
նայիլ , ինքզինքդ շտկուտել , ծոցէդ սանտր
հանած՝ մաղերդ սանտրել , և այլն :

Նայէ որ բաց 'ի ուտելու կամ խմելու
բաներէն՝ բերանդ ուրիշ բան չդնես . վասն
զի մէյմը՝ որ վայելչութեան դէմ է , ինչպէս
ծաղիկ կամ ուրիշ խաղալիկ բերնով բռնե-
լը . երկրորդ՝ որ անկէց մեծ փտանդներ կը
հանդիպին , ինչպէս շատ անգամ եղած է ,
որ մնասակար բաներ բերան դնելով՝ մէյ-
մըն ալ յանկարծակի կը կլլուին . զոր օրի-
նակ՝ դամ , դնդասեղ կամ ասեղ , որով նաև
մարդ կը մեռնի ալ այսպիսի անխոհեմու-
թիւն ընելով :



ՄԱՍՆ ԵՐՐՈՐԳ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Կ Ե Ն Ա Յ

ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

ՀԵՓՈՒՄՏ

Մարդուս առաջին խնայողութիւնը պիտի ըլլայ սորվիլ իր պարտքերը, և անոնց մէջ զինքը կրթել: Թէ որ պարտք սեպեցինք ընկերութեան անմիջական վայելչութիւնները զիտել և սորվիլ, նոյնպէս անոնցմէ ոչ ինչ նուազ հարկաւոր է՝ նաև այն վայելչութեանց ուշ դնել, որ երկրորդական կը սեպուին: Եւ մեծագոյն մասամբ թէպէտև արտաքին սովորութենէ միայն հաստատուած ըլլան, բայց ընկերութեան անդամ եղողը պիտի ջանայ անոնց մէջ ալ չպակսելու: Արհամարհելու է զաշխարհք, բայց միանգամայն զիտնալու ալ է աչալրջութեամբ գործածել զանիկայ. պէտք ունինք մեր կրօնական սկզբունքներով իրմէ բաժ-

նել մենք զմեզ, բայց ոչ թէ անհոգութեամբ
և մասնաւոր բնութենէ մը մէկ դի թողուլ
զանիկայ :

Առաջին վայելչութիւնն որ օտարայ աչ-
քին մեր վրայ պիտի երեցընենք, հաղուստ-
ներնուս վրայ պիտի փայլի : Եւ զիացած
պիտի ըլլանք որ հաղուստնիս մեծ ազդե-
ցութիւն ունի զիմացիներն համարմանը, որ
մեր կրթութեանը վրայ պիտի առնէ :

Վայելչութիւնը կը պահանջէ որ տան
մէջ մինակ ալ ըլլանք՝ հաղուստնիս պար-
կեշտ, մաքուր ու կարգաւորեալ ըլլայ. ան-
կարգութիւնը և աղտոնողութիւնն որ և իցէ
կրթեալ մարդու զգուելի է : Աստի զիչե-
րուան զգեստով ամենեկին պէտք չէ կե-
նալ և մարդու երևնալ, և ոչ անսովոր ըզ-
գեստով մը : Իսկ մաքրութիւնը մեզի պար-
ծանք պիտի սեպենք :

Մարդ միտքը պիտի չզնէ՝ թէ սաստիկ
տաքութեան պատճառաւ կրնայ վրայի
զգեստը հանել, ոտուրները՝ թևերը բաց,
կամ անպարկեշտ ու կոշտ զրքով կենալ.
ասոնք բոլոր լաւ դաստիարակութիւն չու-
նենալու նշան են :

Առանց վերարկուի մարդ ամենեկին փո-
ղոցը պիտի չերևայ : — Այցելութեան որ
երթայ մէկը, պէտք է որ վրան մաքուր ու
կարգաւորեալ ըլլայ : Բայց պէտք չէ չափա-
զանց զարդարուն ըլլայ, և ոչ բոլորովին
անհոգ, հասպա պարզ ու միջակ : Արչափ ան-
վայել է զեղխութիւնը, այնչափ ալ պախա-

րակելի է անհող և թափթրիած կերպը ,
որ ներքին անփոյթութեան նշան է :

Չըլլայ թէ տղմոտ զգեստով մէկուն եր-
թաս , մանաւանդ թէ որ այցելութիւն պի-
տի ընես : Բայց հաւասարապէս զգուշանաս
նաև հոտաւէտ նիւթեր գործածելէն , որ
գուցէ ախորժելի չըլլայ , որուն որ կերթաս :

Ոտքի ամանը անանկ պիտի ըլլայ որ քա-
լելու ատեն աղաղակ չհանէ . քալելու կերպն
ալ անանկ ամուր չըլլայ որ ուրիշին նեղու-
թիւն տայ :

Մարդու հապուստը իր վիճակին ու տա-
րիքին յարմար պիտի ըլլայ : Տարիքը առած
մարդը տղու զգեստ պէտք չէ հաղնի . ա-
պա թէ ոչ՝ տղայամիտ ըլլալը կը ցուցընէ :
Խելացի մարդը անսովոր և աչքի դարնող
կերպ ունենալէն կը զգուշանայ :

Մէկն որ տարիքն առած ըլլայ՝ նայի պի-
տի որ միշտ ասելի մութ գունով ըլլայ զգես-
տը , և ձեր նորելուկ չըլլայ :

ԳԼՈՒԽ Բ .

Ճ Ա Մ Բ Ա Ն Ք Ա Լ Ն Լ

Ճամբան քալելու ատեն ալ դիտելու բաներ կան , որոնց բարեկիրթ մը մասնաւոր փոյթ պիտի ունենայ :

Որ և իցէ ատեն , բայց աւելի այդպիսի հասարակաց տեղուանք՝ զգոյշ պիտի կենաս վայելչութեան դէմ ջընելու . վասն զի որչափ որ անձանօթ ըլլան գքեղ տեսնողները , այնչափ ալ աւելի կրնան քեզի մեղադրութիւն դնել :

Նախ զլիսաւոր և յայտնի զգուշալի բաներն են , որ ճամբան քալելու ատեն վայելուչ կերպ երեցընես վրադ , զլուխդ և մարմինդ շիտակ բռնելով . ձեռուրներդ արծակ , բայց շուտ շուտ ետև առաջ հարժես : — Քալուածքդ ոչ խիստ շուտ , և ոչ խիստ ծանր . ոտուրներդ գետին չքսքսես : Քալելու ատեն զգուշալի բաներէն մէկն ալ է դառնալ ետև նայիլ , կենալ խանութներ դնել , բան ուտել՝ բայց եթէ խիստ պղտի տղաք ըլլան :

Ճամբան երթալու ատեն զգոյշ կենալու է ուրիշի խօսակցութեանցն ականջ դնելէն , միակերպ մէկու մը ետևէն երթալէն , մանաւանդ թէ որ խաթուն ըլլայ : Նոյնպէս

պէտք չէ մասնաւոր մէկուն մէկալին երեւ-
որ նայիլ, ևս առաւել խաթուններու, որ
թէ անկրթութեան նշան է և թէ անպար-
կեշտութեան :

Գարձեալ մասնաւոր զգուշութիւն պիտի
ըլլայ բազմութիւն եղած տեղէն անցնելու
ժամանակ. անկրթութիւն է այնպիսի ա-
տեն մէկը մէկալը հրահարել առաջ երթա-
լու համար, կոչա կոչա մէկուն մէկալին
վրայ աչուրները տնկել, և կամ ուրիշի ոտ-
քին կամ մուճակին վրայ կոխել. որ եթէ
յանկարծ հանդիպի, պէտք է մէկէն թո-
ղութիւն խնդրել :

Խուռն բազմութեան մէջէն անցնելու
ատեն՝ շատ զգուշանալու է որ մարդ ուրիշի
չզարնուի. նոյնպէս արթուն կենալու է որ
ուրիշն ալ չըլլայ թէ իրեն զարնուի : Այս ըզ-
գուշութեան պակասութիւնը չէ թէ միայն
կոչա ու ծաղրելի կրնէ զմարդ, հապա շատ
անգամ մնասներ ալ կրնան հանդիպիլ : Ա-
նոր համար պէտք է դէպ ՚ի մէկ կողմը քա-
շուիլ, թևերն ամփոփել, և դիմացինին քա-
լուածքին ուղղութիւնը դիտելով ըստ այնմ
իր ճամբան շտկել որ չըլլայ թէ զարնուի :
— Բայ հովանեկով երթալու ատեն շատ
զժուար է աս զգուշութիւնն ընել. բայց
պէտք է մարդ արթուն կենայ՝ որ տեղին
յարմար հովանեակը բարձրացընէ կամ
ցածցընէ կամ մէկ կողմը ծռէ :

Ճամբան երթալու ատենդ տեսնես որ
քու ծանօթներէդ մէկը դիմացէն կու գայ

կամ պատուաւոր մէկը, պատրաստէ ըզ-
քեզ որ պատին կողմը իրեն տաս և դու դէս
ի անցուղարձը կայնիս: — Բայց թէ որ
ուրիշ անգամ շատ կը տեսնուէիք իրարու
հետ, պէտք է մօտենաս և հարցընես թէ
ինչպէս է, տունը ինչպէս են, և այլն: Ետ-
քը ով որ տարիքով կամ աստիճանաւ ա-
ւելի պատուաւոր է, անոր կը վայլէ նախ
զատուիլ երթալ. իսկ պզտիկ տարիքովը
պիտի նայի որ ինքը նախ բարեւ տայ: —
Բայց շատ ծաղրելի է թէ որ մէկն երկայն
ատեն այս կերպով զուրիշը խօսքի բռնէ,
մանաւանդ երբոր երթալու կարտորայ: Իսկ
թէ որ հարկաւոր զուրցելու բան մը ունի,
պէտք է հրաման խնդրել որ քիչ մը ատեն
հետը մէկտեղ ճամբան երթայ, և անանկ
զուրցել:

Թէ որ քու ծանօթիդ հետ ուրիշ մէկը ըլ-
լայ քեզի անծանօթ, պէտք չէ կենալ հետը
խօսիլ. բաւական է միայն բարեւել քու ծա-
նօթդ և առաջ երթալ: — Թէ որ մէկուն
հետ երթալու ատենդ՝ ինքն ուրիշի մը բա-
րեւ տայ, պէտք է դու ալ բարեւ տաս, թէ-
պէտ և անիկայ քեզի ծանօթ չըլլայ:

Երբոր ծանօթներէդ մէկը պատուհանը
կեցած ըլլայ, ու դիտնաս թէ իմացաւ որ
դուն զինքը տեսար, բարեւ տուր. բայց փո-
ղոցէն կենալ խօսիլ կամ նշան մը ընել շատ
անվայել բան է: — Նոյնպէս մէկուն դրա-
նը առջև կենալ երկայն բարակ խօսիլը՝
մեղադրելի բան է:

Փողոցի մէջ դիտելու վայելչութիւննե-
րէն մէկն է չղիացած ճամբան հարցընե-
լու կերպը: Թէ որ տեղ մը պիտի երթաս
որուն ճամբան չես դիտեր, քաղաքավա-
րութեամբ բարև տուր մէկուն և անոյշ
կերպով մը ըսէ. Պարտե, կը խնդրեմ Ս.
Ս. տեղը: Եւ սովորաբար խանութպանի
կամ բան ծախողի պէտք է հարցընել. ան-
ցաւորներու հարցընես նէ՛ կրնայ ըլլալ որ
արտորանօք զացողի մը արդելք ըլլաս, կամ
քեզի պէս չղիացողի մը հարցընես: Պա-
տասխանն առնելէն ետև շնորհակալու-
թեամբ բարև տուր ու գնա:

Թէ որ արդելք մը կայ որ ճամբան դո-
ցուած է, ու նեղ անցք մը մնացեր է, չըլ-
լայ որ շուտով անցնելու համար ուրիշը հըր-
մշտըկես, հապա սպասէ մինչև որ կարող
դայ: Իսկ թէ որ անցնողը բարեկիրթ մարդ
է, քու առջևէդ անցնելու ժամանակը պէտք
է որ քաղաքավարութեամբ պզտիկ մը ծռի
քեզի. այն ատեն դուն ալ իրեն:

Թէ որ մէկը հովանեակ չունենայ, ու
ճամբան դինքն անձրևը բռնէ, ու տեսնէ
որ ուրիշ մը հովանեկով իր ճամբան կեր-
թայ, կրնայ մօտենալ և աղաչել, որ շնորհք
ընէ՛ ու մէկտեղ երթան: Անիկայ ալ
պէտք է սիրով ընդունի, և քաղաքավա-
րութեամբ հարցընէ թէ ո՛ւր կերթայ, որ-
պէս զի մինչև հոն տանի. բայց թէ որ իր
ճամբէն շատ կը հեռացընէ, ու հարկաւոր
բան ունի, այն ատենը կրնայ անուշութեամբ

ըսել թէ Շատ կը ցաշիմ որ հրամաներից այս
ժառանգորիւնը չեմ կրեար ընել, ինչպէս որ կը
փաստարէի: — Զուրցածէս կը հետեի որ բա-
րեկիրթ մը այնպիսի դիպուածի մէջ մէկն
որ տեսնէ առանց հովանեկի, առաջ պի-
տի փութայ և ինքիրեն պիտի հրաւիրէ. մի-
այն թէ անպատշաճութիւն չըլլայ. վասն
դի չվայլեր որ հասարակ մարդ մը մեծ մարդ
մը հրաւիրէ. թէ որ ընէ ալ շատ զգուշու-
թիւն կը պահանջուի. նոյնպէս և աւելի
զգուշութիւն պէտք է թէ որ խաթուն մը
ըլլայ: Նմանապէս վայելուչ չէ՝ որ մեծ
մարդ մը շատ վարի աստիճանի մարդ մը
հրաւիրէ:

Յեխոտ ժամանակ քալելու ատեն պէտք
է միտ դնել որ չըլլայ թէ չորս դին ցեխ
ցաթկեցընէ, ու թէ ինքը աղտոտի, և թէ
ուրիշներն ալ աղտոտէ: Անհոգ կերպով
քալողը կը ցուցընէ թէ կրթութեան շատ
պակասութիւն ունի: Աստի քալելու ատեն
ինքզինքը մաքուր պահելու պէտք է նայիլ.
Քարին մէջ տեղը կոխել, որ եղերքը կոխե-
լով երկու քարին մէջ տեղի խորը չսահի,
և նայելու է որ ոտքին մատուրներուն կող-
մը նախ դետին դնէ, ետքը կրունկը. մա-
նաւանդ թէ որ ցեխը շատ ըլլայ, կրունկը
պէտք չէ ամենեին դետին դպցընել: —
Զդետին ստորոտը ոտքին վէզէն վեր պէտք
չէ վերցընել. և աջ ձեռքովը միայն դէպ
ի աջ կողմը ամփոփելու է. և ոչ երբէք եր-
կու ձեռքով վեր բռնել:

Հեղեղի ատեն փողոցին մէջ ջուրն որ ա-
ծի, ու անցնելու համար տախտակ մը կամ
ասոր նման բան մը դրած ըլլան, պէտք է
որ մարդ վազէ ուրիշէն առաջ անցնելու
համար: Եւ նաև բարեկիրթ երիտասար-
դին կը վայլէ որ այնպիսի ժամանակ ծե-
րոց ու տկար անձանց ձեռք տալով անց-
նելու օգնէ, թէ և իրեն ծանօթ չըլլան:

Թէ որ ճամբան մէկուն հետ ընկերու-
թեամբ կերթաս, և անիկայ քեզմէ աւելի
պատուաւոր ըլլայ, պէտք է աջ կողմը առ-
նուս դանիկայ: Իսկ թէ որ ուրիշ երկու
հոգւոյ հետ ես, նայէ որ մէջ տեղը չբռնես,
վասն զի պատուաւորը մէջտեղն է, աջը
երկրորդ, ձախը երրորդ:

Թէ որ երիտասարդ մը տարեց մարդու
հետ ճամբայ ընելու ըլլայ, լաւ միտքը
պահէ պիտի՝ որ տարեցը իրեն պէս չկըր-
նար քաշել, ուստի իր քայլափոխն անոր
պէտք է յարմարցընէ: Նոյնպէս նաև թէ
որ պատուաւոր մէկն ըլլայ, ոչ երբէք իր-
մէն առաջ անցնիլ. թէ որ ինքը կենայ բան
մը քննէ, պէտք է որ դու ալ կենաս նոյն
բանը քննես:

Ուղեկցիդ հետ խօսելու ատեն, նայէ որ
ցած ձայնով խօսիս, և շատ ձեռքի շարժ-
մունք չընես: — Ճամբան թէ որ աղքատ
մը հանդիպի, նայէ որ փութաս՝ դու տաս
ողորմութիւնը, բարեկամիդ չթողուս:

ԳԼՈՒԽ Գ.

Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ընկերական կենաց մէջ բարեկամական սիրոյ ընտանութենէն այցելութեան երթալը՝ գլխաւոր դիտելու բաներէն մէկն է . վասն զի մարդկային կենաց մեծ սիտիանք է . անոր համար պարտք ալ է՝ որ երբեմն երբեմն բարեկամ բարեկամի կամ ընտանի ընտանւոյ տայ այս սիտիանքը :

Այցելութիւն ընելու շատ առիթ կրնայ ըլլալ . բայց մենք հոս գլխաւորները յիշենք :

Այցելութեանց մէջ գլխաւորը՝ որ Նոր տարի շնորհաւորելու այցելութիւնն է , պարտք է նախ ծնողացն ընել , ետքն իրեն դաստիարակացը կամ գլխաւորներուն , ետքը բարեկամաց և բարերարաց :

Եւրոպացւոց մէջ նոր տարիէն օր մը կամ երկու օր առաջ այցելութեան երթալը՝ աւելի մարդավարական է . նոյն օրն երթալն աւելի ընտանեկան ու պատուաւոր . նոյն շարժումն մէջ մարդ կրնայ այն ծանօթներուն երթալ՝ որոնց հետ շատ վերաբերութիւն չունի . իսկ նոյն ամսուան մէջ ձգելը այս տեսակ այցելութիւնը՝ աւելի պաղ կիցնայ : — Այսպիսի այցելութիւն նոյն օրուան որ ժամուն որ ըլլայ , կրնայ մարդ երթալ :

Այս կերպ այցելութիւն ընողը՝ որչափ որ ձեռքէն կու գայ՝ մաքուր և շնորհքով հազուած պիտի ըլլայ : Արկայն պէտք չէ կենայ , քառորդ մը միայն բաւական է . մանաւանդ թէ որ ուրիշ մը վրայ գայ , պէտք է թողուլ քաշուիլ : — Թէ որ բարեկամդ տունը չգտնես , պէտք է ծառայից յանձնել որ քու երթալդ խնայրնեն . բայց լաւ կըլլայ քիչ ատենէն նորէն երթալ :

Իսկ շնորհաւորութիւն ընդունողն ալ՝ թէ որ շատ բարձր աստիճանի մարդ չէ քան զմէկալը , պէտք չէ դանդաղի ինքն ալ փոխադարձն երթալու :

Կան նաև Մտերմական այցելութիւն ներքին բարեկամաց և ազգականաց մէջ , և Մարդավարական այցելութիւն որ և իցէ բարեկամաց՝ անտարբեր առթով :

Բարեկամաց և ազգականաց մէջ հարկ չկայ ամէն մէկ այցելութեանը փոխարէն երթալ . ով որ աւելի պարատ ատեն ունի՝ աւելի կընայ երթալ . բայց մէկալ կողմանէ ալ պէտք չէ բոլորովին անհող ըլլալ . մէկը որչափ զբաղմունք ալ ունենայ , երբեմն երբեմն պէտք է այս տեսութիւնն ընէ :

Իսկ թէ որ այցելութիւնը մարդավարական միայն ըլլայ , հարկաւոր է միշտ եղածին փոխարէն այցելութիւն ընել . և քու ըրած այցելութեանդ ալ փոխարինին սպասել : Գիտելու ես թէ մինչև որչափ ատեն փոխարէն այցելութիւնը կուշանայ . վասն զի քեզի ալ կը վայլէ որ նոյնչափ ատենէն

ևս այցելութիւնդ ընես . ասիկայ ըլլայ քեզի
կանոն հասկընալու թէ արդեօք շո՛ւտ պիտի
ընես այցելութիւնդ թէ ուշ : Ասան զի կան
որոնց ամիսն անգամ մը բաւական է այ-
ցելութիւն ընել . կան ալ որ տասնըհինգ
օրը մէյմը , կամ աւելի շուտ կամ աւելի
ուշ՝ վայելչութեանը նայելով :

Ս.յս բանիս համար լաւ սովորութիւն ու-
նին ումանք որ մարդավարական այցելու-
թիւնները չմոռնալու համար՝ յիշատակա-
բանի մը մէջ կը նշանեն թէ երբ այցելու-
թիւն ըրեր են , երբ փոխարէնն ընդուներ
են , և երբ պարտական են ընելու . որ չըլլայ
թէ այցելութեան մը փոխարէնը առանց
կատարելու անցընեն , կամ թէ իրենց ը-
րածին փոխարէնը չընդունած՝ նորէն այցել-
ութեան երթան :

Մարդավարական այցելութիւն որ ընելու
ըլլաս՝ պիտի նայիս առաջ որ ամենեին
թեթե տկարութիւն մըն ալ չունենաս , ինչ-
պէս է՝ դլխի ցաւ , հարբուխ , իջուածք , հաղ ,
և այլն . վասն զի մտադրութիւնդ ցրուած
կըլլայ , ձայնդ ալ անախորժ , որ շատ ան-
վայել բաներ են : Ս.յս կանոնէս դուրս կը
համարուի բարեկամական այցելութիւնը ,
որ այսպիսի վիճակի մէջ երթալն աւելի
վայելուչ կ'իյնայ , կերպով մը ցուցընելով
թէ բարեկամիդ վրայ որչափ սէր ու փայթ-
ունիս :

Ս.յցելութիւն ընելու համար շատ հար-
կաւոր է ժամանակն ալ զիտելը : Արուն որ

այցելութիւն կրնեսա՛ պէտք է առաջ դիտնաս
թէ ինչ սովորութիւն ունի. որպէս զի չըլ-
լայ թէ այցելութիւնդ անոր կերակրոյ ատե-
նը իյնայ, կամ դրադանքին ժամանակ կամ
սովորական պարտելու դացած ատենը :
Այս բանիս Ներոպա ընդհանուր կանոնն
այս է՝ որ օրհասարակէն առաջ կամ ժամը
հինկէն ետե մարդավարական այցելու-
թիւն չըլլար :

Թէ որ մէկը կառքով այցելութեան եր-
թայ, պէտք է ծառան ինչնցընէ տեղեկա-
նալու թէ որուն որ այցելութեան կերթայ՝
տունն է թէ չէ. իսկ թէ որ կառքը վարձած
է ու հետը ծառայ չունի, կամ թէ ուրով
է, ինքն անձամբ պէտք է հարցընէ : Իսկ
այն տանը ծառան ինչ որ ըսէ՝ պէտք է
հաւատալ, ու պէտք չէ խօսքն երկնցընել .
անանկ որ թէ որ ըսէ թէ տնէն ելած է,
և դու յայտնի դիտես թէ տունն է, կամ
դիպուածով տեսած ալ ըլլաս, բայց ՚ի վե-
րայ այսր ամենայնի վայելչութիւնը կը պա-
հանջէ որ չպնդես, հապա չտեսած ձեռ-
նաս, բարեղ թողուս և ելլես երթաս :

Ներոպա սովորութիւն է որ երբ մարդա-
վարական այցելութեան երթան ու տունը
չդտնեն բարեկամը, անուննին թղթի մը
վրայ գրած կամ տպած՝ ծառային կը ձը-
ղեն որ ախրոջը տայ, և անանկ իրենց բա-
նը կերթան : Այս թուղթը թղթեակ կըսուի,
որուն վրայ քանի մը հարկաւոր դիտնալիք-
ներ կան որ հոս պատշաճ է ըսել :

Այլևայլ գունով, և տեսակ տեսակ դար-
գերով կրնայ ըլլալ այս թղթեակը. բայց պա-
րոններու և տարիքն առած խաթուններու
չփայլեր շատ դարդարուն կամ բացազոյն
ընել, մանաւանդ վարդազոյն. հապա պէտք
է պարզ ձերմակ հաստըկեկ թուղթ ըլլայ:
Սովորութիւն է որ սուղի մէջ եղած ատեն
թղթեակին եղերքը սե կը ներկեն: — Այս
թղթին մէջ տեղը անուննին և մականուն-
նին կը գրեն կամ տպել կուտան: Ոմանք
անուանը տակը թէ որ պատուանուն մըն
ալ ունին նէ, դայն ալ կաւելցընեն: Մե-
ծամեծ քաղքըներու մէջ բնակարանին
թաղն ու թիւն ալ գնելու է վարի աջակող-
մեան կամ ձախակողմեան եղերքը:

Մարդավարական այցելութեանց ատեն
թէ որ տունը չգտնուի որուն որ կերթաւ,
քանի հոգի որ տանը մէջ գլխաւոր են,
ամէն մէկուն համար զատ զատ թղթեակ
պէտք է թողուլ: — Բայց թէ որ մէկը մը-
տերմական այցելութեան երթայ ու բարե-
կամը տունը չգտնէ, պէտք չէ թղթեակ
ձգել, բաւական է ծառայից յանձնել որ
գալը բարեկամին իմացընեն. իսկ թէ որ
ծառայք ալ տունը չգտնուին, այն ատենը
պէտք է թղթեակ ձգել:

Թէ որ քեզի այսպիսի թղթեակ մը ձգեն
տարեգլխին և կամ ուրիշ դիպուածի մը,
որ այցելուաց փոխարէն պէտք է երթալ,
կրնաս պահել այս թղթեակը, որպէս զի
քեզի յիշելիք մը ըլլայ փոխարէնը չմոռ-

նալու : — Հիմա այսպիսի թղթեակները հայլի շրջանակին եղերքը խոթելն ու պահելը , որ բան ծախել մը կը սեպուի , շատ ծաղրելի է :

Տունը մտնելէդ ետե պէտք է վարը մասնաւոր տեղ մը սպասես որ ծառայն տանտիրոջն խմացրնէ գալդ , ու անանկ առաջ երթաս : Բայց թէ որ ծառայ չըլլայ տանը մէջ , չվայլեր մէկէն դուռը բանալ խուցը մտնել . հասլա պէտք է նախ կամացուկ մը մատով որուն որ կերթաս՝ նստած խուցին դրանը դարնես , ու սպասես մինչև որ դուռը բանան կամ ներս հրամցրնեն : — Թէ որ ոչ բացող ըլլայ և ոչ ներս հրամցրնող , կրնաս կամացուկ մը դուռը բանալ ներս նայիլ . թէ որ մարդ չկայ , պէտք չէ ասդին անդին երթալ ուրիշ գոներ բանալ մարդ փնտռելու համար , հասլա պէտք է սրահը սպասել մինչև որ մէկը գայ և գրեզ հրամցրնէ : — Թէ որ սպասելդ շատ կերկրննայ , կրնաս աթոռի մը վրայ թղթեակդ ձգել , կամ դռնապանին տալ ու երթալ : Թէպէտ այսպիսի դիպուած քիչ կը հանդիպի , բայց այս թղթերն պատրաստ ունենալը լաւ է :

Երբոր ներս հրամցրնեն , պէտք է մըտնել ու շնորհքով և մեծարանօք բարև տալ : Երբոր տանտէրը կամ տանտիկինը հրամցրնէ որ նստիս , պէտք չէ նստիլ քանի որ ինքը չէ նստած . ու պէտք է դրանը կողմը նստիս , և պատուաւոր կողմը հրամցրնողին թողուս : — Թէ որ աթոռ ըլլայ նստե-

լիքը ու տանտէրը շարժի որ մէկ ակտու մը
բերէ, պէտք է դու փութաս ատենս, ու
վարի՛ դրան կողմը դնես, և անանկ նըս-
տիս: Այտք չէ ակտուին մինչև ետևի դին
թաղուիլ, և ոչ ակտուին վրայ երերալ. հա-
պա վայելուչ ու համեստ նստուածքով մը
կենալ:

Թէ որ այցելութեան դացած բարեկամդ
բանի մը զբաղած է և կաղաչէ որ քիչ մը
իրեն սպասես, մի քններ ինչ բանի հետ
ըլլալը, հապա պատին վրայի պատկերները
դիտէ, կամ պատուհանէն դուրս նայէ,
մինչև որ ինքը զբաղանքը լմացընէ, ու քեզի
դառնայ:

Այցելութեան դացած տեղդ չըլլայ թէ
անոնց դործոցը կամ սովորութեանցը խառ-
նուիս կամ հետաքրքրութիւն ընես:

Թէ որ նստած խօսելու ատենդ ընտա-
նեաց մէկը ներս մտնէ, պէտք է ոտք ել-
լես ու բարևես, և շնատիս՝ մինչև որ մըտ-
նողը շնատի կամ չբռնադատէ դքեդ որ
նստիս:

Թէ որ այցելութեան երթաս ու տեսնես
որ քեզի անձանօթ ուրիշ այցելուներ ալ
կան, ու խօսակցութիւն ալ կընեն, տան-
տիրոջը համառօտ բարև մը կու տաս ու
լուռ կը կենաս, որ ուրիշներն իրենց խօ-
սակցութիւնն առաջ տանին. ու քիչ մը
ատենէն ամէնուն մէկէն բարև մը կու տաս
ու կը թողուս կերթաս: Իսկ թէ տեսնես որ
եկած այցելուքն ալ տանտիրոջը հետ կը

միարանին ու կը բռնադատեն որ չերթաս ,
անոյշ պատասխան մը տուր , բայց մի կե-
նար , բանիդ երթալու նայէ :

Մարդավարութեան այցելութիւնը պէտք
չէ որ շատ երկրնայ : Թէ որ խօսքը կը տ-
րուի , ու տանտէրը նոր խօսք մը չսկսի , և
կամ ուրիշ ո՛ր և իցէ պատճառի համար տան-
տէրը ոտք ելլէ , սովորութիւնը կը պահան-
ջէ որ այցելուն բարև տայ ու քաշուի :

Թէ որ լուր բերեն թէ նոր այցելուք ե-
կեր են , պէտք է որ դուն թողուս երթաս :
Իսկ թէ որ տանտէրը բռնադատէ որ չեր-
թաս , պէտք է համառօտ և անոյշ պա-
տասխան մը տալ՝ թէ ամենահարկաւոր
բան մը ունիս , և թէ չարժեր որ քեզի մաս-
նաւոր մտադրութիւն ըլլուի , ու թողուս
երթաս :

Թէ որ այցելութեան ատեն տանտիրոջը
թուղթ մը բերեն , և անիկայ մարդավարա-
կան օրինօք թուղթը չբանայ՝ ասջևը դնէ ,
այն ատենը աղաչէ՝ որ բանայ . թէ որ չբա-
նայ , քեզի ազդարարութիւն մը ըլլայ որ այ-
ցելութիւնդ համառօտ ընես : — Իսկ թէ ի-
մանաս որ տանտէրն ալ՝ որուն այցելու-
թեան դնացեր ես՝ դուրս պիտի ելլէ կամ
կերակրոյ պիտի երթայ , ալ աւելի փութաս
երթալու , թէպէտև ինքը դեռ կենալու բըռ-
նադատէ դքեդ :

Բայց թէ որ այցելութիւնդ աւելի մտեր-
մական է , քան թէ մարդավարական , ու
չատ բռնադատեն դքեդ որ չերթաս , պէտք

է մտիկ ընել, բայց քիչ մը ատենէն նորէն
ուտք ելիր. թէ որ նորէն բռնադատեն, ու՛
թէպէտ քաղաքավարութեան դէմ է՝ ձեռ-
քէդ բռնեն ու ճորով նստեցընեն զքեզ,
բայց քիչ ատենէն պէտք է երրորդ անգամ
ելլես որ ալ երթաս :

Թէ որ սերիչներու հետ միատեղ այցե-
լութեան երթաս, սովորութիւն է՝ որ սան-
դուխն ելլալու ատեն աւելի պատուաւորն
առաջ երթայ, և պէտք է պատին կողմը
կամ՝ որ կողմը որ աւելի պատուաւոր է նէ
անոր տալ : — Աւելի տարեցը կամ պա-
տուաւորն առաջ ներս պիտի մտնէ, նոյն-
պէս ելլելու ատեն անոնք պիտի առջինն
ըլլան, անանկ որ մեծ անքաղաքավարու-
թիւն կը սեպուի, թէ որ պղտիկ մը կամ
տարիքով և կամ պատուով վարի աստի-
ճանէ մէկը առաջ ելլէ : Այս ալ գիտնալու է
որ իրեք կամ շատ շատ՝ չորս հոգի այցելու-
թեան միայն կրնան երթալ. անկէց աւելի
մէկտեղ երթալը մարդավարութիւն չէ :

Չվայլեր տղայ կամ շուն մէկտեղ մար-
դավարական այցելութեան տանիլ : Թէ որ
բոլորովին մարդավարական չէ, կրնայ հե-
տը տանիլ, բայց պէտք է դրսի սրահը թո-
ղուլ տղան իր դայեկովը, նոյնպէս շնիկը,
բայց լաւագոյնն է մէկտեղ ամենեին անա-
սուն չքալցընել :

Թէ որ այցելուն ծարաւ ունենայ՝ կրնայ
համարձակ դուրցել. իսկ սրիչ կարևոր
պէտքերը ջանայ առաջուրնէ հոգալ :

Մտնելու ելլելու ատեն ծաղրելի է երկայն երկայն բարենելու կերպեր ձևացընել . բաւական է մէյմը ոտք ելլելու ատեն մնաք բարով ըսել , մէյմըն ալ դրանը քով :

Թէ որ տէրութեան մեծ պաշտօնատիրոջ մը հետ կամ երևելի մարդու մը հետ բան մը ունենաս , պէտք է նախ թղթով իրմէ հրաման ուղես , ու ինչ ատեն որ որոշէ , ջանա նոյն ժամուն ճիշդ գտնուիլ . ու պէտք չէ ամենեկին այս տեսակ այցելութիւնը երկնցընել :

ՔԼՈՒԹ Գ .

ԱՅՏԵԼՈՒԱՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Ինչպէս այցելութեան եկողին , նոյնպէս տանտիրոջը կողմանէ որ այցելութիւնը կրնդունի , շատ զգուշութիւններ կը պահանջուին :

Տանտէրը պիտի ջանայ այցելունները աւնոյշ և ազնուական կերպով մը ընդունիլ , անանկ որ վրան և չորս կողմը վայելչութիւն մը հաճոյք մը փայլի . որպէս զի այցելունները զոհ սրտով ետ դառնան ու նորէն այցելութիւն ընելու փափաքին :

Ընդունելութեան խուցը պիտի ըլլայ բարեկարգ , մաքուր և աղէկ զարդարած , բայց առանց շռայլութեան : — Աչ երբէք կերա-

կուր ուտելու խուցը այցելուները ընդունիլ-
բայ 'ի անպատշաճութենէ, նաև շատ նե-
ղութիւն կըլլայ թէ սեղանը պատրաստե-
լու, և թէ սեղանին հանդերձանքը վերցը-
նելու :

Չանալու է որ միշտ զիշերը սանդուխին
վրայ կանթեղ մը ըլլայ, որ այցելուաց ել-
լելուն իջնելուն լոյս տայ. ապա թէ ոչ մէ-
կէն ծառան խրկել :

Տանտէրն երբոր տեսնէ որ մէկը ներս
կը մտնէ, պէտք է մէկէն ոտք ելլէ ու դէմն
երթայ ու հրամցընէ որ նստի : Ամէն հեղ
որ նոր այցելու դայ, տանտէրը պէտք է նոյն
կերպով ընդունի, և քովը եղողներն ալ
ոտք ելլեն :

Ամենայն մտադրութիւն պիտի ընէ որ ե-
կողները ամենայն կերպով հանդիստ ըլլան.
օրինակի համար՝ թէ որ ամառ է, պէտք է
հարցընել այցելուին թէ պատուհանը ար-
դեօք բաց կուզէ թէ դոց, որ չըլլայ թէ նե-
ղութիւն տայ :

Եւրոպայի մէջ սովորութիւն չէ հիմակ
այցելուաց բան հանել, մանաւանդ դոյա-
ցական ուտելու բան հանելը ծիծաղելի սո-
վորութիւն կը սեպուի : Շատ շատ՝ պէտք
որ ըլլայ, ամառը զովացուցիչ սառով ա-
նոյշ ջուր մը կամ լեմոնի ջուր մը կը հա-
նեն. կամ մէկն որ բան կարդայ՝ կոկորդը
կակըղցընող անոյշ ջուր մը կը հանեն, կամ
թէ որ մէկը յանկարծ այլայլութիւն ունե-
նայ՝ ծաղկի ջուր :

Նոյն միջոցին որ բազմութիւն ժողովուած է և մէկն երթալ ուղէ, տանտէրը մինչև խուցին դուռը հետը պիտի երթայ. ու թողութիւն խնդրելով բարեր տայ, և ընտանեացմէ մէկուն յանձնէ որ մինչև փողոցին դուռը հետն երթայ: Իսկ թէ որ ուրիշ այցելուներ չկան, կամ թէ դացողը տարիքով կամ պատուով կամ աստիճանաւ մէկայններէն վեր է, պէտք է մինչև սանդուխին զլուխը հետն երթալ:

Թէ որ այցելուին հետ մինչև սանդուխին զլուխն երթաս, պէտք է կենաս ետնէն նայիս որ դացողը դառնայ նորէն բարե տայ կամ աղաչէ որ խուցդ դառնաս: — Թէ որ այցելուն կառքով պիտի երթայ, և անանկ մարդ է որ մինչև փողոցին դուռը հարկ է ընկերանալ, պէտք է որ տանտէրը օգնէ մինչև որ կառք հեծնէ:

Ձգոյշ կենայ տանտէրը ամենայն կերպով որ իր կողմանէ ամենևին նշան մը չցուցրնէ թէ կը փափաքի որ այցելութիւնը շուտ լմննայ. հասպա միշտ անոյշ երես մը և ուրախութիւն մը երևցրնէ, ու թէ որ այցելուն պատճառի մը համար փութայ երթալ, միշտ պէտք է ցաւ ցուցրնել, և աղաչել որ ուրիշ անդամ ալ դալու չմտնայ:

ԳԼՈՒԽ Ե .

Հ Ա Յ Կ Ե Ր Ո Յ Թ .

Մարդավարութիւնն եթէ կենաց ուրիշ
ամէն դիպումսները պէտք է որ վայելչա-
յրնէ, ևս առաւել դուարձութեանց պիտի
չնորհք տայ, որ առանց մարդավարութեան՝
ամենայն վայելչութիւն կը կորսնցընեն :
Հացկերոյթն այս դուարձութեանց գլխա-
ւորներէն մէկն է, և ամէն ատեն հնուցմէ
ի վեր սովորութիւն եղած է կերակուրը
հանդիսաւոր կերպով մը ընել, և մեծ ըն-
կերական դրօսանաց կարող զնել, և իրա-
րու տեսաւորութեան առիթ մը սեպել . ու-
րով ստէպ մէկմէկու պատիւ ընելու համար
զիրար հացկերութի կը հրամցընեն : Աւ-
րեմն հացկերոյթը որ քաղաքական կենաց
մէջ այգպէս յարդ ունի, պէտք է թէ հրա-
ւիրողք և թէ հրաւիրեալք ամէն արթնու-
թիւն և զգուշութիւն բանեցընեն իր ամէն
վայելչութեանցը մէջ պահելու որ սովորու-
թիւնը հաստատած է, և դիտողին շատ պա-
տիւ կընեն, և իրեն ազնուական կրթու-
թեան նշան կըլլայ : — Հոս կը խօսինք նաև
առտնին կերակրոյ ատեն բանեցընելու ըզ-
գուշութիւններուն վրայ, և անոնց ալ պէտք
է անհող ըլլայ բարեկիրթ մարդը :

Մէկն որ սեղան պիտի ընէ, նայի պիտի որ հրաւիրեալքն իրարու յարմար հաճելի անձինք ըլլան: Սեղանէն երկու կամ իրեք օր առաջ գրով կամ բերնով պէտք է հրաւիրել: Թէ որ բարեկենդանի ատեն ըլլայ, որովհետեւ այն օրերը սովորականէն եւել կոչունքներ կրլլան, հրաւերքը էն քիչ հինգ օր առաջ պէտք է ընել:

Թէ որ գրով մէկը հրաւիրուի, մէկէն պէտք է գրով պատասխան տայ թէ կրնա՞նք թէ չէ: Թէ որ չընդունի՝ պէտք է քաղաքավարութեամբ պատճառն իմացընէ: Երբեմն լռութիւնը կրնայ նշանել թէ հրաւերքն ընդունել է:

Թէ որ հրաւերքը բերնով ըլլայ, պէտք չէ ծանրէն քաշել որ հրաւիրողը սկսի աղաչանքներ ընել, որ շատ տմարդի և անմիտ կերպ է. հապա պէտք է վայելուչ և համարձակ կերպով մը հա կամ չէ ըսել: Բայց թէ որ չէ ըսուի, պէտք է պատճառն ալ ըսել, և ալ պէտք չէ նոյն բանին վրայ երկայն խօսիլ:

Բայց թէ որ մէկն առաջին անգամ այցելութեան գացած և ճանչուորած տեղը հրաւիրուի, կրնայ երկայն բռնադատութենէ վերջը յանձն առնուլ. թէ որ ընդունի, Եւրոպայի սովորութիւն է որ առաջուց այցելութեան թղթեակը տայ, որ իբրև թէ իրենց ճանչուորութեանը պատրաստութիւն մը կը սեպուի:

Թէ որ մէկը հրաւերքն ընդունի՝ չկրնար

խօսքը փոխել , մինչև որ ծանր պատճառ
մը չունենայ :

Հրաւիրքն ընողը պէտք է օրուան ժամն
ալ իմացընէ . հրաւիրուածն ալ պիտի նայի
որ ըսած ժամուն ինքն ալ հոն գտնուի : Նոյն
ժամուն սեղանն ալ պատրաստ պիտի ըլ-
լայ , նոյնպէս տանտէրն ալ որ հրաւի-
րեալքն ընդունի :

Երբոր ամէն հրաւիրեալք ժողովուած ըլ-
լան , ծառան պէտք է իմացընէ թէ կերա-
կուրը պատրաստ է . իսկ հրաւիրեալք պէտք
չէ լսելնուն պէս փութան ելլեն . հասլա կե-
նան իրենց տեղը մինչև որ տանտէրը հրա-
ւիրէ , և ինքն առջևէն երթալով սեղանա-
տան ճամբան ցուցընէ :

Բարի և վայելուչ սովորութիւն է դեռ
չնստած ոտքի վրայ երեսը խաչակնքել , և
լռիկ Աստուծոյ համառօտ աղօթք մը ընել :
Նոյնպէս նաև ելլելու ատեն :

Սեղանին վրայ հրաւիրելոց նստելու կար-
գին շփոթութիւն չըլլալու համար՝ անվայել
չէ անուննին գրել , ու իրենց կարգին յար-
մար սեղանին վրայ շարել՝ ղենջակներուն
վրայ : Հրաւիրեալք սեղանին որ հասնին՝
կրնան քիչ մը ծռիլ նայիլ դրած անուննե-
րը . բայց միանգամայն ալ պէտք են սպա-
սել որ տանտէրը ամէն մէկուն տեղերը ցու-
ցընէ : — Իսկ հրաւիրեալքն ալ այնպիսի
կարգով պէտք է շարել՝ որ նոյն արուեստի
մարդիկ քովէ քով չիյնան . նոյնպէս աղ-
գականքն ալ իրարմէ զատելու է , որպէս զի

նոր մարդկանց հետ ընկերութիւն ընեն , և առանձնական չըլլայ խօսակցութիւնը , հասաւ միշտ հասարակաց ըլլայ ամէնը մէկտեղ , որպէս զի ընկերութիւնը կարենայ դուարձալի ըլլալ :

Գեռահասակները և աւելի վարի աստիճանի հրաւիրեալքը սովորութիւն է սեղանին վարի կողմը դնել : Իսկ սեղանին զիմացէ դիմաց երկու գլխաւոր տեղուանքը , որ երկայնաձև սեղանի վերայ նայելու է որ անոր մէջ տեղն ըլլայ և ոչ թէ գլուխները , կը նստին տանտէրն ու տանտիկինը , ու անոնց քովերէն կըսկսին շարել հրաւիրեալքն իրենց աստիճանին յարմար : Արնայ ըլլալ որ խիտ մեծ սպասուստոր անձ մը ըլլայ սեղանին վրայ , և զանկայ պէտք է առաջին տեղը դնել , տանտիրոջը կամ տանտիկնոջ տեղ :

Մէկէն'ի մէկ սեղան նստելուն պէս զենջակին ձեռք երկնցընելը անվայելուչ բան է . հասաւ սպասելու է մինչև որ ուրիշները սկսին : Նոյնպէս չվայլեր մէկէն սկզբան հացը պնակին մէջ ջարդել զիղել :

Տանտէրը կամ տանտիկինը բաժնէ ապուրը , և իրեն քովիններէն սկսելով կարգաւ առաջ երթայ : Իսկ հրաւիրեալք իրենց բերուած սկաւառակը պէտք է բռնադատեն և իրենց քովինին հրամցընեն : — Իսկ ուտելը պէտք է սպասել և քովիններուն հետ մէկտեղ սկսիլ :

Իւրաքանչիւր կերակուրները որ չկտրը-

տած սեղան բերուին, պէտք է ծառան կոչ-
նատէրին տանի, կամ ուրիշի մը որ ինքը
յանձնէ. կարելէն վերջը պարտոցընէ մէ-
կայնոնց :

Զգուշանալու բան է աչքը տնկած կերա-
կուր բաժնողին վրայ նայիլ, թէ ինչ կատր-
ներ կը բաժնէ. և ոչ քովինին պնակին
վրայ նայելու է : — Իսկ առնողն ալ պէտք
չէ ընտրութիւն ընէ առնելու բաժնին, մա-
նաւանդ զգոյշ կենալու են այս բանիս առ-
ջի առնողները :

Տանտէրը պէտք չէ բռնադատէ որ հրա-
ւիրեալք շատ ուտեն, կամ բռնի սկաւառա-
կին մէջ բան դնէ :

Զվայլեր տանտիրոջն որ սեղանին բանե-
րէն բան մը դուլէ, կամ ստէպ թողութիւն-
ներ խնդրէ, որ հարկինքը լաւ չէ : Իսկ
հրաւիրեալք համառօտ մը պէտք է դուլեն
սեղանին կարգաւորութիւնն ու մեծահաց
ըլլալը :

Զգոյշ կեցիր չըլլայ թէ նշան մը տաս թէ
քու աւելի սիրած կերակուրներդ որոնք են :
Կերակուր մը որ չախորժեցար՝ ամենևին
նշան մի տար :

Սովորական դինին ամէն մարդ՝ ինչպէս
որ կուզէ՝ կրնայ խմել. բայց թէ որ տան-
տէրն ազնիւ դինի մը հրամցընէ՝ չվայլեր
հրաժարիլ, բայց երկրորդ դաւաթէն կրնայ
հրաժարիլ :

Թէ որ հրաւիրեալք մեծ մարդիկ ըլլան,
սովորաբար ծառայ մըն ալ հետերնին կը

բերեն, որ ետենին կեցած ծառայութիւն
կրնէ. այս ծառաները պէտք է որ ուրիշ
հրաւիրելոց ալ մտադրութիւն ընեն. իսկ
սեղանը լմննալէն ետե, այն դրսի եկած
ծառայք մէկդի քաշուելու են, որ տան ծա-
ռայից միայն մնայ աւելցած ուտելիքը: —
Կերակրոյ ատեն պէտք չէ ծառան յանդի-
մանել:

Թէ որ երիտասարդ մը պատուաւոր մար-
դու կամ ծերու մը քով նստած է, պիտի
նայի որ անոր ծառայէ, և հոգ տանի լա-
ւադոյն բաժինն անոր տալու:

Ուտելու ատեն չվայլեր բոլորովին լուռ
կենալ ուտելու միայն զբաղելէն. իսկ թող
չտալն ալ որ ուրիշներն ալ խօսին՝ մեծ ան-
քաղաքավարութիւն է: Թէ որ բազմութիւ-
նը շատ է՝ կրնայ մարդ քովիններուն հետ
միայն խօսիլ, և այնչափ բարձրացրնել
ձայնը, որ անոնք միայն լսեն: — Ար և իցէ
ատեն, բայց ևս առաւել կերակրոյ ատեն
չվայլեր աղտեղի և զզուելի բաներու վրայ
խօսիլ: — Զդոյշ կեցիր բերանդ լեցուն կամ
պատառը պատառաքաղիդ վրայ առած՝
խօսելէն:

Իսկ սեղանին ատեն ուրիշ շատ մասնա-
ւոր զգուշութիւններ կան, որոնց թէ որ ան-
փոյթ ըլլայ մէկը, մէկալ վայելչութիւններն
որ ըսինք՝ բոլոր մտքընել կու տայ, և իրրև
անյարմար ընկերութեան իրեն անմարդա-
վար կերպերովը, խորշել կու տայ զամենքը
իրմէ: Անոր համար առջիններուն պէս և ա-

ւելի արթնութիւն կը պահանջուի ասոնց մէջ ալ որ և է սեղանի ատեն, թէ պէտև ամենօրեայ կերակուր ըլլայ : Մենք քանի մը հար հոս յիշենք, մէկալնոնք իրենցմէ յայտնի կըլլան :

Չափաւոր հեռաւորութեամբ նստելու է սեղան . չվայլեր ոչ բոլորովին ետև աթոռին կռթրնիլ, և ոչ առջև սեղանին վրայ իյնալ և կաշիլ . ևս առաւել անվայել է արմունկները կամ թևերը սեղանին վրայ կըռթրնցընել, հասլա ձեռքերը միայն սեղանին վրայ դնելը բաւական է : — Նոյնպէս պատառ առնելու ատեն ոչ բոլորովին շտակ ինքզինքը պէտք է բռնել, և ոչ զլուխը պնակին կալցընել . հասլա չափաւոր մը ծռելու է :

Մեծ սեղաններու մէջ չվայլեր դենջակը վրան լաւ մը փռել, կամ կոճակէն անցընել, կամ դնդասեղով մը կուրծքը խոթել : Իսկ թևերը սօթթել՝ նաև կերակուր կտրտելու ատեն, շատ ամօթ բան է :

Ծամելու ատենդ շրթունքներդ ոչ միշտ դոց և ոչ միշտ բաց բռնես : — Ուտելու ատենդ նայէ որ շրթունքներուդ կամ ակռաներուդ ձայնը չլսուի . և մասնաւորապէս արթնութիւն պէտք է ընել ազուր ուտելու ատեն քաշելով չխմելու, որ ձայն չելլէ : — Ազուր ուտելու ատեն դարձեալ նայելու է որ դդալը լեփ լեցուն չըլլայ, և ոչ վրան փչելու է որ պաղի . և կէս քովընտի դըրքով բերան տանելու է : — Բղալիդ կամ

պատառաքաղիդ վրայ այնչափ բան առ,
որ մէկ անդամով կարենաս ուտել, առանց
թուշերդ լեցընելու: — Արբոր դգալը ալ
պիտի չգործածես, պնակին մէջ դրած՝ ծա-
ռային թող:

Զգուշալի բան է մեծապէս կերակուրը
հատուրտալը. ևս առաւել չվայլեր քթին
մօտեցընել: Իսկ թէ որ դիպուածով աղ-
տոտ բան մը դտնուի կերակրոյն մէջ, պնա-
կին մէկ կողմը դնելու ծածկելու է՝ առանց
ուրիշներուն իմացընելու. որպէս զի իրենք
ալ նոյն դդուումը չունենան որ դուն ունե-
ցար: — Թէ որ բռնադատուեցար բերանդ
դրած պատառը դուրս հանել, դենջակով
բերանդ ծածկէ և այնպէս ըրէ:

Հաց որ պակսի՝ պէտք չէ ինքիրեն առ-
նել, թէպէտ ձեռքդ ալ հասնի. հապա միշտ
սեղանին ծառայողներէն ուզելու է: Իսկ
թէ որ քեզմէ՝ ըսենք՝ ուզեն, ոչ երբէք ձեռ-
քով հապա պնակով առ սեղանէն հրամ-
ցու: — Հացին այն կտորը որ մատուրներով
կրնայ կտրուիլ, պէտք չէ դանակով կտրել.
և զգուշալի է հացին մէկալ կտորն ալ ա-
փին մէջ բռնել:

Աղ կամ պղպեղ մատով առնել ամենևին
չըլլար, և ոչ դանակին կամ պատառաքա-
ղին կոթովը. հապա դանակին ծայրովը,
բայց մաքուր և չոր ըլլայ: Շատ տեղ սովո-
րութիւն է աղամանին քով պղտի դգալիկ
մը դնել այս բանիս համար:

Ապուրին կամ համեմունքին ինչուան էն

եաքի կաթիլը դդալին մէջ լեցընելը, և կամ հացով սրբելը՝ շատ անվայելուչ բան է :

Հաւկիթը պէտք չէ սուր ծայրէն կտարել . ուտելէն վերջն ալ՝ պէտք չէ կեղևն ամբողջ թողուլ . հապա դանակով կամ ացուկ մը դարնելու և կտտրելու է : — Վայելուչ բան չէ ապուրին և ուրիշ ջրոտ կերակուրներու մէջ հաց բրդել . նոյնպէս գաւաթի մէջ հաց կամ ուրիշ բան թաթխելէն զգուշանալու է :

Պտուղը որ կեղևեր բերան պիտի տանիս, դանակը պէտք չէ ձեռք բռնես :

Կերած պտղիդ կուտերը, նա և ոսկր կամ փուշ՝ բերնէդ երկու մատովդ բռնած դուրս հանէ . չըլլայ թէ ձեռքիդ կամ պնակիդ մէջ թքնելով դուրս թափես :

Նայէ որ ապուր ուտելու ատեն ջուր չխմես . հապա քանի մը տեսակ կերակրէ վերջը : — Ըմպելիքը շարունակաբար խմէ, և ոչ թէ կաթիլ կաթիլ . գաւաթը ձեռքդ մի խօսիր :

Նայէ որ շնամանիս այն որկրամուկներուն որոնք սեղանի վրայ թէ պտուղ ըլլայ թէ անուշեղէն՝ կառնեն գրպաններուն մէջ կը լեցընեն . ուրիշ բան է թէ որ կոշնատէրը մասնաւոր կերպով մը ստիպէ ընտանեաց տանելու . պղտի բան մը կրնաս առնել :

Տեղ կայ որ սովորութիւն եղած է սեղանի վրայ երգ երգել . և այսպիսի սլարազայի մէջ ինչպէս պախարակելի է որ ձայն ու

նեցողը դո՛հ չջանայ ընել հրաւիրեալքը մանաւանդ թէ որ աղաչողը տանտէրն ըլլայ, այնպէս ալ մէկալ կողմանէ անվայել է վախկոտ մը երդելու բռնադատելը :

Սեղանի ատեն չվայլեր ամենևին սեղանէն ելլել, բայց եթէ անակնկալ դիպուածի մը պատճառաւ :

Տանտիրոջը կամ տանտիկնոջը կը վայլէ որ սեղանէն ելլելու նշանը տայ. այն ատենը ամէն հրաւիրեալք մէկէն կելլեն և ուրիշ խուց մը կերթան խաճվէ խմելու : Բայց ընտանեկան սեղաններու կրնայ խաճվէն սեղանի վրայ խմուիլ :

Վայելչութիւնը կը պահանջէ որ հրաւիրեալը սեղանէն ետե դեռ ժամուան մը չափ ալ կենայ. իսկ թէ որ խմանայ որ տանտիրոջը նեղութիւն չէ, աւելի կենալը լաւագոյն կըլլայ :

Սեղանէն ետե քանի որ հրաւիրեալք առնն են, պէտք է երբեմն զովացուցիչ ըմպելիք հանել :

Սեղանէն ետե ութ օրուան միջոցին մէջ օլէտք է որ հրաւիրեալք հրաւիրողին այցելութեան երթան, և նոյն օրուան դուարձութեանցը և սեղանին կարգաւորութեան յիշատակութիւնն ընեն :

ԳԼՈՒԽ Զ .

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՈՒՅՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա . Համախմբութիւն . — Այցելութեան , վարմունքի և կենսակցութեան վրայօք ինչ որ ըսինք , համախմբութեան վայելչութիւնն ալ նոյնը կը պահանջէ . ուստի նոր ըսելիք մը դրեթէ չկայ :

Համախմբութեան սենեակն որ մէկը մըտնէ , ուր տասը հողիէ եւել մարդ ըլլայ , բաւական է բոլորը մէկէն բարեւել , բայց նախ տանտիրոջմէն սկսելու է :

Որչափ որ պատուաւոր ըլլայ ետքի եկողը , պէտք չէ անոր պատճառաւ խօսքը կտրել : Պէտք է առջի բերանը նայի թէ ո՞վ կայ ով չկայ , և անկէց ետե խօսքի խառնուի . բայց միշտ զգուշանալու է այնպիսի կերպ վրան չերևցընել՝ որ ինք միայն խօսիլ կուզէ :

Թէ որ խօսակցութիւնն ընդհանուր ու մեծ բանի մը վրայ չըլլայ , այն ատենը կրնայ մէկը իր քովիններուն հետ խօսակցիլ , որով խումբ խումբ բաժնուի խօսակցութիւնը : Նայելու է որ երրորդի հետ խօսելու համար՝ չըլլայ թէ քովինիդ առջևը ծոխու ծածկես զինքը :

Զգուշալի է առանձնական բանի վրայ

բարձր ճայնով չընել խօսակցութիւնը , և այնպիսի ծածուկ կերպերով չխօսիլ որ ինքն և որու որ կըսէ՝ այն միայն հասկընայ : Նոյնպէս օտար լեզուով խօսիլն ալ անվայել է :

Չըլլայ որ սկսած խօսակցութիւնը չլմընցած՝ յանկարծ ընկերութիւնը թողուս երթաս . հապա կեցիր որ խօսակցութիւնը լմննայ , և որու հետ որ կը խօսիս՝ բարևէ և այնպէս գնա :

Ս. յսպիսի համախմբութեանց մէջ , ուր խումբ խումբ բաժնուած է ընկերութիւնը , սովորութիւն չէ մէկը մէկալը բարևել , և կամ տանտէրը , և անանկ երթալ . հապա մինակ զանոնք որոնց հետ որ մարդ խօսակցութիւն կընէ :

Բ. Խօսող . — Արպէս զի բնութիւնը քիչ մըն ալ դբօսնու , և միշտ դբադանայ մտադրելով շտկարանայ , զուարճութեան խաղերը հնարուած են : Բայց այս ըսելով չենք արդարացընել ան վատանուն տեղուանքը՝ ուր որ կը տիրէ մոլութիւնը վատահամբաւ ընելու երևելի ազգատոհմներ և անարժան կարօտութեան մէջ ձգելու : Հապա մեր խօսքն այն ընտանեկան և անմեղ խաղերուն համար է , որ ոչինչ բանով մը կը խաղցուին , կամ աւելի լաւ բացատրենք , ուր զուարճութեան պարծանքը խաղին յաղթելը միայն կըլլայ , չէ թէ վաստակը :

Նախ համախմբութեանց մէջ պէտք չէ որ նոյն տնէն երկու հոգի մէկտեղ խաղան , հապա հրաւիրեալ անձինքներէն առնեն :

Խաղի ալ որ նստին, ընկերները զուխ
ծռելով մէկզմէկ բարենն:

Առանց ուրիշի նախատինք ընելու կըր-
նայ մարդ իրեն խաղի ընկեր ընտրել, բայց
լաւագոյն է վիճակով հանելը:

Երիտասարդ մը որ տարեց մարդու քով
նստեր է՝ պէտք է իրեն օգնէ, թղթերը
ժողովէ, և այլն:

Թէ որ խաղին մէջ վիճաբանութիւն մը
ըլլայ, չըլլայ թէ յամառութեամբ պնդես,
հապա հանդարտութեամբ խաղէն դուրս
եղողներուն վիճաբանութեան պատճառը
պատմես, և ինչ որ ըսեն դո՛հ ըլլաս:

Թէ որ դուն ալ դուրս կեցած ուրիշնե-
րուն խաղալը կը դիտես, չըլլայ թէ խաղ-
ցողներուն մէկուն կողմէն ըլլաս ու մէկա-
լին հակառակ. ևս առաւել պէտք չէ մէ-
կուն կողմանէ փաստ բռնել մէկալին դէմ,
որով բոլորովին խաղին զուարճութիւնը կը
կորսուի:

Ոմանք սովորութիւն ունին որ երկայն
կը մտածեն խաղին մէջ, կամ թէ որ զըժ-
բախտութիւն հանդիպի՝ ոտուրնին դետին
կամ ձեռուրնին ուժով սեղանատախտա-
կին կը զարնեն, կամ թէ կը համարին որ
մէկը քովը գալով իրենց զժբախտութիւն կը
բերէ, և դեռ ուրիշ շատ կերպ բաներ որ ան-
վայել է բարեկիրթ մարդու:

Խաղալու ատեն պէտք է համարձակ և
անկեղծութեամբ խաղալ, չէ թէ խարդախ
կերպեր բանեցընել, ու դիտել ծածուկ ու-

րիչի թղթերը : Նոյնպէս խաղալու ատեն
պէտք չէ խօսակցութիւն ընել ուրիշի հետ ,
ապա թէ ոչ՝ ընկերացը ձանձրալի կըլլայ :

Լաւ համարմունք չտար իր վրան , ով որ
խաղի մը երբոր յաղթէ՝ չափազանց ուրա-
խութիւն ցուցընէ , և թէ որ յաղթուի՝ տըխ-
րութեան նշան երևցընէ , վասն զի մարդ
հաստատ միտքը պիտի դնէ թէ խաղը
միայն դուարձութեան համար է :

Մէկն երբոր խաղը շահի՝ չըլլայ որ թո-
ղու՝ մինչև որ չիմանայ թէ ընկերն ալ կու-
զէ վերջացընել : Իսկ թէ որ կորսնցընե-
լու ըլլայ մէկը , կրնայ խաղէն ելլել , միայն
թէ դաշնադրութիւն մըն ալ թէ որ ըրած
է , առանց սրտնեղութիւն ցուցընելու պէտք
է վճարել և անանկ ելլել : Չըլլայ որ խաղը
կորսնցընողին բերնէն տրտնջման խօսք մը
ելլէ . ընդհակառակն՝ թէ որ կրնայ՝ պէտք
է իր գծբախտութեանը վրայ կատակ մըն
ալ ընէ , որով ցուցընէ թէ իրաւցընէ խա-
ղին վախճանը դիտէ , և տղայամիտ չէ :

Թէ որ յաղթողն ալ խաղալը վերջացը-
նէ , կորսնցընողը պէտք չէ դայն թողու եր-
թայ , հապա պէտք է կենայ և հետը խօ-
սակցութիւն ընէ . բայց ոչ երբէք անոր
խաղին մէջի բարեբախտութեանը վրայ ըլ-
լայ խօսքը , բայց եթէ դուարթ կերպով թէ
որ խօսքին յարմար դայ : Միով բանիւ՝ ա-
մենեին վրան նեղսրտութիւն մը պիտի չե-
րևցընէ մարդ խաղին համար :

Նոյնպէս պէտք չէ երկայն ատեն խաղի

նստիլ. վասն զի այն ատենը խաղը դբօսանք
չլլար, հապա աշխատցընող դբաղանք մը :

Գ. Երաժշտական դբօսանք. — Կրնայ հան-
դիպիլ որ ուրախալի դիպուածի մը պատ-
ճառաւ, կամ երևելի երաժշտի մը մէկուն
տունը դանուելուն առթով, վայելչու-
թիւնը պահանջէ որ տանտէրն իր բարե-
կամացը իրիկուն մը երաժշտական դբօսանք
տայ : Երկու կամ իրեք օր առաջ կը վայլէ
որ տոմսակաւ հրաւիրէ իր բարեկամները,
և տոմսակին մէջ ծանուցեալ պիտի ըլլայ
թէ հանդէսին ժամը քանիին է : Աս տոմ-
սակը տպած ալ կրնայ ըլլալ, կամ ըստ այժ-
մու սովորութեան՝ վիսնագրած, և երբորդ
դէմքով, ինչպէս որ վերջէն պիտի ըսենք :

Հրաւիրեալք հարկ չկայ տոմսակին պա-
տասխան տան, բայց պիտի ջանան որո-
շեալ ժամանակին դանուելու :

Աւելորդ է յիշեցընել թէ այն սրահն ուր
երաժշտութիւնը պիտի ըլլայ՝ լաւ լուսաւո-
րուած պիտի ըլլայ, և թէ որ ցուրտ է եղա-
նակը՝ բաւական տաքցուցած : Եւ սրահէն
դուրս ծառայք կեցած, որ հրաւիրելոց վը-
րայի զգեստը առնեն՝ մաքուր տեղ մը պա-
հեն, և ետքը իւրաքանչիւրոց տան :

Մէկուն երգելու և երաժշտական գործի
մը դարնուելու ստեն՝ չվայլեր քթին տակէն
մամռալ, կամ ոտքով և կամ ձեռքով ժա-
մանակ դարնել, կամ ծիծաղելի կերպով
դուխը կամ մարմինը շարժել. այլ պէտք

է լուսութեամբ մտիկ ընել, որ զուարճութեան տեղ ուրիշի ձանձրութիւն չըլլայ :

Այսպիսի ընկերութեան մէջ չհաւնելու բան մը թէ որ հանդիպի, պէտք չէ ամենին դրսուանց ցուցընել . իսկ գովելի բանն ալ անոյշ կերպով և չափաւորութեամբ պէտք է գովել :

Ար վայլէ որ այնպիսի ընկերութեան մէջ երաժիշտներուն հանդէսը ժամանակ տան տէրը գովացուցիչ բան մը հանէ հրաւիրելոց :

Քանի մը օրէն ետև պէտք է հրաւիրողին այցելութեան երթալ, և շնորհակալ ըլլալ . և զվսաւոր խօսակցութիւնը պիտի ըլլայ նոյն օրուան դրօսանաց զուարճութեանը վրայօք . կրնայ նաև խօսք բանալ սրահին զեղեցիկ զարդուցը, և ընտիր ընկերութեանը վրայ :

Գ. Շրջագայութիւն . — Սեղանէ վերջը կամ ուրիշ դրօսանաց ատեն՝ պատշաճ է շրջագայութեան ելլել զուարճալի ծառատունկ տեղ մը կամ ջրի մը քով :

Նայելու է շրջագայութեան ընկերն այն կողմը բռնել՝ որն որ անոր հաճոյ է, և ըզգուշանալու է որ անոր ախորժակին և փափաքանացը դէմ բան չըլլուի : Թէ որ նստարաններ գտուին այն տեղուանքը, քիչ մը շրջագայութենէ ետև պէտք է ընկերները նստելու հրամցընել . թէ որ յանձն չառնուն, պէտք չէ բռնադատել :

Շրջադայութեան պարտիզին մէջ թէ որ
պէտք ըլլայ աթոռ բերել, աւելի երիտա-
սարդք պիտի վազեն բերեն: — Թէ որ աթո-
ռին տէրը դայ ստակ ուղելու, ընկերու-
թեան մէջէն մէկուն կը վայլէ վճարել պէտք
եղածը:

Թէ որ քալած տեղդ օտարին պարտէզն է,
մեծ անքաղաքավարութիւն է ծաղիկ կամ
պտուղ փրցընել:

Հասարակաց շրջադայութեան տեղ զգու-
շանալու է օտարաց առջև աչքի զարնելու
բան չընել. ինչպէս՝ վազվրդել, բարձր ձայ-
նով խօսիլ, ցաթկուտել, և այլն:

Հասարակաց տեղուանք անտարբեր բա-
ներու վրայ պիտի խօսուի որ ուրիշի կաս-
կած չտայ: Պէտք չէ ուրիշը լրտեսել թէ
ինչ կընէ կամ որո՞ւ հետ կը խօսի, և ոչ
խօսակցութիւննին մտիկ ընել:

Մէկուն հետ որ մարդ քալելու ըլլայ՝ պէտք
չէ ամեննին անկէ առաջ անցնիլ. և թէ որ
ինքը կենայ բան մը քննելու, պէտք է մէ-
կալն ալ կենայ նոյն բանը քննէ:

Սոսանձնական պարտիզի մէջ թէ որ ըն-
կերութիւնը շատուոր է, անվայել չէ քանի
մը հողի դատ խումբ եղած քալելը:

Ե. Տեսարանք. — Տեսարանք հասարա-
կաց տեղուանք ըլլալով՝ պէտք չէ կարծել
թէ ալ դիտելու վայելչութիւններ չկան:
— Նախ պէտք չէ այնպիսի տեղ արտորա-
նօք երթալով՝ առանց նայելու ծանր քալող-

ներուն հետ դարնուիլ : Չվայլեր ուրիշը հըր-
մշտը կելով առաջ անցնիլ , մանաւանդ ու-
րիշի լաւ տեղն առնել : Հապա ընդհակա-
ռակն՝ թէ որ մէկը տեսնէ որ պատուաւոր
կամ տարւոր մարդ մը հանդիստ չէ և իր
տեղն աւելի հանդիստ , պէտք է հրաւիրել
և իր տեղն անոր տալ . թէպէտև հրաւի-
րեալը շնորհակալութեամբ պէտք չէ ըն-
դունի :

Այսպիսի տեսարաններու ատեն պէտք
չէ կռնակը տեսարանին կողմը դարձընել
և անանկ կենալ , և շատ զգուշանալու ևս
որ անհանդարտ շարժումներով կամ ան-
դադար բարձրաձայն խօսակցութեամբ ու-
րիշի նեղութիւն չտաս . դարձեալ ուրիշին
աչքին արդելք ըլլալու չես :

Թէ որ մէկը ընկերութեամբ այսպիսի
տեսարաններ երթայ , հանդչելու միջոց որ
դայ , պէտք է ընկերաց անոյշ կերպով մը
հարցընէ թէ կախորժին արդեօք բերան
թրջելու բան մը հրամայընել իրենց :

ՔԼՈՒԽ Է.

Ճ Ե Մ Բ Ո Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ճամբայ չելած պէտք է մնաք բարովի երթալ ամէն ծանօթից, ու հարցընել թէ յանձնարարութիւն մը ունին թէ չէ: Սակայն դիմացինը մեծապէս պէտք է զգուշանայ՝ որ չըլլայ թէ նեղութիւն տայ, մանաւանդ կապոցներ յանձնելով, բայց եթէ իր շատ ընտանին ըլլայ, կամ խարելիքը մեծ մարդու մը համար ըլլայ: Բայց ՚ի ասկէ՝ ընտանի ճամբորդին պէտք է ազաչել որ առողջութիւնը ստէպ գրէ:

Երբ կառքով ճամբորդութիւն ընել հանդիպի, ինչպէս շատ կըլլայ հիւսա, դիտելու է այն մարդիկները որ կառքին դիմացի կողմը չեն կրնար նստիլ և ետ ետ երթալ. բարեկիրթ երիտասարդի մը կը վայլէ որ եթէ ինքը կռնակի կողմը նստած է, իր տեղը անոր տայ, մանաւանդ թէ որ ծեր կամ պատուաւոր մը ըլլայ: Բայց դիմացինն ալ պէտք չէ պահանջելու կերպ մը ցուցընէ, և որչափ կրնայ՝ ջանայ որ իր հանդստեանը համար ուրիշի նեղութիւն չտայ:

Ճամբու մէջ պիտի նայի մարդ որ իր հանդիսար փնտրուելու համար գուրիշը անհանգիստ չընէ: Աստի տմարդութիւն է թէ

որ քովիններուն չհարցուցած՝ կառքին պատահանը բանայ կամ գոցէ, ծուխ քաշէ :

Թէ որ թեթև բան մը ուտես, ինչպէս անուշեղէն, պտուղ, և այլն, պէտք է քովիններուդ ալ հրամայընես, որոնք սովորաբար շնորհակալ պիտի ըլլան ու չառնեն :

Չգուշանալու է որ քիչ ատենուան ընկերաց հետ՝ հին ծանօթից պէս չխօսուի :

Ճամբէն որ մէկը դառնայ, պէտք է մէկէն ունեցած յանձնարարութիւններն անձամբ տանի կամ խաւրէ : Եւ մէկէն պէտք է բարի տեսանքի այցելութիւն ընել :

Իսկ որուն որ յանձնարարութիւն մը կը բերուի, պէտք է շնորհակալութեան համար այցելութեան երթայ բերողին :

Թէ որ ձիով ճամբորդութիւն ընէ մէկը քանի մը հոգւոյ հետ մէկտեղ, միշտ աջ կողմը պէտք է պատուաւորին տայ, և ինքը քիչ մը ետևով երթայ. ուրիշ բան է թէ որ ձիուն մէկը խրտան ըլլայ :

Թէ որ մէկը հովին կողմը ըլլայ, անանկ որ իր հանած փոշին ընկերոջը վրայ երթայ, պէտք է որ դիրքը փոխէ :

Թէ որ ծառերուն մէջէն կանցնին, ու ճիւղերը ճիւղորներուն կը հասնին, առջևէն զայցողը պիտի զգուշանայ որ չըլլայ թէ ճիւղերը ետևի եկողին զարնուի :

Թէ որ ջրէ կամ ցելսէ հարկ ըլլայ անցնիլ, մարդավարութիւն է որ մարդ ջանայ իր ընկերոջմէն քիչ մը առաջ անցնիլ. բայց թէ որ ուշանայ ու չկարենայ առաջուց եր-

Թալ, պէտք է թողուլ որ ընկերը նախ անց-
նի, և ինքն ետևէն. որպէս զի ձիուն կո-
խուածքէն ցաթկած ջուրը կամ ցեխը չաղ-
տուտէ ընկերը:

ԳԼՈՒԽ Ը.

ՀԻՒՐ ԸՆԿԵՆՆԱԿՆԵՐ

Սովորութիւն է որ երբ մէկն ուրիշի մը
տուն պիտի երթայ՝ քանի մը օր անցընե-
լու համար, առաջ թղթով խմացընէ երթա-
լու օրն ու ժամանակը:

Հիւրընկալը թուղթն որ առնէ, մէկէն
պէտք է այն խուցն որ հիւրը պիտի կենայ՝
զարդարէ, անանկ որ հարկաւոր բաներէ
բան մը պակաս չըլլայ:

Հիւրը զալու օրն ալ ինքն երթայ կամ
մարդ մը խաւրէ որ երթայ հիւրն ընդունի:
Թէ որ ինքն ընդ առաջ չերթայ, պէտք է
տանը դռնէն զինքն ընդունի ուրախ երե-
սով, հարցմունքներ ընէ առողջութեանը
վրայօք, ճամբուն վրայօք, և աղաչէ որ իր
տանը պէս կենայ:

Պէտք չէ երկայն ատեն հիւրը մինակ թո-
ղուլ որ չկարծէ թէ տանտիրոջը ծանրու-
թիւն կըլլայ: Նայելու է միշտ զքօսեցընել,
ու զուարճալի կամ տեսնելու տեղուանք
կայ նէ՝ տանիլ զինքը պտըտցընել:

Հիւրը պիտի ցուցընէ թէ շատ հանգիստ

է, ու շատ շնորհակալ ըլլայ այնպիսի սիրալիր հիւրընկալութեան: Բայց ջանայ որ երկայն կենալով ճանճրութիւն չտայ:

Իսկ հիւրընկալը երբոր իմանայ թէ իր հիւրը կուզէ երթալ, պէտք է բռնադատէ զինքն որ դեռ չիութայ: Բայց թէ հարկ է որ երթայ, պէտք է պիտոյքը հոգալ և թեթեանոյշ քաներ ալ տալ հետը, և աղաչել որ ուրիշ անդամ ալ հրամէ, և շուտով:

Իսկ հիւրն երթալու ատեն պէտք է տանը ծառայից առատ բարի ձեռք տայ, և տանախրոջմէն շնորհակալ ըլլայ. և տեղն հասածին պէս՝ մէկէն շնորհակալութեան թուղթ դրէ:

ԳԼՈՒԽ Թ.

Ն Ե Մ Ա Կ Ա Ք Բ ՈՒ Թ Ի Ի Ն

Այցելութենէ և կենակցութենէ ետև ընկերութեան կապը կը պահուի թղթով և տոմսակով: Եւ չէ թէ միայն հեռաւորութեան պատճառաւ, հասկա ուրիշ շատ առթից մէջ ալ թղթադրութիւնը հարկաւոր է:

Հոս նամակադրութեան քանի մը վայելչութեանցը վրայօք միայն կը խօսինք. ապա թէ ոչ՝ մասնաւոր մտադրութիւն պէտք է թղթադրութեան ոճին, և թէ ինչպէս պէտք է դրել մտերմութեան, շնորհաւորու-

թեան, ցաւակցութեան, խրատի, անմեղադրութեան, յանձնարարութեան, հրափրանաց, արտնջման, յանդիմանութեան, և այլ ասոնց նման թղթերը, որոնց վրայ չիյնար մեզի խօսիլ:

Ս. Նամակին և երբիև վայելչոքիւնեկերը:
— Նամակին ներքին վայելչութիւնն է խօսքերուն մեծարու և ընտանի ոճը, բանեցուցած մարդավարական կերպերը, յարմար պատուոյ անունը տալը, ստորագրութեան աւելի կամ պակաս խոնարհական բառերը և թղթին երեսագիրը կամ հասցէն:

Նոր տարւոյ և անուան կամ ծննդեանը շնորհաւորութեան թուղթը պէտք է առաջ դրել, անանկ որ կամ նոյն օրը կամ առջի օրը ձեռքը հասնի. բայց չըլլայ թէ այնչափ առաջ դրուի այս տեսակ թուղթը, որ ընդունողը տօնէն առաջ ալ պատասխան կարենայ տալ:

Մէկն որ թուղթ մը առնէ՝ պէտք է մէկէն պատասխանը դրէ, և շատ ամօթալի բան է ծուլութեամբ առած թղթին պատասխան չգրելը:

Պէտք է լաւ կրթութիւն ընել, որ ինչ և իցէ ժամանակ կարենայ մէկը շնորհքով նամակ մը դրել՝ առանց շղագիրն առաջուց չինելու. որպէս զի դանդաղելու պատճառ չըլլայ:

Թէ որ խօսակցութեան մէջ պէտք է մտադրութիւն ընել՝ որ գործածած բառերը յա-

տուկ, ընտիր և վայելուչ ըլլան, աւելի մը-
տադրութիւն պէտք է թղթին մէջ որ ոճը
պարզ, որոշ, շնորհքով և ըսելիքին յար-
մար ըլլայ :

Մեծի մը գրելու ատեն պէտք է թղթին
ոճը ծանր ըլլայ. բայց մտերիմ բարեկամի
մը հետ մարդ կրնայ թեթև ու կատակի ոճ
բռնել :

Նամակի մէջ պիտի չըլլայ կրկնել նոյն
խօսքը, ոչ խօսքէն հեռանալ, ու նորէն
դառնալ, ոչ բառ մտնալ, արել կամ
քերել. մտածութիւնը պարզ և ոճը դիւրա-
հասկընալի ըլլայ : Անանկ որ թուղթը եթէ
ընտանիի մը գրուած չէ ու մէջը այսպիսի
պակասութիւն մը կայ, պէտք է նորէն գրել :

Ու և իցէ գրուածքի մէջ լեզուի կանոն-
ներու դէմ, ուղղագրութեան դէմ սխալ-
մունքը շատ պախարակելի է, ևս առաւել
նամակի և տումակի մէջ : Սրբագրութիւնն
ալ մեծ ամօթ է, վասն զի գրողին տղիտու-
թիւնը յայտնի կընէ :

Թէ որ թղթի մը մէջ պէտք ըլլայ այլևայլ
նիւթի վրայ գրել, պէտք է աւելի հարկա-
ւորն առաջ գրել. որպէս զի թէ որ թուղթն
առնողը յանկարծ արգելք մը ունենայ ու
թուղթը բոլոր չկարենայ կարդալ, հարկա-
ւոր գործողութիւնը դիտնայ կատարել. և
թէ միանգամայն այն հարկաւոր նիւթին
պատճառաւ՝ արգելքը դադրելէն վերջը,
մնացածը կարդալ չուշացընել :

Ինչ պատուոյ անուն որ մեծ մարդու մը

Թղթին սկիզբը գրուի, ջանալու է որ շատ անգամ ալ Թղթին մէջը նոյն պատուանու- նը յիշուի :

Եպիսկոպոսի Թուղթ որ գրուի՝ պատուա- նուն պիտի գործածուի Աստուածարեւոյ Հայ- րապետ, կամ Գերապայծառ Տէր . և Հրա- մանքոյ ըսելու տեղ՝ Չեր Սրբուքիւնք¹ :

Իշխանի Թուղթ որ գրուի՝ պիտի ըսուի Վեհագն կամ Մեծապատիւ Իշխան . և Հրա- մանքոյ ըսելու տեղը՝ Չեր կամ Հրամանքիոյ Մեծուքիւնք :

Այս պատուոյ անունը միշտ նամակին առջի տողէն վեր դնելու է . թէ որ ընտանի ըլլայ՝ առջի տողին սկիզբը կրնայ գրուիլ . բայց շատ մտերիմ որ ըլլայ ու Թուղթը շատ ընտանեկան, մէկ երկու բառէն ետե ալ կրը- նայ գրուիլ :

Քանի մը մարդավարական կերպեր ալ դնենք վարժութեան համար :

Չեքս հասառ Հրամանքեւերկոնոյ րուշոքը՝ որով հաճեցաք զիս պատուել : — Կարդացի րուշոքե որ Հրամանքեւիոյ շնորհք ըրեր էիք ինձի գրե- լու, կամ որով զիս ուզեր էիք պատուել, կամ աշխատեր էիք ինձի գրելու . և այլն :

Տոմսակը կրնայ մարդ երրորդ գէմքով գրել՝ ասանկ . Պարու Բագարատիկ շատ սի- րով բարե կրնէ Պարու Տիգրանը, ու կադաչե որ . . . որով շատ երաստագետ կըլլայ կամ շնորհակալ կըլլայ իր անձեւեւեւեւեւ ծառայե . . . :

¹ Ոմանք Գերապայծառուիւն կըսեն, որ մեր լեզուէն և ազգային սովորութենէն օտար է :

Պատուաւոր կամ պաշտօնակալ մարդու
դրուած թղթին մէջ ուրիշի ամենեին պէտք
չէ բարե գրել :

Մեծ մարդկանց թղթին ստորագրութիւ-
նը վայելուչ կըլլայ՝ որ այսպիսի կերպով
մը ըլլայ . խորիւն մեծարանօք եւ կամ մեամ,
Ստորագրուող Հայրասպետ, Սրբոքեան Զե-
րուս — Սննստիտեարն ծառայ: Սնկեղծ բարե-
կամոքեանք եւ, Սիրելիդ իւն, — Մտերիւմ քո :

Յետագրութիւնը ընտանեկան թղթերուն
մէջ միայն թոյլ տուեալ է . բայց թէ որ
մասնաւոր մեծարանաց և սիրոյ բացատ-
րութիւններ ըլլան, տեղ կայ որ չէ թէ մի-
այն թոյլ տուեալ է, հապա նաև դովելի :

Զվայլեր որ թղթի մը վրայ երկու հոգի
գրեն, մէկը մէկ երեսը, մէկալը մէկալ երե-
սը . բայց եթէ թղթագրութիւնը ընտանեաց
մէջ ըլլայ :

Սովորութիւն է երեսագրին վրայ Ան-
նախագրութեամբ միայն բացատրել հաս-
ցէն, և Աղա, Պարտե կամ Տիկիև, բառը
երկու անդամ կրկնել, մէկ մը առջի, մէկ
մըն ալ երկրորդ տողը, ու երկրորդին ետևէն
դնել անունը, և վարով ալ՝ թուղթը խաւ-
րած քաղքին անունը :

Երեսագրին մէջ թէ որ մէկը պատուոյ
անուն ունի՝ պէտք է յիշել, և թէ որ շատ
պատուոյ անուն ունի, աւելի մեծը միայն
յիշել, և ետքն երկու անդամ և այլև, և այլև
դնել :

Բ. Նամակին արտաքին վայելչութեան
ըր. — Նամակին արտաքին նիւթական
վայելչութիւնն է թղթին մեծութիւնը, լուսանցքը և վերնադրէն մինչև նամակն սկըսելու տողին միջոցը, ետքի տողին ու ստորագրութեան մէջի պարապ միջոցը, թուղթը ծալլելու ու կնքելու կերպը:

Վարի աստիճանի մարդու գործք է կոչաթղթի մը վրայ նամակ գրել. բայց նոյնպէս ծիծաղական բան է գործողութեան մը համար գրած թուղթը՝ ազնիւ օսկեղօծ ու դարդարուն թղթի վրայ գրել: Վերի աստիճանի մարդիկ դարդարուն թուղթ կրնան գործածել, բայց անոնց ալ պարզութիւնը դուրսի է:

Մարդավարութեան դէմ է շիտակ թղթի մը վրայ նամակ կամ տոմսակ գրել. ջանալու է որ միշտ երկու կտորած ըլլայ թուղթը կամ տոմսակը: Ուրիշ բան է՝ թէ որ ընտանեաց մէջ ծախքի զգուշութեան համար ըլլայ:

Սղաշանաց զիրը կամ աղերսագիրը պէտք է ամբողջ թերթի մը վրայ գրել ու կէսը պէտք է լուսանցք թողուլ ու մնացած կէսին վրայ գրել:

Վերնադրէն վեր որչափ աւելի լուսանցք թողուի՝ այնչափ աւելի մեծարանաց նշան է: Իսկ բուն գրուածքը պէտք է առջի երեսին կէսէն վար սկսիլ. իսկ երկրորդ երեսը վերնադրէն տող մը միայն վար ըլլայ բաւական է:

Նայելու է որ դրուածքին լմնցած տո-
ղէն մինչև ստորագրութիւնը , և ստորա-
գրութենէն ալ վար՝ քիչ մը պարապ տեղ
մնայ . և թէ որ շատ նեղ պիտի իյնայ , ա-
ւելի լաւ կըլլայ առաջուրնէ նայիլ և երկու
իրեր տող մէկալ երեսը անցընել : — Ընտա-
նեկան թղթոց սովորութիւն է հիմակ ամե-
նեին լուսանցք շթողուլ :

Նոր նիւթ մը սկսելու որ ըլլայ մարդ
թղթին մէջ , լաւ է նոր տողով սկսիլ . կամ
ըստ հիմակուան սովորութեան , առանց նոր
տողի՝ վերջակիտէն ետև կարճ դիծ մը քա-
շել ու նոր նիւթը առաջ տանիլ որ առջի-
նէն բաժնուի :

Թղթին մէջ թուահամարը կը գործա-
ծուի թղթին թուականը կամ գումար մը
գրելու համար . իսկ մարդկանց , կամ օ-
րուան , շաբթու , և այլն , թիւերը՝ պէտք է
բաց գրել :

Տոմսակին մէջ սովորութիւն է շաբթուն
օրը միայն նշանակել . Երկուշաբթի , և այլն .
երբեմն լաւ կըլլայ օրուան ժամն ալ գնել :

Փոյթ ունենալու է որ թղթին թուականը
չմոռցուի , վասն զի շատ անգամ թղթին ի-
մաստներն անով կը հասկըցուին : — Մեծ
մարդու որ ըլլայ թուղթը , թուականը պէտք
է թղթին ետքը գրել : Հաւասարի մը կրնայ
մարդ սկիզբն ալ գրել . իսկ վաճառակա-
նութեան թղթոց մէջ միշտ պէտք է սկիզ-
բը գնել :

Անվայել է որ նամակներուն պահարանը

տպած կամ գրուած թղթէ մը շինուած
ըլլայ :

Մեծ մարդու թուղթը պէտք է պահարան
ունենայ , և մեծարանաց նշան է կնքամո-
մով կնքելը , չէ թէ նշխարքով : Արլլայ եր-
բեմն նշխարք գործածել , մանաւանդ ընտա-
նեկան թղթերուն . բայց խոշոր նշխարք գոր-
ծածելը բարեկրթութեան նշան չէ : — Գիտ-
նալու է որ սուղի ատեն սև կնքամոմ պէտք
է գործածել :

Մեծ մարդու թուղթը չվայլեր հին ան-
սովոր փորուածքներով կնքել , հասպա կամ
իր կնքովը կամ անուանը սկզբնատառովը :

Սովորաբար մէկ կնքով միայն կը կնքուի
թուղթը . իսկ թէ որ երկայնաձև ըլլայ ,
պէտք է երկու կնքով կնքել :

Թէ որ թուղթը բարեկամիդ յանձնես որ
տանի , բարակ մարդավարութիւն կըլլայ
չկնքած տալ իրեն . բայց ինքն ալ իր կող-
մանէ՝ կամ ձեռքովը գրողին առջին պիտի
կնքէ և կամ աղաչէ գրողին կնքելու . և թէ
որ յանձն առնու , շատ ամարդութիւն կըլ-
լայ մէկ կնքէն աւելի կնքելը : Այս առաւել
չվայլեր՝ ծաւրին քովերէն մէջի գրուածքը
չերկնալու համար՝ ծաւրին եղերքներն ալ
մէկմէկու կպցընել . ուրիշ բան է թէ որ
թուղթը ծառայի կամ թղթատարի յանձ-
նուի :

Յանձնարարական թուղթը կնքել չըլլար .
վասն զի տանողը պէտք է զիտնայ թէ իր
վրայ ինչ գրած է . կամ թէ նախ պէտք է

տանողին կարգալ և ետքը կնքել . որպէս
դի ինքն ալ իմանայ որ ամէն ջանք ըրեր ես
իրեն հաճոյական ծառայութիւն մը ընելու :

Թղթատարի ծախքին կողմանէ ալ դի-
տելու զգուշութիւններ կան : — Մասնա-
ւոր դիտողութիւններէն դատ' ընդհանուր
այս նայելու է որ երբ վերի աստիճանի
մարդ մը հասարակ մարդու գրելու ըլլայ ,
ծախքը վճարէ , մանաւանդ թէ որ թուղթը
թանձր ըլլայ : Նոյնպէս թէ որ թուղթը
միայն գրողին գործողութեանցը համար ըլ-
լայ , պէտք է միշտ ծախքը վճարել . ինչ-
պէս' թէ որ երևելի մարդէ մը մէկ շնորհք
մը պիտի խնդրես : Բայց բարեկամաց , ծա-
նօթից գրած թղթիդ ծախքը վճարելը՝ շատ
անգամ անվայելուչ կիյնայ :

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆԱՅ ԱՅԼԵՒԱՅԼ
ԴԻՊՈՒԱԾՆԵՐՈՒ ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

ԲԱՐԵՐՅՐՈՒԹԻՒՆ

Չենք կրնար բարերարութեան փոյթը մարդավարութենէն դատել. և աւելորդ է զուրցելը թէ երբոր մարդավարէն շնորհք մը խնդրեն, երեսին վրայ զուարթ ժպիտ մը պիտի երևցընէ ու աչուրներուն վրայ խնդիրքը կատարելու փոյթ: Վասն զի ուրիշի տմարդութեամբ ծառայութիւն ընելը, ծառայութիւն ընել չէ: — Եւ թէ որ հարկ ըլլայ չէ ըսել՝ այնպիսի անուշութեամբ, այնպիսի փափկութեամբ ըսէ, և անանկ սրտաշարժ ցաւ մը ցուցընէ, որ ղխմացինն իրեն երախտադէտ ըլլայ, թէպէտև խնդիրքին չհասնի:

Այսպիսի բարերարութիւն՝ իրաւ մարդավարութենէ առաջ կու գայ, բայց մեզք որ աշխարհքիս մէջ շատ քիչ կը գտնուին մարդիկ որ այսպիսի կերպ ունենան:

Թէ որ մէկուն բարերարութեամբ ծառայութիւն մը ընես, զգոյշ կեցիր չըլլայ թէ կերպով մը փոխարէն ծառայութիւն մըն ալ իրմէն պահանջես : Նոյնպէս՝ թէ որ ծառայութիւն մը կրնաս ընել մէկուն, պէտք է շատ ծանրէն քաշես. չթողուս որ երկայն աղաչանքներ ընէ, կամ մեծ մեծ շնորհակալութիւններ. ապա թէ ոչ շնորհքը ընդունողին ատելի կըլլաս, և երախտադիտութիւնը անտանելի բեռ մը կը դարձրնես :

Ուստի թէ որ մէկը քեզմէ ծառայութիւն մը խնդրէ, շնորհքով պատասխան տուր. Ըսէք ինձի ինչ կրհնա՞իք. շատ ոչ քախ կըլլամ՝ քե որ հրամանքներնոշ օգոռտ մը կարեւոր ընել : Բայց թէ որ արդելք մը դիտես ընելու ծառայութեանդ, այս պատասխանը տուր. Ծատ կը ցաշիմ, որոյնեան այս արդելքները կը տեսնեմ կոր. ևրկայնմտոքիւն ըրէք կաղաչեմ, միևչև որ աղէկ մը տեսնեմ բանը : Ու ետքը մտածէ, արդեօք կըրնամ ան արդելքներուն դէմը առնել թէ չէ : — Չըլլայ որ անոնց նմանիս որ ամէն խօսքի մէջ մեծ մեծ կը խոստանան ուրիշի բարիք ընել, և ետքն երբոր դիպուածը դայ՝ ամէն բան կը մոռնան :

Մէկն որ բախտի մը հանդիպած ըլլայ, պէտք է իրեն ուրախակից ըլլաս : Իսկ թէ որ իրեն վիճակին վրայ բան մը խօսի, ուրախական եղեր է կամ տխրական, պիտի մտադրութիւն ընես, և ուրախութիւն կամ կարեկցութիւն ցուցրնես իրեն :

Մէկուն ծառայութիւն որ պիտի ընես , նայիս որ շուտ ընես . այնպիսի առթի մէջ դանդաղութենէ գէշ բան չկայ . վասն զի շնորհքը խնդրողը կը տարակուսի թէ ի՞նչ ընէ . արդեօք ուրիշի մը երթայ աղաչէ , թէ քեզի նորէն աղաչանք ընէ , կամ թէ դանդաղութենէդ առաջ եկած նեղութեանը համբերէ : — Իսկ թէ զիպուած մը հանդիպի՝ որ այն պատճառաւ խոստումներդ չկարենաս կատարել , մէկէն իմացուր և թողութիւն խնդրէ , և խոստացիր որ ուրիշ անգամ սիրով կը ծառայես :

Թէ որ քու ունեցած բաներէդ մէկուն բան մը պէտք ըլլայ , ու քու ձեռքիդ հարկաւոր գործածելու բանը չէ , մէկէն խնդրէ որ ընդունի . և որչափ չէ ըսէ դիմացինդ , դու զինքը բռնադատէ որ առնէ , և ուղածին չափ ալ քովը պահէ : — Իսկ առնողն ալ շուտով և մաքուր անմեաս ետ դարձընէ . զոր օրինակ՝ թէ որ հովանեակ է դիմացինէն փոխ առածը , անմիջապէս և կամ երկրորդ օրը պէտք է ետ խաւրել . թէ որ զգեստեղէն ըլլայ՝ մանաւանդ ձերմակեղէն , պէտք է մաքրել , լուալ տալ և անանկ ետ խրկել :

Զարգեղէն բան մը որ մէկուն փոխ տաս , պէտք չէ ամենևին ետ ուզել , մինչև որ ինքը չխաւրէ . և խաւրելէն վերջն երկայնատեն պիտի չգործածես որ դիմացինին ցուցընես թէ չէիր սպասեր առնելու , և թէ օտարները չիմանան թէ փոխ տուեր էիր :

Գիրք պէտք չէ փոխ խնդրել . վասն զի

չատ անգամ զրբին տիրոջը վնասներ հան-
դիպած են : Իսկ թէ որ զրբին տէրն իր կող-
մանէն բռնադատէ, այն ատենն ալ շատ զը-
ժուարութեամբ պէտք է առնել . և որչափ
կարելի է շուտով ետ դարձընելու է և նայե-
լու է որ մարտը պահուի : Իսկ թէ որ յան-
կարծ բան մը պատահի, պէտք է ճարն ը-
նել :

ԳԼՈՒԽ Բ .

ԸՆԾԱԿ

Ընծայ տալու շատ տեսակ առիթներ կան,
որ չեն պակսիր : Նախ՝ այլևայլ դիպուածի
ընծայ կը տրուի ծնողաց ու բարեկամաց .
զոր օրինակ՝ երբոր տեղ մը հասնիս՝ ուսկից
երկայն ատեն հեռացեր էիր, կամ երբ մտե-
րիմ ծանօթներէդ մէկը ճամբորդութեան
ելլէ, կամ դուն ետ դառնալու ըլլաս .
ծննդեան կամ անուան օրը, նոր տարիին,
և այլն : Այսպիսի պատճառներով մարդ իր
բարերարաց երախտադիտութիւնը կրնայ
ցուցընել, կամ նաև կարօտ մարդու ալ
քաղաքավար կերպով օգնել :

Երկրորդ՝ մեծ մարդավարութիւն կը սե-
պուի, թէ որ մէկը իր երկրին աղուոր պը-
տուղներէն իր մտերմացը խաւրէ, կամ թէ
ըրած որսէն ընծայ տայ :

Երրորդ՝ անկի շնորհալի ընծայ կըլլայ մէկուն իր հանձարին պատուը . ինչպէս՝ ուրուագրութիւն մը , կամ գեղեցկագրութիւն մը , կամ մանաւանդ իր շարագրած զիրքը , և այլն :

Պէտք է մարդ տալու ընծային լաւ ընտրութիւն ընէ , որ գեղեցիկ ճաշակով ըլլայ չէ թէ հասարակ բան մը . ու չըլլայ թէ սովորական գործածելու բան ըլլայ , որով կարծուի թէ ընծան առնողին օգնութիւն մը ընել կուզես : Նոյնպէս նայելու է որ ընծան առնողին հաճոյական և իր տարիքին և վիճակին յարմար ըլլայ : Ուստի մեծամեծայ թռչնեղէն պէտք է խրկել և որսական կամ աղածոյ բաներ . ուսումնականի՝ զիրք , որ թէ որ անկազմ և թղթերը կտրած ըլլայ , շատ տմարդի բան կըլլայ . գեղարուեստի սէր ունեցողաց՝ պատկեր կամ երաժշտութիւն , և այլն :

Նայելու է որ ընծան անակնկալ ըլլայ և ուրախութիւն պատճառէ . ուստի պէտք է ծածուկ պատրաստել և ուրախութեամբ մը ընծայել : Ընծան տալէն ու շնորհակալութենէ ետև՝ ալ ամենեին ընծայի վրայ խօսք պէտք չէ ընել , ևս առաւել պէտք չէ ցուցընել թէ ծանրադին բան է : Մանաւանդ թէ ընդհակառակն՝ թէ որ ընծան առնողը ծանրադին բան ըլլալն իմացընէ , ու շատ դոհ ըլլալ ցուցընէ , պէտք է պատասխան տալ թէ անոր դին սուտոյն ընդունողին բարի սիրտն է :

Որչափ անախորժ կամ ծիծաղելի բան
ըլլայ ընծան, մարդավարութիւնը կը պա-
հանջէ որ առնողը մեծ ուրախութեամբ
չնորհակալ ըլլայ: Եւ թէ դիպուածով ըն-
ծային վրայ խօսք ըլլայ, ցուցընել թէ որ-
չափ ընդունելի և օգտակար եղած է տուած
ընծան: Երկայն ատենէն ետև խօսքն աւել-
լի ախորժելի կըլլայ. որովհետև կը ցուցը-
նէ թէ ընծան խնամքով պահուած է:

Երբեմն շնորհակալութեան հետ մարդ
կրնայ խօսք մը ըսել ընծային սղութեանը
վրայ, բայց միշտ չափաւորութիւն պէտք է:

Ոչ երբէք մէկուն տուած ընծան կրնայ
ուրիշին ընծայ արուիլ. կամ շատ շատ՝ այն-
պիսի փոփոխութիւն մը ընելու է վրան որ
չխմացուի թէ նոյնն է:

Մէկու մը որ մարդ ուզենայ ընծայ ընել,
կրնայ անոր դակըններուն ալ ընել. մանա-
ւանդ նոր տարին՝ անուշեղէնով:

Ընծայ բերող ծառային միշտ պէտք է
բերած ընծային համեմատ ձեռածիր մը տալ:

Ընծայ մը խաւրողին փոխարէն ուզենաս
դուն ալ ընծայ խաւրել, պէտք չէ մէկէն՝ի
մէկ ընել, որ առուտուր չերևայ, առած վա-
ճառքիդ դինը վճարելով. հապա թողլու է
որ վրան ատեն անցնի. ուրիշ բան է թէ որ
ընտանեաց մէջ պարտիդի բերք է, կամ
ուրիշ տնական ճարտարութիւն մը, որ ա-
տեն անցնելով կարուի:

ԳԼՈՒԽ Գ.

ԽՈՐՀՈՒՐԴ.

Խորհուրդ տալը շատ աղէկ բաներէն մէկն է աշխարհքիս մէջ, բայց շատ անգամ ծանր կու գայ լսողին . ուստի մինչև որ մէկը խորհուրդ չհարցընէ՝ ամենևին պէտք չէ խորհուրդ տալ, բայց եթէ խիտ ընտանիներէդ մէկն ըլլայ :

Սակայն երբեմն կրնայ հանդիպիլ որ պէտք ըլլայ սիրոյ կամ բարերարութեան պատճառաւ խորհուրդ տալ մէկուն : Այնպիսի ատեն պէտք է շատ փոյթ և շատ ըզզուշութիւն գործածել՝ որ չըլլայ թէ դիմացինին, թէ ճանչուոր ըլլայ և թէ բարեկամ, մեծութիւն մը, իշխանութիւն մը երևցընես, որով դժարը բերես, և ամենևին օգուտ մը չընէ խորհուրդդ կամ խրատդ, թէ և խելացի ըլլայ : Անոր համար որչափ կարելի է՝ բացատրութիւնները կակուղ կերպով ըսէ . զոր օրինակ՝ կարելի է կը սխալիմ . . : Անտարակոչս ևս չէի կրնար ընել այն քակել որ կը փափաքէի որ հրաւճակեցիդ ընէիք :

Թէ որ խօսքիդ դէմն առնէ, ամենևին պէտք չէ ըսել . է՛հ, խօսք չէք հասկընար . հապա թէ՛ թողոչքիս ըրէք, ըստ չբացատրեցի :

Գ Լ Ո Ւ Թ Գ .

ԹՊՐՏՈՒԹԻՒՆ

Տղուն կնքահայրը պէտք է ամիսներով առաջ պատրաստել: — Թէ որ արեւնա-
կից ազգական մը այս նեղութիւնը չուզէ
յանձն առնուլ, պէտք է որ հաւանական
պատճառ մը ցուցընէ:

Կնքահայրը այս պաշտօնը յանձն առնե-
լէն ետեւ, պիտի նայի որ պաշտօնը լաւ կա-
տարէ իր և տղուն վիճակին յարմար:

Տղուն մօրը պէտք է ընծայ մը տալ, որ
սովորաբար շաքարեղէն կըլլայ. նոյնպէս
տղուն առջի հաղուստն իրեն կիյնայ շինել:
Տղան թէ որ ստնտու ալ ունենայ կամ հո-
գացող աղախին մը, անոր ալ պէտք է ըն-
ծայ մը տալ:

Եկեղեցւոյ ժամկոչներուն և ծառայողնե-
րուն և աղքատաց ձեռուրնին բան մը դնե-
լու է. իսկ մկրտող քահանային տալիքը
կը վայլէ ոսկի ստակով տալ՝ շաքարեղէնի
տուփի մը մէջ, կամ քանի մը ճերմակ թաշ-
կինակի մէջ դրած:

Մկրտութենէ դառնալէն ետեւ շատ տեղ
սովորութիւն կայ ուրախութիւն մը ընել,
և այն ատենը կնքահօրը և կնքամօրը առա-
ջին պատիւը տալու է:

Կնքահայրն ու կնքամայրն ալ պէտք են իրենց սանին ընծայ տան, և վրան միշտ հոգ ունենան :

ԳԼՈՒԽ Ե .

ԱՌ ԹՇՈՒՅՈՒՍ ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Մարդավարութիւնն որ մեր ամենայն զգացմունքները կարգի մէջ կը պահէ, պէտք է որ զթութեան ալ վայելչութիւնները կարգի դնէ : Եւ այս զգացմունքը աստուածաշտութենէ ալ առաջ կու գայ և ընկերութեան կապն ամուր կը պահէ :

Ս. Հիւանդութիւն . — Թէ որ ծանօթներէդ մէկը հիւանդանայ, պէտք է ամէն օր, կամ երկու օրը մէյմը մարդ խաւրել հարցընել ինչպէս ըլլալը : Իսկ թէ որ ծանր վտանգի մէջ ըլլայ, կը վայլէ որ օրն երկու անգամ ալ մարդ խաւրուի :

Հարցընելու ալ է թէ հիւանդն արդեօք մարդ կընդունի, որպէս զի ինքն ալ անծանր կարենայ երթալ զինքը տեսնելու :

Հիւանդին թէ որ մէկն այցելութեան երթայ, պէտք է կարճ կենայ, քիչ ու ցած խօսի, և զգուշութեամբ վարուի : Հիւանդին հետ երկու խօսք մը ցած ձայնով դուրցելէն ետև՝ սրտին ցաւը ցուցընելով, պէտք է ընտանեացը կամ ծառայողին հետ խօսիլ :

Թօսակցութիւնը միայն հիւանդին վրայ
պիտի ըլլայ, և հարցընել թէ բժիշկն ո՞վ
է, ի՞նչ դեղ կընէ. ու թէ որ օգուտ մը տես-
նուի, պէտք է յոյս ցուցընել: Թէ որ հի-
ւանդին ծառայողը քու առողջութեանդ ու
գործոցդ վրայ բան մը հարցընէ, համառօտ
սխառասխան մը պէտք է տալ ու քաշուիլ:

Թէ որ հիւանդը հիւանդութենէ նոր խա-
լըսած ըլլայ, և թեթև տկարութիւն մը ու-
նենայ, այն ատենը պէտք է անոր քաշած-
ներուն վրայ հարցմունքներ ընել, իրեն ցա-
ւակից ըլլալ, համբերութիւնը գովել, ու ա-
ռողջանալէն ետև ի՞նչ պիտի ընէ՝ անոր վը-
րայ խօսիլ բուրո՞վին:

Սմենեին պէտք չէ ըսել թէ կերպարան-
քը շատ փոխուեր է, հիւանդութիւնն եր-
կայն պիտի երթայ, և այլն. մարդ ասով
անդգայ սրտի և կարճ խելքի նշան կու տայ:

Հիւանդութիւնը թէ որ ծանրանայ, ա-
մենեին պէտք չէ հիւանդութեանը վրայ խօ-
սիլ, և ոչ անոնց վրայ որոնք նոյն հիւան-
դութեան տէր են:

Թէ որ հիւանդութեան ծանրութիւնը
խիստ յայտնի չէ, ու հիւանդը ուզէ անոր
վրայ խօսիլ, պէտք է յայտնապէս ըսել թէ
չէի անդրադարձած որ այնչափ ծանր ե-
ղած ըլլայ հիւանդութիւնը:

Թէ որ հիւանդը դանդաատիլ սկսի, ջանա
մխիթարել դիները. բայց չըլլայ որ խօսքը
փոխես՝ մինչև որ ինքը չփոխէ. վասն զի
կրնայ կասկածիլ՝ որ իր նեղութիւնը քեզի
ձանձրութիւն կու տայ:

Թէ որ հիւանդն աչքի լուսի պակասութիւն
ունենայ, նայէ որ առանց իրեն իմացընե-
լու պէտք եղածն իրեն մօտեցընես: Թէ որ
խլութիւն ունենայ, առանց այլանդակ կեր-
պով պոռալու իրեն հետ խօսիս:

Արնայ մէկն ըսել թէ շատ նեղութեան
բաներ են. բայց միթէ մարդ հաճելի ըլլա-
լու համար ասկէ աւելի նեղութիւն չէ քա-
շած ուրիշ անդամ:

Բ. Չախորդորիւն. — Չախորդութեամբ
հարստութենէ ընկածներուն հետ ալ ընկե-
րութեան մէջ շատ զգուշութեամբ պէտք է
վարուիլ: — Թէ որ սեղանի հրաւիրեն դքեղ
այնպիսիք, կամ ընծայ մը տան, պէտք չէ
շատ հրաժարիլ անոնց ծախք ընել շտալու
մտքով, որովհետեւ կրնան առնուիլ, ուստի
պէտք է ընդունիլ, բայց նայելու է ծածուկ
կերպով մը ըրած ծախքին կրկինը հատու-
ցանելու:

Ս. մենեին պէտք չէ իրենց թշուառ վիճա-
կին վրայ խօսք բանաս. իսկ թէ որ իրենք
խօսք բանան, պէտք է մտադիր ըլլաս դը-
թութեամբ, և ցուցընես թէ որչափ կարե-
կից ես. և քու բարեկամութիւնդ աւելի այն
միջոցին իրենց ցուցընես, թէ որ ձեռքէդ
բան մը կու գայ. այն ատենը կըլլաս այր
աղնուական և աղնուասիրտ:

Գ. Թուարուն. — Մէկուն ընտանիքներէն
երբ մէկը մեռնի, պէտք է թղթով իմաց

տալ անոնց որ հետը բարեկամութիւն կամ
կապակցութիւն ունեցեր են : Մովորութիւն
է որ այն թղթին մէջը իմացընեն թէ թա-
ղումը կամ մեռելապաշտօնը երբ կըլլայ :

Այս լուրս որ առնէ մէկը՝ պէտք է ժամա-
նակին մեռելին տունը երթայ և մեռելին
հետ եկեղեցին : Թէ որ մեռելի ազգական
կամ բարեկամ և մերձաւորը չէ, կրնայ մին-
չև գերեզմաննոց երթալէն ազատ ըլլալ : —
Գացած ժամանակը պէտք չէ ամենևին դար-
գարուած երթայ :

Թէ որ մինչև գերեզմաննոց երթըցուի ,
պէտք է ազգականաց ետևէն երթալ՝ առանց
խօսելու , ու ծանր և լուրջ կերպով մը :

Ազգականք ալ պիտի նային որ որչափ
կարելի է՝ դրսէն չցուցընեն իրենց սրտին
ցարը , և ոչ ալ բոլորովին անտարբեր կե-
նան :

Թէ որ մէկը թաղման չերթայ , պէտք է
հրաւիրողին այցելութիւն ընէ . իսկ թէ որ
երթայ , հրաւիրողք իրեն այցելութեան
պէտք է դան :

ԳԼՈՒԽ Զ.

ՍՈՒԳ

Ծնողաց, պապու, եղբօր, քրոջ համար մեծ սուգ կը բռնուի, որ տարի մը կը քչէ բոլոր սևեր հաղնելով:

Հօրեղբօր, հօրաքեռ, քեռւոյ, մօրաքեռ համար սուգը ամիս մը միայն բաւական է:

Խաթուններն առջի քառասուն օրը միայն ժամ երթալու համար տնէն կրնան դուրս ելլել. չվայլեր ամենևին որ այցելութեան երթան, կամ դբօսանաց տեղուանք ընկերութեանց մէջ երևան:

Քառասուն օրէն ետև քիչ քիչ փոխարէն այցելութիւնները կրնան ընել. այլ ոչ երբէք հասարակաց դբօսանքի տեղուանք երթալ. տան մէջ ալ երդելէն պէտք է ըզդուչանան:

Սովորաբար սուգի ատեն ուրիշի թաղման երթալ չըլլար. նոյնպէս նաև մեռելապաշտօնի:

Բայց սուգի ժամանակէ դուրս ծանօթից թաղմանը կամ մեռելապաշտօնին չերթալը շատ տմարդութիւն է:

Սղաւորաց այցելութիւնը ցաւակցութեան այցելութիւն կըսուի, և այնպիսի այցելութեանց ատեն՝ որչափ որ կարելի է՝ ծանրու-

Թեամբ խօսելու է. և որուն որ այցելութեան
դնացեր ես՝ չվայլեր որ առողջութիւնը հար-
ցընես : Նոյնպէս ծիծաղ շարժող բաներու
վրայ պէտք չէ խօսիլ : Այցելուին ալ իր
վրայ խօսիլը զգուշալի է :

Երբոր սգաւորը հեռու գտնուի, ցաւա-
կցութիւնը թղթով պիտի ըլլայ : Սգաւորն ալ
քիչ ատենէն պէտք է պատասխանը տայ :

Համառօտութեամբ մինչև հոս մարդա-
վարութեան կանոններն որ բացատրեցինք,
այս էր մեր դիտաւորութիւնը որ մեր երի-
տասարդաց հասկըցընենք թէ որչափ որ
մարդկային ընկերութիւնը կը քաղցրանայ
այս կանոններով, այնչափ ալ անոր քաղ-
ցրութիւնը պահելու համար հարկաւոր են :

Միայն կը փափաքինք այս ալ միտք ձգել
թէ ամենայն վայելչութեան կանոնները
չկրցանք այս համառօտ գրուածքիս մէջ բո-
ւանդակել, վասն զի ամենայն դիպուածոց
և ամենայն կենսակցութեան հանդամանացը
պէտք է անմեկնելի ընկեր ըլլայ վայելչու-
թիւնը, և այս ամէն բան գրչի տակ ձգելու
համար հատորներ չեն բաւեր :

Գոհ կըլլանք թէ որ մեր բարեկիրթ երի-
տասարդք այս գրուածքովս առիթ առնեն
իրենց ամենայն ըրածին մտադիր ըլլալու,
որ շնորհքով ընեն, հաստատ դնելով մըտ-
քերնին թէ Մարդավարութիւնը ուրիշի հա-
ճելի ըլլալու համար ջանք մըն է, անանկ
որ՝ ով որ զմեզ տեսնէ և մեր հետք վա-

րուի, մեզմէ զոհ ըլլայ. մեծաւորք՝ մեր մեծարանքը զովեն, հաւասարք՝ մեր անունը, և մեզմէ վարինները՝ մեր քաղցրաբարոյութիւնը :

Ո՛վ պատանիք ու երիտասարդք, ձեզի համար է աւելի այս դրուածքին օգուտը. ասով թէ զձեզ և թէ մեր Հայրենիքը և մեր Ազգը օտարաց ալ սիրելի կընէք, և արդեամբ կը ցուցընէք թէ Հայ ազգը ոչ երբէք խորթացեր է քաղաքական ազգաց բարեկիրթ մարդավարութենէն :



Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.



Faint, illegible text at the bottom of the page, possibly bleed-through from the reverse side.

Յ Ա Ն Կ

Յառաջաբան	5
Նախագիտելիք	7
ՄԱՍՆ Ա. Մարդկային սարսուռց վայելչու- թիւնները	11
ԳԼ. Ա. Կրօնական վայելչութիւնները	—
ա. Կրօնից պատկառանքը եկեղեցւոյ մէջ	—
բ. Կրօնից պատկառանքը ընկերու- թեան մէջ	16
ԳԼ. Բ. Ընտանեկան վայելչութիւնները	18
ա. Ընտանիք	—
բ. Ամուսինք	20
գ. Ծնողք	21
դ. Որդիք	22
ե. Ազգականք	24
զ. Տէր և ծառայ	25
ԳԼ. Գ. Անձնական վայելչութիւնները	27
ԳԼ. Դ. Այլևայլ վիճակներու պատշաճ վայելչութիւնները	31
ա. Եկեղեցականք	—
բ. Ուսումնականք	33
գ. Բժիշկք և Հիւանդք	36
դ. Առուտուր	37
ե. Գրագիրք	42
ՄԱՍՆ Բ. Ընկերական կենաց վայելչու- թիւնները	43

ԳԼ. Ա.	Կենցաղավարութեան ընդհանուր զգուշութիւնները	43
ԳԼ. Բ.	Խօսակցութեան արտաքին վայելչութիւնները	47
Թ.	Շարժուածք	48
Ք.	Այլևայլ զգուշութիւններ	49
Գ.	Արտաբերութիւն	50
Դ.	Լեզուի յստակ գործածութիւն	52
Ե.	Վայելուչ բացատրութիւն	—
Զ.	Մտիկ ընելու վայելուչ կերպը	54
Է.	Ընդհատութիւն	56
Ը.	Կենակցութեան բնական յարմարութիւնը	59
ԳԼ. Գ.	Խօսակցութեան իմաստին վերաբերեալ վայելչութիւնները	62
Թ.	Հասարակաց սովորութիւններ	—
Ք.	Հարցմունք. — Միջանկեալ խօսքեր	66
Գ.	Արտուղութիւն	67
Դ.	Ենթադրութիւն. — Բաղդատութիւն	68
Ե.	Անպատշաճութիւն	69
Զ.	Զուարճախօսութիւն. — Առակաբանութիւն	70
Է.	Պատմութիւն	73
Ը.	Վէճ	75
Թ.	Վկայութիւն	76
Ճ.	Գովեստ. — Գանդատ	77
ԳԼ. Դ.	Կենակցութեանց մէջ ընդհանուր զգուշութիւնները	79
ՄԱՍՆ Գ.	Քաղաքական կենաց վայելչութիւնները	86
ԳԼ. Ա.	Հագուստ	—
ԳԼ. Բ.	Ճամբայ քալել	89
ԳԼ. Գ.	Այցելութիւն	95

ԳԼ. Դ.	Այցելուաց ընդունելութիւն	104
ԳԼ. Ե.	Հացկերոյթ	107
ԳԼ. Զ.	Ընկերական զուարճութիւնք	117
	ա. Համախմբութիւն	—
	բ. Խաղ	118
	գ. Երաժշտական դրասանք	121
	դ. Շրջագայութիւն	122
	ե. Տեսարանք	123
ԳԼ. Է.	Ճամբորդութիւն	125
ԳԼ. Ը.	Հիւրընկալութիւն	127
ԳԼ. Թ.	Նամակագրութիւն	128
	ա. Նամակին ներքին վայելչութիւն	
	ներք	129
	բ. Նամակին արտաքին վայելչութիւնները	133
ՄԱՍՆ Դ.	Քաղաքական կենաց այլևայլ գիւղումներու վայելչութիւնները	136
ԳԼ. Ն.	Բարեբարութիւն	—
ԳԼ. Բ.	Ընծայ	140
ԳԼ. Գ.	Խորհուրդ	143
ԳԼ. Դ.	Մկրտութիւն	144
ԳԼ. Ե.	Առ թշուառս մարդավարութիւն	145
	ա. Հիւանդութիւն	—
	բ. Չախորդութիւն	147
	գ. Թաղումն	—
ԳԼ. Զ.	Սուգ	149



104
 105
 117
 —
 118
 121
 122
 123
 124
 125
 126
 127
 128
 129
 130
 131
 132
 133
 134
 135
 136
 137
 138
 139
 140
 141
 142
 143
 144
 145
 146
 147
 148
 149
 150



10m

Handwritten scribbles or marks in the upper right corner.

